

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂԱԾ
ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՐԱԿՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Գիտական խմբագրությամբ՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ,
արդարադատության գեներալ-լեյտենանտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ վաստակավոր իրավաբան Վ.Գ. Շահինյանի

Երևան
«Տիգրան Մեծ»
2015

**Երաշխավորվել է տպագրության
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի կողմից**

Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, – 128 էջ:

Աշխատությունում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի նյութերի, ինչպես նաև տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են պաշտոնատար անձանց կողմից կատարվող՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցանքների քրեաիրավական որակման և քննության մեթոդիկայի տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք արդիական հիմնախնդիրներ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում նախաքննություն իրականացնող մարմինների, դատական-դատախազական համակարգերի, իրավապահ այլ մարմինների աշխատողների, փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների և քրեական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

Գիտական խմբագիր՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ վաստակավոր իրավաբան
Վ.Գ. Շահինյան

Հեղինակներ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր
Ս.Վ. Առաքելյան

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի պետի տեղակալ
Տ.Ա. Խաչիկյան

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Ս. Ամիրյան

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի գլխավոր մասնագետ
Տ.Ս. Ղազարյան

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Ս. Նահապետյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ 1. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂԴՎԱԾ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ	11
1.1. Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը	11
1.2. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը	23
1.3. Պաշտոնեական լիազորություններն անցնելը	40
1.4. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը	56
1.5. Կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը	61
1.5.1. Կաշառք ստանալը	62
1.5.2. Կաշառք տալը	81
1.5.3. Կաշառքի միջնորդությունը	85
1.6. Պաշտոնեական կեղծիքը	90
1.7. Պաշտոնեական անփութությունը	98
ԳԼՈՒԽ 2. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂԴՎԱԾ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ	102
2.1. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագոր- ծությունների քննության մեթոդիկայի ընդհանուր բնութագիրը	102
2.2. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները	108
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	122
ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ	124

ՆԵՐՎՃՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 5-ի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար հատուկ լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Այդ իմաստով պետական ծառայողները պարտավոր են անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և նորմատիվ-իրավական այլ ակտերի պահանջները, հստակ ու ճշգրիտ կատարել իրենց ծառայողական պարտականությունները: Սակայն իրական կյանքում օրենսդրական վերոհիշյալ պահանջները երբեմն խախտվում են: Լինում են դեպքեր, երբ պաշտոնատար անձինք ոչ միայն հստակորեն չեն կատարում իրենց պարտականությունները, այլև դրանով վնաս են պատճառում տարբեր ոլորտներում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին: Դրանց շարքում են նաև պետական ծառայության շահերի և նորմալ կենսագործունեության դեմ ուղղված հանցավոր ոտնձգությունները:

Պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքներն էական վնաս են հասցնում սոցիալական կարևորագույն այնպիսի արժեքների, ինչպիսիք են պետության տնտեսությունը, պետական ապարատի և արդարադատության համակարգի նորմալ կենսագործունեությունը, պետական իշխանության հեղինակությունը և այլն: Պաշտոնեական լիազորությունների չարաշահումը կամ անցումը, կաշառակերությունը, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը, պաշտոնեական կեղծիքը, որոնք պետական ծառայության դեմ ուղղված առավել վտանգավոր և տարածված հանցագործություններն են, հանդիսանում են նաև հանցավոր կոռուպցիայի հիմնական դրսևորումներից: Բացի այդ, պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները պայմաններ են ստեղծում այլ ծանր հանցագործությունների համար, խախտում են սոցիալական

արդարությունը, նպաստում են անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը:

Քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի գործում, անկասկած, առաջնային նշանակություն ունեն դրանց կանխմանն ուղղված սոցիալ-տնտեսական, կազմակերպակառավարչական, քաղաքական, իրավական, գաղափարախոսական բնույթի միջոցառումները: Այս առումով չի կարելի թերագնահատել նաև քրեաիրավական պայքարի նշանակությունը: Բանն այն է, որ քննարկվող հանցավոր դրսևորումների բացահայտման արդյունավետությունը, հանցագործների նկատմամբ արդարացի պատիժ նշանակելը, քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը և քրեական ու քրեադատավարական օրենսդրության կատարելագործումն այն կարևորագույն պայմաններն են, որոնք կարող են նպաստել ընդհանրապես հանցագործությունների (այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքների) դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները հիմնականում նախատեսված են բաժին 11-ի («Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունները») գլուխներ 29-ում («Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները») և 31-ում («Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները»): Նշված անձանց կողմից կատարվող հանցավոր որոշ արարքներ նախատեսված են նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ բաժիններում և գլուխներում: Այսպես, օրինակ՝ քր. օր.-ի հոդված 179-ի 2-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է սահմանում պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կամ վատնում կատարելու համար, հոդված 187-ով («Օրինական ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը») նախատեսված հանցագործության սուբյեկտն է համապատասխան պաշտոնատար անձը և այլն: Նշված բոլոր արարքները, ըստ էության, պաշտոնեական լիազորությունները

չարաշահելու կամ անցնելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք նախատեսված են հատուկ հանցակազմերով և ոսնծգում են հասարակական տարբեր հարաբերությունների դեմ:

Պետական իշխանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության շահերի դեմ ուղղված առավել տարածված և վտանգավոր հանցագործություններից են պաշտոնեական լիազորությունների չարաշահումը և անցումը, կաշառք ստանալը, տալն ու կաշառքի միջնորդությունը: Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ վերջին տասը տարիներին նկատվում է դրանց թվի կայուն աճ: Բացի այդ, նշված հանցավոր արարքների տեսակարար կշիռը պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների՝ կառուցվածքում բավականին մեծ է:

Մասնավորապես, 2005-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված պետական իշխանության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերի մասնաբաժինը կազմում է 3,45%, իսկ կաշառք ստանալու, տալու և կաշառքի միջնորդության դեպքերինը՝ 2,62%: Ընդ որում, 2014 թվականին, 2013-ի համեմատ, պետական իշխանության դեմ ուղղված բոլոր հանցագործությունները նվազել են շուրջ 22%-ով, մինչդեռ, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերն ավելացել են 47,6%-ով (տե՛ս աղյուսակ 1-ը): Տվյալ հանգամանքը, թերևս, նախ և առաջ պայմանավորված է ոչ թե պաշտոնեական առավել տարածված վերոհիշյալ հանցագործությունների թվի կտրուկ աճով, այլ դրանց բացահայտմանը, հաշվառմանն ու գրանցմանն ուղղված աշխատանքների բարելավմամբ:

* ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունները (բաժին 11) ներառում են՝ 1) սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 28), 2) պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 29), 3) կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 30) և 4) արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 31):

Աղյուսակ 1

Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների շարժընթացը ՀՀ-ում 2005-2014 թթ.

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
Պետ. իշխ. դեմ ուղղված բոլոր հանցագործությ-րը	1914	1773	1412	1601	1834	2223	2128	1754	2836	2212	19687
Պաշտ. լիազորությունները չարաշահելը և անցնելը	32	25	26	69	79	62	56	75	103	152	679
Կաշառք ստանալը, տալը և կաշառքի միջնորդությունը	8	22	7	63	56	60	70	84	80	66	516

Ինչ վերաբերում է կաշառք ստանալու, տալու և կաշառքի միջնորդության դեպքերի վերջին տարիների միտումներին, ապա պետք է նշել, որ դրանք 2014 թվականին, 2013-ի համեմատ, նվազել են 17,5%-ով: Ընդ որում, փորձագիտական տարբեր գնահատականներով, քննարկվող հանցագործությունների լատենտայնության (պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած մասի) մակարդակը բավականին բարձր է, ինչին նպաստում են մի շարք գործոններ: Բանն այն է, որ կաշառակերության գործընթացի բոլոր մասնակիցները (թե՛ ստացողը և թե՛ տվողն ու միջնորդը) ենթակա են քրեական պատասխանատվության և ձգտում են ամեն կերպ ապահովել իրենց գործողությունների գաղտնիությունը: Բացի այդ, տվյալ գործընթացի հետ կապված տեղեկատվության հրապարակումը կարող է նրանց համար ցանկալի արդյունքին հասնելու արգելք հանդիսանալ:

Այդ առումով վիճակն ավելի բարդացավ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 312-ում 2014թ. մայիսի 16-ին կատարված փոփոխության արդյունքում, որի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և

այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնում է քրեական հետապնդման մարմիններին և աջակցում հանցագործությունը բացահայտելուն: Ստացվում է, որ նոր իրավակարգավորմամբ, ի տարբերություն նախկինի, կաշառք տվող անձին քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմ նախատեսող դրույթը ենթարկվել է էական սահմանափակման, ինչը լրացուցիչ բարդություններ է առաջացնում կաշառակերության դեպքերի բացահայտման առումով: Գաղտնիք չէ, որ կաշառք ստանալու դեպքերը հիմնականում բացահայտվում են հենց կաշառք տվողների և քննչական մարմինների համագործակցության արդյունքում:

Հարկ է նշել նաև, որ հայաստանյան իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատական, դատախազական և քննչական մարմինների ներկայացուցիչները որոշակի բարդություններ են ունենում պաշտոնատար անձանց կողմից կատարվող հանցանքները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցակազմերով ճիշտ որակելու, դրանք միմյանցից և հարակից այլ հանցագործություններից սահմանազատելու, ապացուցողական համապատասխան բազան ձևավորելու և այն ճիշտ գնահատելու գործառնություններն իրականացնելիս: Բանն այն է, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքի շատ դրույթներ աչքի են ընկնում անհստակությամբ, տարատեսակ վիճելի հարցեր առաջացնելու հատկությամբ, ինչն էլ բարդություններ է ստեղծում քննարկվող հանցագործությունների վերաբերյալ գործերով արդյունավետ նախաքննություն իրականացնելու համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի գործում առանձնահատուկ դերակատարություն ունի Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդ-

ված 190-ի 6-րդ և 10-րդ մասերի, ինչպես նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, ինչպես նաև պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը կատարում են բացառապես Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննիչները:

Վերը նշված հանգամանքները վկայում են գիտամեթոդական սույն մեկնաբանությունների պատրաստման անհրաժեշտության և հրատապության մասին: Այդ առումով տվյալ աշխատության շրջանակներում նպատակ է դրվել պարզաբանելու պաշտոնատար անձանց կողմից կատարվող՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցանքների որակման և դրանց վերաբերյալ քրեական գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, ինչպես նաև մշակելու իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

*Հայաստանի Հանրապետության
հատուկ քննչական ծառայության պետ,
արդարադատության գեներալ-լեյտենանտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ վաստակավոր իրավաբան
Վահրամ Գագիկի Շահինյան*

ԳԼՈՒԽ 1.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ

1.1. Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը

Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործություններ են համարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գլուխ 29-ում նախատեսված հանցավոր այն արարքները, որոնց հանցակազմերի պարտադիր հատկանիշ է հատուկ սուբյեկտը՝ պաշտոնատար անձը: Ինչ վերաբերում է պաշտոնատար անձի հասկացությանը, ապա այն սահմանված է ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ի 3-րդ մասում, որի համաձայն, այդպիսին են համարվում այն անձինք, ովքեր՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իրականացնում են իշխանության ներկայացուցչի գործառույթներ,

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իրականացնում են կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ:

Իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք են համարվում իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ կարգադրիչ լիազորություններ ունեցող անձինք: Ընդ որում, իշխանության ներկայացուցիչ կարող են համարվել նաև այն անձինք, ովքեր իշխանության ներկայացուցչի գործառույթներ են իրականացնում *ժամանակավորապես* կամ *հատուկ լիազորությամբ*, երբ պաշտոնապես, օրենքով սահմանված կարգով ներգրավվում են հանցավորության դեմ պայքարին կամ վերահսկիչ գործունեության իրականացմանը և օժտվում են համապատասխան լիազորություններով:

Հայաստանի Հանրապետությունում իշխանության ներկայացուցիչներ են համարվում ՀՀ ազգային ժողովի պատգամավորները և կառավարության անդամները, բոլոր ատյանների դատարանների դատավորները, դատախազության, ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային, մաքսային և այլ մարմինների՝ համապատասխան լիազորություններով օժտված աշխատակիցները: Նշված ցանկը, բնականաբար, սպառնիչ չէ և այն դժվար է հստակ ու համընդգրկուն սահմանել:

Քննչական պրակտիկայում խնդրահարույց են նաև «մշտապես», «ժամանակավորապես» և «առանձին լիազորությամբ» եզրույթների բովանդակության հետ կապված հարցերը, որոնք սույն աշխատության շրջանակներում անհրաժեշտ է առանձին պարզաբանել՝ գործնական որոշակիություն ապահովելու համար:

Այսպես, *մշտական հիմունքներով իշխանության ներկայացուցի գործառույթներ իրականացնող է* համարվում այն պաշտոնատար անձը, ով պաշտոնավարում է օրենքով սահմանված կարգով և ժամկետների շրջանակներում: Այսինքն, այն դեպքում, երբ, թեկուզև, անձի պաշտոնավարումը իրականացվում է որոշակի ժամկետի ընթացքում, այնուհանդերձ այն համարվում է մշտական, քանզի հիմնված է պաշտոնավարման կայունության և տևականության վրա, և մինչև պաշտոնի դադարեցումը, ժամանակային առումով, առկա են պաշտոնավարման բավարար երաշխիքներ: Բացի այդ, պաշտոնատար անձի համար որոշակիորեն կանխատեսելի է իր պաշտոնավարման դադարեցման կոնկրետ ժամանակահատվածը: Օրինակ՝ թեպետ ՀՀ վարչապետը կարող է աշխատանքից ազատվել ՀՀ նախագահի հրամանագրով ցանկացած ժամանակ, այնուհանդերձ, նրա առաքելությունն իրականացվում է մշտական հիմունքներով, ինչը և նրա գործունեության կայունության երաշխիք է:

ժամանակավորապես իշխանության ներկայացուցի գործառույթներ իրականացնող է համարվում այն պաշտոնատար անձը, ով իր գործառույթներն իրականացնում է որոշակի ժամկետով (ժամանակավոր) ստեղծված կառույցի շրջանակներում:

Ժամանակավոր գործող պետք է համարել այն կառույցները, որոնք ստեղծվել են որոշակի դեպքերի, իրադարձությունների ուսումնասիրման, վերլուծության, գնահատման, հսկողության, վերահսկողության իրականացման համար: Ժամանակավոր պետք է համարել նաև մշտական հիմունքներով գործող մարմնի ներսում ժամկետային աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվող լիազորությունները: Վերոգրյալից բխում են հետևյալ երկու կարևոր դրույթները.

1) ժամանակավորապես գործող մարմինները ստեղծվում են սահմանափակ ժամանակատվածում կոնկրետ խնդիր լուծելու համար և կաշկանդված են այդ խնդրի լուծմամբ, իսկ մշտական հիմունքներով գործող մարմինները գործունեության ժամկետով սահմանափակված չեն և լուծում են մշտապես գոյություն ունեցող, օբյեկտիվորեն առկա հասարակական խնդիրներ,

2) «Ժամանակավոր» և «ժամանակավորապես» եզրույթները չեն նույնանում:

Ինչ վերաբերում է *առանձին լիազորությամբ օժտված իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող* պաշտոնատար անձին, ապա այդպիսին պետք է համարել, օրինակ՝ դեսպանորդին, կցորդին, հատուկ հանձնարարությամբ դեսպանին, Ազգային ժողովում Նախագահի ներկայացուցչին և այլն:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներ են այն անձինք, ում ծառայողական գործունեությունը կապված է մարդկանց կառավարման հետ: Այդ գործառույթները ներառում են՝ աշխատանքային կոլեկտիվի ղեկավարումը, համապատասխան կադրերի հավաքագրումը և բաշխումը, աշխատանքի կազմակերպումը, կարգապահության ապահովումը, խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառումը և այլն: Փաստորեն, յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայող (ներ) ունի, ղեկավարում է նրա (նց) գործունեությունը (օրինակ՝ նախարարության աշխատակազմի ղեկավարը, պետական կազմակերպության տնօրենը, վարչության, բաժնի,

բաժանմունքի, խմբի ղեկավարը և այլն), պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է համարվում հենց քննարկվող հիմքով:

Միաժամանակ նշված երկու հատկանիշները սերտորեն փոխկապակցված են: Տնօրինչական գործառույթի իրականացումը մշտապես ենթադրում է նաև կազմակերպական տարրեր: Այսինքն, հնարավոր չէ տնօրինել առանց կազմակերպելու: Մինչդեռ, կազմակերպումը միշտ չէ, որ ենթադրում է տնօրինման տարրի կենսագործում: Անձը կարող է իրականացնել սոսկ որևէ գործընթացի կազմակերպում առանց տնօրինելու որևէ գործընթացի իրավաստական շարժընթացը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներ են այն անձինք, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով (գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, իրացման կարգի սահմանում, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանում, գույքի, նյութական արժեքների, դրամական միջոցների ստացում և հանձնում և այլն): Այդպիսի լիազորություններով այս կամ այն չափով օժտված են տնտեսական, մատակարարման, ֆինանսական վարչությունների, բաժինների և այլ ստորաբաժանումների պետերը, նրանց տեղակալները և այլն:

Այլ կերպ ասած՝ համապատասխան անձանց վարչատնտեսական գործառույթներն ուղղակիորեն կապված են գույքային բնույթի բարիքների ստեղծման, փոխանցման, հանձնման, ընդունման, տնօրինման, կառավարման, դրանց շարժի ստուգման, դրա նկատմամբ հսկողության և նման այլ լիազորությունների հետ:¹

Հարկ է նշել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարելու կարևոր չափանիշ է նաև այն, որ տվյալ անձը պետք է օժտված լինի **իրավական**

¹ *Տե՛ս նաև՝ Бриллиантов А.В. К вопросу о понятии должностного лица // Российский следователь, 2001, № 6, էջ 31, Волженкин Б.В. Служебные преступления. М, 2000, էջ 113:*

նշանակություն ունեցող՝ իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Հետևաբար, քննարկվող հանցագործությունների սուբյեկտ կարող է համարվել այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթղթեր տրամադրել քաղաքացիներին և դրանով իսկ կարգավորել նրանց վարքագիծը:

Միևնույն ժամանակ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այն ծառայողները, ովքեր զուտ մասնագիտական գործառույթներ են իրականացնում (օրինակ, բժիշկը՝ վիրահատություն, հիվանդության ախտորոշում, բուժում իրականացնելիս, դասախոսը՝ դասախոսություն կարդալիս կամ գործնական պարապմունք անցկացնելիս և այլն), քննարկվող հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում:

Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ Հ.Խ. Սահակյանի վերաբերյալ քրեական գործով 2013 թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 16-րդ կետում համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը:²

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 308-ի 3-րդ մասի ձևակերպումից հետևում է նաև, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ համարվում է այն անձը, ով կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներն իրականացնում է ***ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ:*** Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ համապատասխան լիազորություններն այս անձանց պետք է տրված լինեն օրենքով սահմանված կարգով: Հակառակ դեպքում նշված անձինք պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանա: Դա նշանակում է, որ համապատասխան լիազորությունները, որպես կանոն, ***պետք է վերապահված լինեն պաշտոնատար անձին միայն գրավոր ձևով:*** Հակառակ պարագայում հնարավոր չի

² Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2014: Հ. 5, էջեր 536-537:

լինի հստակ հիմքերով անձին դասել պաշտոնատարների շարքը: Այս կանոնից, թերևս, կարող է լինել միայն *մեկ բացառություն, կապված զինվորական ծառայության առանձնահատկությունների հետ*: Մասնավորապես, զինծառայողին պետ նշանակելու հրամանի գրավոր ձևը ոչ միշտ է պարտադիր:³

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների առումով պարտադիր չէ, որպեսզի հանցանքը կատարելու պահին պաշտոնատար անձը ցուցադրի իշխանության արտաքին բաղադրիչները (համազգեստ հագած լինի, վկայական ներկայացնի և այլն): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որ հանցավորը հանդես գա որպես պաշտոնատար անձ, ընկալվի շրջապատի և տուժողի կողմից հենց որպես այդպիսին:⁴

Այս առումով որոշակի բարդություն է առաջացնում այն դեպքերի որակումը, երբ անձը փաստացի իրականացնում է պաշտոնատար անձի պարտականություններ՝ դրա համար օրինական որևէ հիմք չունենալով: Մինչխորհրդային դատական պրակտիկայում, ինչպես նշում է Ա.Վ. Գալախովան, «... ընդունված էր այն մոտեցումը, որ անձը կարող է համարվել պաշտոնական հանցագործության սուբյեկտ ոչ միայն այն դեպքերում, երբ օրենքով սահմանված կարգով ձանաչվել է որպես պաշտոնատար անձ, այլև՝ երբ իր գործունեության բնույթով իրականացնում է նման անձին բնորոշ գործառույթներ»: Նման անձանց շարքին հեղինակը դասում է, օրինակ, հասարակության՝ հասարակական կարգի պահպանության պարտականություններ իրականացնող ներկայացուցիչներին:⁵

Քրեական իրավունքի ներկայիս հայեցակարգում և իրավակիրառ ժամանակակից պրակտիկայում, սակայն, արդարացիորեն ձևավորվել և գործում է հակառակ մոտեցումը, որի համաձայն՝ պաշտոնատար (ուստի և՛ պաշտոնական հանցագործության սուբյեկտ) կարող է համարվել միայն այն անձը, ով օ-

³ Տե՛ս նաև՝ Квициния А.К. Проблемы ответственности за должностные преступления: Дис... д-ра юрид. наук. Сухуми, 1990, էջ 84:

⁴ Տե՛ս նաև՝ Снежко А.С. Превышение должностных полномочий: Дис... канд. юрид. наук. Краснодар, 2004, էջ 101:

⁵ Տե՛ս Գալախովա А.В. О понятии представителя власти // Сборник статей адъюнктов и соискателей. М., 1967, էջ 81:

րենքով սահմանված հիմքերով օժտված է համապատասխան լիազորություններով:⁶

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ի 4-րդ մասի համաձայն՝ քր. օր.-ի հոդվածներ 311-ով (կաշառք ստանալը), 311²-ով (իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը), 312-ով (կաշառք տալը), 312²-ով (իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը) և 313-ով (կաշառքի միջնորդությունը) նախատեսված հանցակազմերի իմաստով պաշտոնատար անձինք են նաև՝

1) օտարերկրյա պետության՝ տվյալ պետության ներպետական իրավունքին համապատասխան՝ պետական պաշտոնյայի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետության օրենսդիր մարմնի կամ վարչական լիազորություններ իրականացնող որևէ ներկայացուցչական մարմնի անդամները.

2) միջազգային կամ վերազգային հանրային կազմակերպության կամ մարմնի, որի անդամ է Հայաստանի Հանրապետությունը, պաշտոնյաները կամ այդ կազմակերպության կամ մարմնի կանոնակարգերով նախատեսված դեպքերում պայմանագրերով աշխատողները կամ այլ անձինք, որոնք կատարում են նման պաշտոնյաների կամ աշխատողների կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանող գործառույթներ.

3) միջազգային կամ վերազգային կազմակերպության, որի անդամ է Հայաստանի Հանրապետությունը, խորհրդարանական վեհաժողովի կամ նման գործառույթ իրականացնող այլ մարմնի անդամները.

4) միջազգային դատարանի, որի իրավասությունն ընդունել է Հայաստանի Հանրապետությունը, դատական գործառույթներ իրականացնող անդամները կամ պաշտոնյաները.

5) օտարերկրյա պետությունների դատարանների երդվյալատենակալները:

⁶ Տե՛ս նաև՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 785-786:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ պաշտոնեական հանցագործության սուբյեկտ չեն կարող հանդիսանալ մասնավոր անձինք, ինչպես նաև մասնավոր, առևտրային, հասարակական կամ այլ ոչ պետական կազմակերպություններում կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք: Հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձը նշված հանցագործություններին կարող է մասնակցել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

Տվյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանցագործությունների սուբյեկտներին, որոնց վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնում են բացառապես ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 190-ի համաձայն, ինչպես արդեն նշվել է, այդպիսիք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներն ու պետական հատուկ ծառայություն իրականացնող անձինք: «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի համաձայն՝

– **օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ** են՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, փոխվարչապետը, պատգամավորները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահները և դատավորները, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության նախարարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարզպետները, նրանց տեղա-

կայները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները, Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովների ղեկավարները և անդամները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամները, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահը և տեղակալը.

– **պետական հատուկ ծառայություն իրականացնողներ** են՝ դատախազները, քննչական կոմիտեի ծառայողները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պաշտոնատար անձինք:

Ասվածից կարելի է հետևություն անել, որ, եթե ՀՀ դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի պարագայում պետական հատուկ ծառայություն իրականացնողներ են համարվում միայն **դատախազները** և քննչական կոմիտեի **ծառայողները**, ապա ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարարական մարմինների պարագայում նաև դրանց այլ պաշտոնատար անձինք (օրինակ՝ աշխատակազմերի ղեկավարները և այլն):

Պաշտոնեական հանցագործությունների **օբյեկտի** վերաբերյալ հարցերը մասնագիտական գրականության մեջ վիճաբանությունների տեղիք են տալիս:⁷ Նշված հանցագործությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանց անմիջական և տեսակային օբյեկտները նույնանում են: Մասնավո-

⁷ *St'u nali` Snezhko A. C. Превышение должностных полномочий, էջ 40:*

րապես, դրանց հիմնական անմիջական (տեսակային) օբյեկտը պետական ապարատի կոնկրետ օղակի նորմալ գործունեության ապահովման հետ կապված հասարակական հարաբերություններն են: Միննույն ժամանակ, պաշտոնական հանցագործությունները ունենում են այլ հասարակական հարաբերությունների (լրացուցիչ օբյեկտների) դեմ: Որպես այդպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական շահերը և այլն:

Քննարկվող հարցերի կապակցությամբ Բ.Վ. Չդրավոմիսլովը դեռևս 1970-ականներին նշում էր, որ «պաշտոնական հանցագործությունների տեսակային օբյեկտ պետք է համարվի պետական ապարատի նորմալ աշխատանքը (կամ գործունեությունը)»:⁸ Նույն տեսակետի կողմնակիցներ են նաև ռուսաստանցի ժամանակակից իրավաբան-գիտնականների մեծամասնությունը:⁹

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի նաև այլ մոտեցում, որի համաձայն, վերը նշված հանցագործությունների տեսակային օբյեկտը պետք է հասկանալ ավելի լայն իմաստով՝ դրա մեջ ներառելով նաև պետական իշխանության հեղինակությունը:¹⁰ Մեր կարծիքով ևս, ՀՀ քր. օր.-ի գլուխ 29-ով

⁸ *St'u` Zdravomyслов B.B. Должностные преступления. Понятие и квалификация. М, 1975, էջ 7:*

⁹ *St'u, օրինակ՝ Волженкин Б.В. Служебные преступления. М, 2000, էջ 98, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации: В 2 т. Т. 2. / Под ред. О.Ф. Шишова М, 1998, էջ 403, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. Х.Д. Аликуперова, Э.Ф. Побегайло. М., 2001, էջ 707, Уголовное право. Особенная часть: Учебник для вузов / Отв. ред. И.Я. Козаченко, З.А. Незнамова, Г.П. Новоселов. М, 1997, էջ 751, Курс уголовного права. Особенная часть: Учебник для вузов / Под ред. Г.Н. Борзенкова и В.С. Комиссарова. Т. 5. М, 2001, էջ 90:*

¹⁰ *St'u, օրինակ՝ Снежко А.С. Превышение должностных полномочий: Дис... канд. юрид. наук. Краснодар, 2004, էջ 41, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под ред. В.Д. Иванова. Ростов, 2002, էջ 409, Иванов В.Д. Уголовное законодательство Российской Федерации. Т. 3. Часть Особенная. Ростов, 1997, էջ 126:*

նախատեսված պաշտոնեական հանցագործությունների տեսակային օբյեկտը պետք է բնութագրվի հենց նման կերպ: Բանն այն է, որ տվյալ մոտեցումն առավել հստակ է արտացոլում նշված հանցագործությունների էությունը՝ հնարավորություն տալով առավել արդյունավետ պաշտպանել պետական և մունիցիպալ ծառայության շահերը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ որոշ հեղինակներ կտրականապես դեմ են պետական իշխանության հեղինակությունը պաշտոնեական հանցագործության օբյեկտի բաղկացուցիչ մաս համարելուն: Այսպես, Ս.Պ. Սլավը նշում է՝ «Ընդհանուր առմամբ պետական իշխանության և դրա առանձին օղակների հեղինակությունը (արեստիժը) իրավագիտակցության տարր է և չի առաջացնում հասարակական հարաբերություններ: Հետևաբար, այն հանդես է գալիս որպես պաշտոնեական հանցագործության հանցավոր հետևանք (բարոյական վնասի տեսքով) և չի կարող գնահատվել որպես հանցագործության օբյեկտ»:¹¹

Համաձայնելով վերոհիշյալ հեղինակի հետ այն առումով, որ իշխանության հեղինակությունը իրավագիտակցության տարր է, պետք է նշել, սակայն, որ նա անարդարացիորեն դուրս է մղում իրավագիտակցությունը քրեաիրավական պաշտպանության մեխանիզմից: Քանի որ պետական իշխանության մարմնի հեղինակությունը խախտելն առաջ է բերում հանցավոր հետևանքներ (դրան համաձայն է նաև Ս.Պ. Սլավը), դրանով իսկ այն խախտում է քրեական օրենքի կողմից պաշտպանվող համապատասխան օբյեկտը: Ընդ որում, մեր տեսակետը կիսում են նաև բազմաթիվ այլ հեղինակներ:¹²

Այս կապակցությամբ վերլուծելով պաշտոնեական հանցագործությունների օբյեկտի և հետևանքների հարաբերակցությունը՝ Ա.Վ. Գալախովան արդարացիորեն նշում է, որ «...տվյալ հանցագործությունների օբյեկտը (համապատասխան մարմնի

¹¹ *Stin' Slav S.P. Ответственность за должностные злоупотребления (по материалам Приднестровья): Автореф. дис... канд. юрид. наук. М., 2004, էջեր 15-16:*

¹² *Այլ մասին առավել մանրամասն տես՝ Грошев А.В. Функции правосознания в механизме уголовно-правового регулирования: Автореф. дис... д-ра юрид. наук. Екатеринбург, 1997, էջ 9:*

նորմալ գործունեությունը) կարող է խախտվել՝ 1) պետական կամ հասարակական շահերին, 2) անձանց կամ կազմակերպությունների օրինական շահերին, 3) թե՛ մեկ և թե՛ մյուս շահերին վնաս պատճառելով: Ուստի, անձանց կամ կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը կարող են համարվել քննարկվող հանցագործությունների թեև պարտադիր, բայց միայն լրացուցիչ օբյեկտներ»:¹³

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցագործությունների ճիշտ որակման առումով կարևորվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության պարագայում արարքին իրավաբանական գնահատական տալու հարցը: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում հաճախ որոշակի խնդիրներ են առաջանում օրենքի միևնույն մասի ընդհանուր և հատուկ նորմերի միջև մրցակցության դեպքում հատուկ նորմին առավելություն տալու հիմնավորվածության կապակցությամբ: Բացի այդ, մտավախություն կա, որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հետ կապված զուտ տեսական մեկնաբանությունները դատավարական որոշումներում արտացոլվել կարող է հետագայում խոցելի դառնալ և վիճարկվել պաշտպանների կողմից:

Քրեական իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունն առկա է այն դեպքերում, երբ ընդհանուր հանցակազմից առանձնացվում է դրա մասնավոր, հատուկ հանցակազմը: Հատուկ հանցակազմն իր հատկանիշներով համընկնում է ընդհանուր հանցակազմի հատկանիշներին, բայց տարբերվում է վերջինից հանցակազմի որևէ մեկ հատկանիշի առանձնահատկությամբ (սուբյեկտի, օբյեկտի և այլն), որի ուժով էլ առանձնացվում է որպես ինքնուրույն հանցակազմ: Ընդ որում, նշված նորմերի մրցակցության դեպքում նախապատվությունը տրվում է հատուկ նորմին, և արարքը որակվում է միայն դրանով: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 309-ը պատասխանատու

¹³ *Stin` Galaхова А.В. Непосредственный объект превышения власти или служебных полномочий // Сборник статей адъюнктов и соискателей. М., 1970, էջ 87:*

վություն է սահմանում պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, իսկ հոդված 341-ը՝ դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելու համար: Հոդված 309-ով նախատեսված նորմն ընդհանուր է, իսկ հոդված 341-ով նախատեսվածը՝ դրա հատուկ դրսևորումը: Ուստի, դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելու դեպքում արարքը պետք է որակել միայն հոդված 341-ով:¹⁴

Հարկ է նշել նաև, որ տվյալ մոտեցման կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Համբարձում Հարությունյանի վերաբերյալ 13.07.2011 թ. թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 21-րդ կետի համաձայն՝ «... նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը»: Ավելին, այս դիրքորոշումը վերահաստատվել է նաև Վճռաբեկ դատարանի 2013թ. նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0015/11/13 որոշմամբ:¹⁵

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց կողմից կատարվող՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցանքների օբյեկտիվ և սուբյեկտիվ մյուս հատկանիշների առանձնահատկություններին, ապա դրանց քննարկմանը կանդրադառնանք կրկրետ հանցակազմերը մեկնաբանելիս:

1.2. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 308-ի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը **պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագոր-**

¹⁴ Տե՛ս, օրինակ՝ ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 307-308:

¹⁵ Տե՛ս՝ Քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.11.2013 թ. թիվ ԵԿԴ/0015/11/13 որոշումը, <http://datalex.am/>:

ծելն է կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խնքային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմի** պարտադիր հատկանիշներն են՝

1) **հանրորեն վտանգավոր արարքը**՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը,

2) **հանրորեն վտանգավոր հետևանքը**՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասը,

3) **պատճառական կապը** նշված հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքի միջև:

Այսպիսով, քննարկվող հանցանքը կարող է կատարվել ինչպես **գործողությամբ** (պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ ակտիվորեն օգտագործելով), այնպես էլ **անգործությամբ** (պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները չկատարելով):

ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ից բխում է, որ պաշտոնատար անձի պաշտոնեական դիրքը որոշվում է նրա լիազորություններով, որոնք սահմանվում են համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով, որոնցով կարգավորվում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հետևաբար, **պաշտոնեական դիրքն օգտագործել** ասելով՝ պետք է հասկանալ միայն այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի՝ վերոհիշյալ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված լիազորություններից: Այլ կերպ ասած, պաշտոնեական լիազորություններն օգտագործելը նշանակում է, որ

պաշտոնատար անձը գործում է համապատասխան ակտերով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս:

Պաշտոնեական դիրքը *ծառայության շահերին հակառակ օգտագործելը* նշանակում է կատարել արարք, որը չի բխում ծառայողական անհրաժեշտությունից: Ընդ որում, ծառայության շահեր ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն պետական այն կառույցի (մարմնի, կազմակերպության, կառավարչական հիմնարկի) շահերը, որտեղ աշխատում է տվյալ պետական ծառայողը, այլև *ողջ պետական (հանրային) կառավարման համակարգի շահերը*: Այսինքն, պաշտոնատար անձի համապատասխան վարքագիծը որևէ պարագայում չի կարող արդարացվել այն հիմնավորմամբ, թե, իբր, կատարված արարքը չի հակասում պետական տվյալ կառույցի շահերին, կամ, նույնիսկ, նպատակահարմար է այդ շահերի համար:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև *պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով*, երբ պաշտոնատար անձը, նշված հանգամանքն օգտագործելով, ներգործում է մեկ ուրիշ անձի վրա՝ դրդելով նրան հանցագործության: Այս պարագայում նրա արարքը պետք է որակել համապատասխանաբար պաշտոնեական լիազորությունների չարաշահում և այն հանցագործության դրդչություն, որի կատարմանը նա դրդել է: Օրինակ՝ երբ դատախազը, առանց բավարար հիմքերի, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, կոնկրետ գործով ցուցում է տալիս քննիչին մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, նրա արարքը պետք է որակել որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում և քննիչի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրդչություն:

Մասնագիտական գրականության մեջ, սակայն, արտահայտվել է այլ մոտեցում ևս: Մասնավորապես, մի շարք քրեագետների կարծիքով, նման դեպքերում դատախազի արարքը պետք է որակել միայն որպես քննիչի կողմից համապատասխան հանցանք կատարելու (լիազորությունները չարաշահելու, ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և այլն) դրդչություն: Տվյալ մոտեցումը նրանք փոր-

ծոււմ են հիմնավորել այն պատճառաբանությամբ, որ որոշում (մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու, անձին որպէս մեղադրյալ ներգրավելու և այլն) կայացնողը քննիչն է, ուստի դատախազը չի կարող համարվել այդ որոշման կայացման հետ կապված հանցանքի կատարող:¹⁶

Հարկ է նշել, սակայն, որ տվյալ մոտեցման կողմնակիցները ճիշտ են մասամբ: Այն հանգամանքը, որ դատախազը նման դեպքերում չի կարող համարվել համապատասխան որոշման կայացման հետ կապված հանցանքի կատարող, չի էլ վիճարկվում: Բանն այն է, որ նրա կողմից պաշտոնեական լիազորությունների չարաշահումը դրսևորվում է ոչ թե մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու կամ ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլ ցուցում տալու իր լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելու մեջ: Ընդ որում, եթե քննիչը նման դեպքերում առաջնորդվի դատախազի ապօրինի ցուցումներով և կայացնի մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու (անձին որպէս մեղադրյալ ներգրավելու) մասին որոշում, ապա դատախազի արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպէս պաշտոնեական լիազորությունների չարաշահում և քննիչի կողմից իր լիազորությունները չարաշահելու (ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու) դրդչություն, իսկ քննիչի արարքը՝ որպէս պաշտոնեական լիազորությունները չարաշահել (ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկել): Եթե, սակայն, քննիչը բողոքարկի և չկատարի դատախազի վերոհիշյալ ցուցումները, ապա դատախազի արարքը պետք է որակվի միայն որպէս պաշտոնեական լիազորությունները չարաշահելու փորձ, իսկ քննիչի արարքը հանցակազմ չի պարունակի:

Միաժամանակ պետք է նշել, որ վերոհիշյալ դեպքերից

¹⁶ *Stu, opřinuwly` Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право. СПб.: "Юридический центр Пресс", 2008, էջ 227:*

վերջինում դատախազի արարքը պարունակում է նաև քննիչի կողմից լիազորությունները չարաշահելու նախապատրաստության տարրեր: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 39-ի 5-րդ մասի համաձայն՝ «եթե կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները չեն հաջողվում իրենցից անկախ հանգամանքներով,¹⁷ ապա այդ անձանց պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար:» Այդուհանդերձ, դատախազի քննարկվող արարքը չի կարող որակվել որպես հանցագործություն, քանզի պաշտոնեական լիազորությունների չարաշահումը միջին ծանրության հանցագործություն է:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է, ինչպես արդեն նշվել է, նաև հանրորեն վտանգավոր հետևանքը՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված **էական վնասը**: Վերջինս արժեքավորվող հասկացություն է, որը, գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով, պետք է գնահատի իրավակիրառողը: Այս առումով անհրաժեշտ է, նախ, հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին՝

ա) էական վնասը կարող է դրսևորվել **ինչպես գույքային, այնպես էլ այլ վնասի** (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների, հիմնարկների, ձեռնարկությունների գործունեության խաթարում, հասարակական կարգի խախտում, ծանր հանցագործությունների պարտակում և այլն) ձևով,

բ) գույքային վնասը կարող է դրսևորվել **ինչպես ուղղակի** (գույքի վնասման, ոչնչացման և այլն), **այնպես էլ անուղղակի վնասի** (բաց թողնված օգուտի և այլն) ձևով,

¹⁷ *Տվյալ դեպքում խոսքը չհաջողված հանցակցության մասին է: Վերջինս առկա է այն դեպքերում, երբ կատարողը հանցագործությունը ավարտին չի հասցնում իր կամքով (կամովին հրաժարվում է) կամ նրա մոտ ընդհանրապես հանցանք կատարելու մտադրություն չի ծագում, կամ կատարողը ձեռնամուխ չի լինում հանցանքի կատարմանն այլ պատճառներով:*

գ) գույքային վնաս պատճառելու ձևերից է նաև նյութական միջոցների **ոչ նպատակային, անտնտեսվար** օգտագործումը:

Բացի այդ, օրենքը սահմանում է այն կոնկրետ չափը, որի դեպքում գույքային վնասը համարվում է էական: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ի 1-ին մասի համաձայն՝ էական գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի **երեքհարյուրապատիկի չափը գերազանցող** գումարը կամ դրա արժեքը:

Ինչ վերաբերում է **ոչ գույքային վնասին**, ապա դրա էական լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժողների քանակը, ոտնահարված իրավունքների և ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության նորմալ գործունեության խանգարման աստիճանը կամ դադարեցման հանգամանքը և այլն:

Այս առումով հարկ է նշել, որ պաշտոնատար անձի ցանկացած ոչ իրավաչափ վարքագիծ, ըստ էության, հեղինակագրկում է պետական իշխանությունը և խոչընդոտում պետական ապարատի նորմալ գործունեությանը: Սակայն միշտ չէ, որ նշված հեղինակագրկումը կամ խոչընդոտումը կարող է գնահատվել որպես էական վնաս, հետևաբար՝ վկայել համապատասխան հանցակազմերով նախատեսված հանցագործությունների (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու կամ պաշտոնեական անփութության) առկայության մասին: Հակառակ պարագայում նշված հանցակազմերում այդ հետևանքը որպես հանցագործության պարտադիր հատկանիշ նախատեսելն անիմաստ կլիներ:

Այս կապակցությամբ **Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2014 թ. նոյեմբերի 4-ի թիվ ՍՂՈ-1174 որոշման 5-րդ կետում** նշվում է՝ «... Այլ է խնդիրը ոչ գույքային վնասի դեպքում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն

ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է ... օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, և որ տվյալ դեպքում ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնաս կարող է պատճառվել ..., կարևորվում է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը»:

Նույն կետի շրջանակներում Սահմանադրական դատարանը վկայակոչում է նաև իր՝ 05.04.2011թ. թիվ ՍԴՈ-947 որոշման 8-րդ կետը, որում ամրագրված է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:*

Քննարկվող հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ դատարանի 2013 թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 15-րդ կետում նշվում է՝ «... եթե գույքային վնասի դեպքում նախատեսված է որոշակի շեմ ..., ապա ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները (այդ թվում՝ անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը պատճառված բարոյական վնասի չափը, տուժողների քանակը, խախտված իրավունքների և ազատությունների բնույթն ու խախտման աստիճանը, հիմնարկության կամ ձեռնարկության բնականոն գործունեության խաթարման աստիճանը և այլն)»:

Այլ կերպ ասած, իրավակիրառ պրակտիկան է կոչված ուրոշակիացնելու այն չափորոշիչները, որոնցով քննարկվող դեպքերում պետք է գնահատվի վնասի էական կամ ոչ էական լինելը:

Մասնագիտական գրականության մեջ այդ առումով արդարացիորեն առաջարկվում է սահմանել այն հանգամանքների կամ իրադրությունների օրինակելի (կողմնորոշող) ցանկը, որոնք պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների իմաստով կարող են հիմք հանդիսանալ որոշակի հետևանքները որպես էական վնաս գնահատելու համար: Ամփոփելով այդ կապակցությամբ արտահայտված գործնական նշանակություն ունեցող տեսական մոտեցումները¹⁸ կարելի է մատնանշել կողմնորոշող բնույթի հետևյալ հիմնական հանգամանքները.

1. Արժեքավորվող հասկացության բովանդակությունը բացահայտելու համար **նպատակահարմար չէ օգտագործել այլ արժեքավորվող, չկոնկրետացված, ոչ հստակ հասկացություններ:** Բացի դրանից, օրինակելի (կողմնորոշող) ցանկի մեջ մտցվող հանգամանքը **չպետք է չափազանց լայն մեկնաբանությունների տեղիք տա:** Այսպես, օրինակ՝ պատճառված վնասը որպես էական գնահատելու համար ցանկալի չէ պարզապես այնպիսի հասկացությունների օգտագործումը, ինչպիսիք են «ֆինանսական կարգապահության կոպիտ խախտումները», «բարոյական կամ ֆիզիկական վնասի պատճառումը», «պետական կազմակերպության տնտեսական վիճակի վատթարացումը», «տնտեսության տվյալ ոլորտի բարեփոխման տեմպերի դանդաղեցումը» և այլն: Առավել նպատակահարմար կլինի այդ

¹⁸ *Stéu, օրինակ՝ Гончарова Г. К вопросу о значении понятия существенного вреда по делам о преступлениях против интересов службы // Законность и правопорядок, № 3(19), 2011, էջեր 30-34, Лосев В. Существенный вред в составах преступлений против интересов службы // Законность и правопорядок, № 4(28), 2013, էջեր 57-58, Хилюта В. Существенный вред в теории и практике должностного злоупотребления (по состоянию на 22.08.2011г.). Минск: ООО "ЮрСпектр", 2013, Коррупционная преступность: криминологическая характеристика и научно-практический комментарий к законодательству о борьбе с коррупцией. Минск: Тесей, 2008, էջեր 246-247 և այլն:*

հասկացությունների բովանդակության և տվյալ արարքի համար դրանց նշանակության հստակեցումը, որոշակիացումը: Մասնավորապես՝ պետք է նշել, թե կոնկրետ ինչու է դրսևորվել, օրինակ՝ ֆինանսական կարգապահության խախտումը կամ կազմակերպության տնտեսական վիճակի վատթարացումը, և հիմնավորել, թե որքանով է դրանց արդյունքում պատճառված վնասը էական ազդեցություն ունեցել անձանց կամ կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի կամ հասարակության կամ պետության օրինական շահերի վրա:

2. Պետական իշխանության հեղինակագրկումը՝ որպես պետական մարմինների գործունեության սկզբունքների խախտման արդյունք, ***ինքնին՝ հանրորեն վտանգավոր այլ հետևանքների բացակայության պարագայում, չի կարող գնահատվել իբրև քննարկվող հանցագործությունների իմաստով էական վնաս:*** Հակառակ պարագայում բավարար կլինի դատավարական համապատասխան փաստաթղթերում պարզապես մատնանշել պետական իշխանության հեղինակագրկումը և քրեական պատասխանատվության ենթարկել ոչ իրավաչափ ցանկացած վարքագիծ դրսևորած պաշտոնատար անձին, ինչն անարդար է, հետևաբար նաև՝ անընդունելի: Մասնավորապես, չի կարելի որպես պաշտոնական լիազորությունների չարաշահում որակել, ասենք, ճանապարհային ոստիկանի անգործությունը, որը պարզապես դրսևորվել է հոծ գիծը հատած վարորդի խախտումը չարձանագրելու կամ անուշադրության մատնելու մեջ՝ առանց որևէ այլ հետևանք առաջացնելու: Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես տվյալ հանգամանքը հաճախ անտեսվում է ոչ միայն դատախազաքննչական մարմինների, այլև դատարանների կողմից:

3. Քննարկվող հանցագործությունների օբյեկտիվ կողմերի պարտադիր հատկանիշ է հանրորեն վտանգավոր ***հետևանքը (էական վնասը), այլ ոչ թե դրա առաջացման վտանգ ստեղծելը:*** Վտանգ ստեղծելը և հետևանքն իրար բացառող երևույթներ են: Ուստի, դրանցից մեկի առկայությունը վկայում է մյուսի բացա-

կայության մասին: Հետևաբար, *հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման վտանգ ստեղծելը չի կարող գնահատվել որպես էական վնաս (թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային)*: Այսպես, օրինակ՝ որպես էական վնասի պատճառումը հավաստող հանգամանք չի կարող գնահատվել մաքսային ծառայողի կողմից անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների բացթողումը, որն ընդամենը վտանգ է ստեղծել բնակչության առողջության համար՝ առանց իրականում որևէ վնասակար հետևանք առաջացնելու: Կամ՝ որպես այդպիսին չի կարող գնահատվել նաև կաշառք ստացող պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի մատնանշած անձին աշխատանքի ընդունելը, որով տվյալ կազմակերպության բնականոն գործունեությունը խաթարելու վտանգ է ստեղծվել:

4. ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 308-ի, 309-ի և 315-ի իմաստով որպես էական վնաս *չեն կարող գնահատվել* նաև այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են՝ *այլ անձանց (ինչպես ենթակաների, այնպես էլ կողմնակի անձանց) կողմից վարչական կամ կարգապահական իրավախախտումներ կատարելը, ինչպես նաև պաշտոնատար անձի կողմից դրանց կատարման համար պայմաններ ստեղծելը, դրանք թաքցնելը կամ դրանց համար վարչական կամ կարգապահական պատասխանատվության չենթարկելը*: Այսպես, օրինակ՝ քննարկվող հանցակազմերի իմաստով էական վնասը կբացակայի, եթե պետական մարմնի ղեկավարը, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, կարգապահական պատասխանատվության չենթարկի աշխատանքից պարբերաբար ուշացող աշխատակցին:

5. Քննարկվող հանցագործությունների իմաստով որպես էական վնաս *չի կարող գնահատվել նաև պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելով կամ դրանք անցնելով վարչական կամ կարգապահական իրավախախտում կատարելը*: Հանրորեն վտանգավոր այլ հետևանքների բացակայության պարագայում պաշտոնատար անձի նշված հակաիրավական վարքագիծը հանցագործություն համարվել չի կարող: Օրինակ՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմը կբացակայի, եթե ոստիկա-

նության ծառայողը, իրեն ամրակցված ծառայողական ավտոմեքենայով աշխատանքի շտապելով, գերազանցում է թույլատրելի արագությունը:

6. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու հանցակազմերի իմաստով որպես էական վնաս *չի կարող գնահատվել նաև տվյալ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը*: Բանն այն է, որ կաշառք ստանալը պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու առանձնահատուկ դրսևորում է, որը նախատեսված է հատուկ նորմով: Հետևաբար, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու համար կաշառք ստանալն ինքնուրույն հանցագործություն է, որը չի կարող գնահատվել որպես նշված հանցանքները կատարելու արդյունքում առաջացած էական վնաս:

7. Ոչ գույքային էական վնասի մասին որևէ պարագայում *խոսք չի կարող լինել* այն դեպքերում, *երբ պատճառված վնասը գույքային բնույթի է, սակայն չի գերազանցում ՀՀ քր. օր.-ի համապատասխան հոդվածներով նախատեսված չափերը*: Այսպես, օրինակ՝ եթե ճանապարհային ոստիկանը, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չի արձանագրում վարորդի խախտումը, որի համար ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է երեք հարյուր հազար դրամը չգերազանցող տուգանք, նրա արարքը, հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքի բացակայության հիմքով, չի կարող ուրակվել ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ պետական ծառայության դեմ ուղղված քննարկվող հանցագործությունների հանրորեն վտանգավոր հետևանքները կարող են բազմազան և անկանխատեսելի լինել: Ուստի, դրանց սպառիչ ցանկի սահմանումը հնարավոր չէ: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վնասի բնույթը որոշելու համար կարող է տարբեր ոլորտների մասնագետների (տնտեսագետների, ճարտարագետների, քաղաքագետների, գյուղատնտեսների և այլն) ներգրավման անհրաժեշտություն առաջանալ:

Հարկ է նշել նաև, որ, ոչ գույքային վնասի արժեքավորվող բնույթը հաշվի առնելով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է համապատասխան դատավարական փաստաթղթերում պատճառաբանել և հիմնավորել վնասի որոշակի տեսակը որպես էական վնաս գնահատելու հանգամանքը:

Քննարկվող հանցակազմի **օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է**, ինչպես արդեն նշվել է, նաև պաշտոնատար անձի համապատասխան արարքի և վտանգավոր հետևանքի միջև **պատճառական կապը**: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հիմնավորել, որ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս է պատճառվել հենց տվյալ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունները չարաշահելու արդյունքում: **Այսինքն, եթե պարզվի, որ այդ վնասն առաջացել է այլ անձանց արարքների հետևանքով կամ այլ պատճառներով, ապա քննարկվող հանցակազմն առկա չի լինի**:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է մեղքի **դիտավորյալ** ձևով: Ընդ որում, դիտավորությունը կարող է լինել **ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի**:

Քննարկվող հանցավոր արարքի սուբյեկտիվ կողմի **պարտադիր հատկանիշ են նաև հանցագործության շարժառիթները՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը և խմբային շահերը**:

Պաշտոնեական լիազորությունները **շահադիտական շահագրգռվածությունից ելնելով** չարաշահելն այն իրավիճակն է, երբ պաշտոնատար անձը հանցանքը կատարում է **նյութական օգուտ ստանալու** համար: Նյութական օգուտ կարող է համարվել ինչպես գույք, դրամ, նյութական այլ բարիքներ ստանալը, այնպես էլ նյութական ծախսերից ազատվելը: Այսպես, օրինակ, շահադիտական շահագրգռվածությունն առկա կլինի, եթե քննիչը բավարար հիմքերի առկայության պարագայում քրեական գործ չհարուցի բանկի կառավարչի նկատմամբ պայմանով, որ դրա դիմաց կազատվի տվյալ բանկում ունեցած վարկային գծով իր պարտավորությունները կատարելուց:

Հարկ է նշել նաև, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ խնդիր է առաջանում շահադիտական շահագրգռվածությունից ելնելով պաշտոնեական լիազորությունները չարաշահելը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարվող հափշտակություններից (խարդախությունից և յուրացումից կամ վատնումից) սահմանազատելու կապակցությամբ:

Նշված հանցագործությունների սահմանազատման հիմնական չափանիշն այն է, որ ***պաշտոնեական լիազորությունները շահադիտական շարժառիթով չարաշահելու դեպքում պետք է բացակայեն հափշտակության հատկանիշները (կամ դրանցից գոնե մեկը)***: Այսինքն, եթե, նույնիսկ, լիազորությունները չարաշահելով, ապօրինի վերցվում է ուրիշի գույքը, բայց ոչ անհատույց, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով: Հակառակ պարագայում, բնականաբար, արարքը պետք է որակվի որպես պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հափշտակություն: Այսպես, օրինակ՝ եթե պետական կազմակերպության գլխավոր հաշվապահը ժամանակավոր օգտագործման (հետագայում վերադարձնելու) նպատակով կազմակերպության դրամարկղից միջոցներ է վերցնում, նրա արարքը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, որակվում է միայն որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում: Միևնույն ժամանակ, եթե նույն անձի կողմից դրամական նշված միջոցները վերցվեին իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու նպատակով, նրա արարքը կորակվեր միայն որպես պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացում կամ վատնում:

Անձնական այլ շահագրգռվածության առումով նախ և առաջ պետք է նշել, որ լայն իմաստով անձնական կարող է համարվել ցանկացած շարժառիթ, քանի որ սուբյեկտի վարքագծի ցանկացած գիտակցված և կամային ակտ միշտ անձնական բնույթ է կրում: Մինչդեռ, ինչպես արդարացիորեն նշում է Մ.Դ. Լիսովը, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի իմաստով «... պետք է հասկանալ ոչ թե բոլոր տեսակի անձնական դրդումները, այլ միայն նրանք, որոնք, ինչպես և շահադիտականները, ուղղված են որևէ օգուտ (տվյալ

դեպքում՝ ոչ գույքային բնույթի) ստանալուն»:¹⁹ Հետևաբար, տվյալ դեպքում պետք է հասկանալ համապատասխան պաշտոնատար անձի **բոլոր այն դրդումները, որոնք կապված են ոչ գույքային բնույթի օգուտ ստանալուն:**

Քննարկվող շարժառիթը կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Դրա հիմնական դրսևորումներն են կարիերիզմը, հովանավորչությունը, ազգականներին, ընկերներին օգտակար լինելու ձգտումը, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու, փոխադարձ ծառայություն ստանալու կամ սեփական աշխատանքում առկա թերություններն ու բացթողումները թաքցնելու ցանկությունը և այլն:

Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև **ծառայության կեղծ հասկացված շահը**, երբ պաշտոնատար անձը արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքն աշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Սակայն, եթե նման դեպքերում պաշտոնատար անձի արարքը հակասում է պետական ողջ ապարատի նորմալ գործունեության շահերին, ապա, ինչպես արդեն նշվել է, առկա է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը: Նման դեպքերում, սակայն, անհրաժեշտ է ապացուցել, որ պաշտոնատար անձի արարքն, իրոք, էական վնաս է հասցրել ընդհանուր առմամբ պետական ապարատի նորմալ գործունեությանը: Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու տվյալ դրսևորման օրինակ կարելի է համարել այն դեպքը, երբ ոստիկանության՝ հանցագործությունների հաշվառման-գրանցման համար պատասխանատու աշխատակիցը չի գրանցում մի շարք հանցագործությունների դեպքեր՝ տարեկան հաշվետվություն ներկայացնելուց առաջ իր աշխատած կառույցի գործունեությանը վերաբերող վիճակագրությունը «չփչացնելու» նպատակով:

Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել կուսակցական, կլանային կամ այլ խմբերի շահերը պաշտպանելու ցանկության ձևով: Օրինակ՝ երբ քննիչը քրեական գործ չի հա-

¹⁹ *Стів Лысов М.Д. Ответственность должностных лиц по советскому уголовному праву. Казань, 1972, էջեր 151-152:*

րուցում որոշակի անձի նկատմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նա հանդիսանում է իր հայրենակիցների կողմից ստեղծված հասարակական կազմակերպության անդամ:

«Հ քր. օր.-ի հոդված 308-ի 2-րդ մասով նախատեսված է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու **առավել վտանգավոր տեսակը**՝ նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Այսինքն, տվյալ դեպքում խոսքը մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության մասին է:

«Հետևաբար, կոնկրետ քրեական գործով անհրաժեշտ է հիմնավորել, որ հանցավորի դիտավորյալ արարքի հետևանքով պատճառվել է էական վնաս, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Օրինակ՝ երբ հարկային մարմնի աշխատակցի կողմից կազմակերպության նկատմամբ ապօրինաբար նշանակվում է այնպիսի խոշոր տուգանք (էական վնաս), որը հանգեցնում է տվյալ կազմակերպության սնանկության, ինչի արդյունքում դրա սեփականատերն ինքնասպանություն է գործում: Ընդ որում, տվյալ դեպքում որպես ծանր հետևանք կարող են գնահատվել ինչպես կազմակերպության սնանկությունը, այնպես էլ դրա սեփականատիրոջ ինքնասպանությունը՝ առանձին-առանձին:

«Ծանր հետևանքները» նույնպես արժեքավորվող հասկացություն է: Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում որպես այդպիսի հետևանք ընդունված է համարել խոշոր արտադրական կամ այլ բնույթի վթարը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի երկարատև խափանումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների աշխատանքի կազմալուծումը, առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը, թեկուզ մեկ մարդու մահը կամ նրա առողջությանը ծանր վնասի պատճառումը և այլն:²⁰

²⁰ *Տե՛ս նաև՝ Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право, էջեր 117-118:*

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ծանր հետևանքների նկատմամբ հանցավորի կողմից դրսևորած մեղքի ձևի հարցը իրավաբանական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, ծանր հետևանքների նկատմամբ դիտավորության (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի) դրսևորման հնարավորությունը չի վիճարկվում, սակայն նույնը չի կարելի ասել անզգուշության դրսևորման հնարավորության մասին:

Քրեագետների մի մասն այս առումով գտնում է, որ պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի կապակցությամբ չի կարելի խոսել մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության մասին, որովհետև օրենքը նկատի ունի այն ծանրացնող հանգամանքները, որոնք բովանդակությամբ նույնանում են հանցակազմի հասարակ տեսակի համար պարտադիր հատկանիշ հանդիսացող էական վնասի հետ և տարբերվում են վերջինից ուղղակի հասցված վնասի չափով: Նրանց կարծիքով, հնարավոր չէ, որ պաշտոնատար անձը, էական վնասի նկատմամբ դիտավորություն դրսևորելով, անզգուշություն դրսևորի ավելի մեծ չափերի վնասի նկատմամբ: Նման մոտեցումը արդարացի կլիներ, եթե միևնույն հանցագործությամբ, իրոք, հնարավոր չլիներ այնպիսի ծանր հետևանքների առաջացում, որոնք իրենց բովանդակությամբ կտարբերվեին այդ հանցագործությամբ պատճառվող էական վնասից: Մինչդեռ հնարավոր են դեպքեր, երբ էական վնասից բացի՝ առաջացող առավել ծանր հետևանքներն այլ բովանդակություն ունենան: Ընդ որում, դրանց նկատմամբ կարող է դրսևորվել անզգուշություն: Ուստի, ճիշտ է թվում օրենսդրի մոտեցումը, որը պատասխանատվություն է սահմանում ծանր հետևանքներն անզգուշությամբ պատճառելու համար:²¹

Այս առումով հարկ է նշել նաև, որ նպատակահարմար կլիներ օրենքում դիտավորությամբ ծանր հետևանքներ պատճառելը նախատեսել որպես հանցակազմի առավել ծանրացնող

²¹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջեր 793-794:

հանգամանք: Բանն այն է, որ օրենքի ներկայիս ձևակերպումը հնարավորություն չի տալիս ավելի խիստ պատասխանատվություն սահմանել դիտավորությամբ ծանր հետևանքներ առաջացնելու համար, ինչը չի կարող արդարացված համարվել: Այլ կերպ ասած, օրենսդրական բացի պատճառով, լիազորությունները չարաշահելով դիտավորությամբ ծանր հետևանքներ առաջացնելու դեպքում պաշտոնատար անձի արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ի առաջին մասով, քանի որ տվյալ դրսևորումը՝ որպես քննարկվող հանցագործության ծանրացնող հանգամանք, նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, եթե առանձին վերցրած դիտավորությամբ ծանր հետևանքի առաջացումն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի հատկանիշներ է պարունակում, ապա արարքը պետք է որակել համապատասխան հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ եթե պաշտոնատար անձը, լիազորությունները չարաշահելով, մեկ ուրիշին անուղղակի դիտավորությամբ հասցնում է ինքնասպանության, նրա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 110-ով և հոդված 308-ի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների համակցությամբ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված են նաև պաշտոնատար անձանց կողմից լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվություն սահմանող քրեաիրավական հատուկ նորմեր: Այսպես, օրինակ՝ արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շարքում ՀՀ քր. օր.-ի հոդված 336-ը պատասխանատվություն է նախատեսում ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, հոդված 348-ը՝ ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու, հոդված 349-ը՝ ապացույցները կեղծելու, հոդված 351-ը՝ քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու, հոդված 352-ը՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար: Նման բոլոր դեպքերում, ըստ էության, առկա է ՀՀ ք-

րեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն, որի պարագայում, ինչպես հայտնի է, համապատասխան արարքը պետք է որակել հատուկ նորմով: Այլ կերպ ասած, եթե պաշտոնեական լիազորությունների չարաշահումը դրսևորվում է, օրինակ՝ ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու մեջ, ապա արարքը պետք է որակվի միայն որպես ապօրինի ձերբակալում կամ կալանավորում: Այսինքն, նշված հանցագործությունների իրականացումը համակցությունն անհնար է: Կերը նշված հանցագործությունների պարագայում արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով լրացուցիչ որակելը հնարավոր է միայն իրական համակցության դեպքում:

1.3. Պաշտոնեական լիազորություններն անցնելը

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 309-ի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնեական լիազորություններն անցնելը *պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողությունների կատարումն է, որոնք ակնհայտորեն դուրս են գալիս նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս պատճառում անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին:*

Պաշտոնատար անձի լիազորությունները, ինչպես արդեն նշվել է, սահմանվում են համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնցում կարգավորվում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հետևաբար, պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների անցման փաստը հավաստելու համար անհրաժեշտ է պարզել, թե կոնկրետ ո՞ր իրավական ակտով են կարգավորվում կոնկրետ պաշտոնատար անձի լիազորությունները, և կոնկրետ ինչու՞մ է դրսևորվել այդ ակտի պահանջների խախտումը:

Պաշտոնեական լիազորություններն անցնելու *օրելկտիվ կողմը* դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից այնպիսի գործողություններ կատարելով, որոնք՝

1) **մտնում են այլ պետական ծառայողի լիազորությունների շրջանակի մեջ** (օրինակ՝ դատախազը խուզարկություն կատարելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշում է կայացնում: Ակնհայտ է, որ դատախազը, նմանատիպ որոշումներ ընդունելով, անցնում է իր պաշտոնեական լիազորությունները, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների համաձայն, խուզարկություն կատարելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշում կարող է կայացնել միայն դատարանը),

2) **մտնում են կոլեգիալ մարմնի լիազորությունների մեջ** (օրինակ՝ գյուղապետը միանձնյա կայացնում է որոշում, որը պետք է կայացներ տվյալ համայնքի ավագանին: Կամ՝ վերաքննիչ դատարանում նախագահող դատավորը միանձնյա որոշում է կայացնում, մինչդեռ, օրենսդիրը նման որոշում կայացնելու իրավունք վերապահել է վերաքննիչ դատարանին կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով),

3) **կարող էր կատարել պաշտոնատար անձը, բայց հատուկ պայմանների առկայությամբ** (օրինակ՝ քննիչը բնակարանի խուզարկություն է կատարում առանց դատարանի համապատասխան որոշման: Տվյալ իրավիճակում հատուկ պայման է բնակարանի խուզարկություն կատարելու մասին դատարանի որոշումը),

4) **ոչ ոք իրավասու չէ կատարել** (օրինակ՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցը բջջային հեռախոս կամ արգելված այլ առարկա է փոխանցում դատապարտյալներից մեկին):

Հարկ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ առանձին քրեագետներ, քննադատելով գործող օրենսդրությունը, նշում են, որ պաշտոնեական լիազորությունների անցումը հնարավոր է նաև հանցավոր անգործությամբ: Որպես օրինակ նրանք բերում են այն իրադրությունը, երբ քննիչը չի կատարում դատախազի ցուցումը ձերբակալված անձին ազատ արձակե-

լու վերաբերյալ:²² Սակայն, մեր կարծիքով, տվյալ իրավիճակում քննիչը ոչ թե դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, այլ, պարզապես, չի կատարել օրենքով սահմանված իր պարտականությունները՝ դրանով իսկ էական վնաս պատճառելով ձեռքակալված անձի իրավունքներին ու օրինական շահերին, իրավապահ մարմինների հեղինակությանը և հասարակական ու պետական շահերին: Հետևաբար, ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան, նրա արարքը պետք է որակվի ոչ թե որպես պաշտոնեական լիազորությունների անցում, այլ այդ լիազորությունների չարաշահում (ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով):

Այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ «... լիազորությունները անցնել, ոչինչ չանելով, հնարավոր չէ: Նման դեպքերում կարելի է խոսել իշխանության անգործության, այլ ոչ թե իշխանազանցության մասին»:²³

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով պաշտոնատար անձանց անգործության՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահում չհանդիսացող (օրինակ՝ երբ առկա են օբյեկտիվ կողմի բոլոր հատկանիշները, բայց բացակայում է շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահը) տարատեսակ դրսևորումների հավանականությունը, կարծում ենք, ՀՀ քրեական գործող օրենսգիրքն անհրաժեշտ է լրացնել նման դեպքերի համար պատասխանատվություն սահմանող նոր հոդվածով՝ «Պաշտոնեական թողտվություն» վերտառությամբ:

²² *Տե՛ս, օրինակ՝* Ефимов М.А. Вопросы квалификации должностных преступлений по Уголовному кодексу Белорусской ССР. Минск, 1967, էջ 18, Дойджашвили Д. Объективная сторона превышения власти или служебных полномочий // Советская юстиция, 1989, № 22, Стренин А. Проблемы ответственности за умышленное неисполнение должностным лицом своих служебных полномочий // Уголовное право, 2003, № 1, էջեր 55-56:

²³ *Տե՛ս, օրինակ՝* Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. В.М. Лебедева. М., 2004, էջ 733, Снежко А.С. Превышение должностных полномочий: Дис... канд. юрид. наук. Краснодар, 2004, էջ 52:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են նաև հանրորեն վտանգավոր *հետևանքի առաջացումը և պատճառական կապն* այդ հետևանքի և պաշտոնատար անձի համապատասխան գործողության միջև, որոնց բովանդակությունն արդեն բացահայտվել է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը քննարկելիս: Այս առումով հարկ է հավելել միայն, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքում *գույքային էական վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը*:

Պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է նաև, որ պաշտոնատար անձի կողմից կատարված գործողություններն *անմիջականորեն կապված լինեն նրա ծառայողական գործունեության հետ*, երբ նա հանդես է գալիս որպես պաշտոնատար անձ: Հակառակ պարագայում (երբ պաշտոնյան հանդես է գալիս որպես մասնավոր անձ և այդ ընթացքում հակաիրավական արարքներ է կատարում) նրա արարքը չի կարող որակվել որպես պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն: Նման դեպքերում արարքը որակվում է այլ հոդվածներով: Օրինակ եթե ոստիկանը կենցաղային շարժառիթով ծեծի է ենթարկում իր հարևանին, նրա արարքը, համապատասխան հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակվի որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն՝ ծեծի հանցակազմով:

Քննարկվող հանցագործության *սուբյեկտիվ կողմը* բնութագրվում է մեղքի *դիտավորյալ* (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի) ձևով: Բացի այդ, սուբյեկտիվ կողմը բնութագրող կարևոր հատկանիշ է *ակնհայտությունը*, ինչը ենթադրում է, որ պաշտոնատար անձը պետք է գիտակցի, որ դուրս է գալիս օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

Այս առումով հարկ է նշել, որ պաշտոնեական լիազորություններն անցնելու սուբյեկտիվ կողմը թե՛ նախկինում և թե՛ մեր

օրերում միանշանակ չի ընկալվել քրեագետների կողմից: Առավել տարածված մոտեցման համաձայն՝ տվյալ հանցանքը կարող է կատարվել միայն դիտավորությամբ: Սակայն որոշ գիտնականներ և պրակտիկ աշխատողներ չեն բացառում տվյալ արարքն անզգուշությամբ կամ մեղքի երկու ձևով կատարելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով օրենսդրական համապատասխան փոփոխությունների անհրաժեշտությունը:²⁴

Այսպես, Ա.Ա. Պիոնտկովսկին գրում էր՝ «...տվյալ հանցագործության մեղքի ձևը, կախված հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի վերաբերմունքից, կարող է բնութագրվել ինչպես ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ, այնպես էլ հանցավոր ինքնավստահությամբ: Չի բացառվում նաև, հանցավոր անփութությունը»:²⁵ Սակայն այս մոտեցումը, մեր կարծիքով, աչքի է ընկնում օբյեկտիվ մեղսանացման տարրերով, որն արգելվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 9-ի 2-րդ մասով: Բանն այն է, որ իրականում պաշտոնատար անձը չի կարող ակնհայտորեն դուրս գալ իր պաշտոնական լիազորությունների շրջանակից, եթե այդ ակնհայտությունն իր կողմից չգիտակցվի: Այլ կերպ ասած, ակնհայտության հատկանիշը վկայում է տվյալ հանցանքը միայն դիտավորությամբ կատարելու հնարավորության մասին:

Այս առումով դժվար է համաձայնել նաև Դ. Դոիջաշվիլու կարծիքին, որի համաձայն՝ «...պաշտոնական լիազորությունների շրջանակից դուրս գալու ակնհայտությունը պետք է դասել տվյալ հանցակազմի բացառապես սուբյեկտիվ կողմի հատկանիշների շարքը»:²⁶ Բանն այն է, որ տվյալ դեպքում հանցավորն, իրոք, պետք է գիտակցի իր լիազորությունների սահմանն անցնելու հանգամանքը: Հակառակ պարագայում, ինչպես արդեն նշվել է, արարքը չի կարող որակվել որպես պաշտոնա-

²⁴ *Տե՛ս նաև՝ Снежко А.С. Превышение должностных полномочий: Диссерт... канд. юрид. наук. Краснодар, 2004, էջ 89:*

²⁵ *Տե՛ս՝ Курс советского уголовного права / Под ред. А.А. Пионтковского, П.С. Ромашкина, В.М. Чиквадзе. Т. VI. М., 1971, էջ 47:*

²⁶ *Տե՛ս՝ Дойджашвили Д. Объективная сторона превышения власти или служебных полномочий // Советская юстиция, 1989, № 22, էջ 25:*

կան լիազորությունների անցում: Սակայն, արդյոք միայն սուբ-յեկտիվ կողմի բացահայտումը բավարար է արարքի ճիշտ որակման համար: Բնականաբար՝ ոչ: Պահանջվում է նաև օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների բացահայտումը: Տվյալ դեպքում խոսքը պաշտոնատար անձի գործողությունների արտաքին դրսևորման օրենսդրական ձևակերպման մասին է, որն օրենքում նկարագրված է «լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկող» հասկացության միջոցով:

Այս կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Արմեն Ալբերտի Ունուսյանի վերաբերյալ թիվ ՎԲ-151/07 գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշման մեջ դատարանը նշել է՝ «... Անհրաժեշտ է նաև բացահայտել նկարագրված հանցակազմը բնութագրող այնպիսի պարտադիր հատկանիշի առկայությունը, ինչպիսին է պաշտոնատար անձի կողմից օրենքով իրեն վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից ակնհայտորեն դուրս գործողություններ կատարելը: Սա նշանակում է, որ պաշտոնատար անձը պետք է հստակ գիտակցի, որ գործում է օրենքով իրեն վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից բացահայտ դուրս»:²⁷

ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 2-րդ մասում որպես հանցագործության ծանրացնող հանգամանք է նախատեսված նույն արարքի կատարումը, որը զուգորդվել է ***բռնությամբ, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով:***

Ինչ վերաբերում է բռնությամբ զուգորդված պաշտոնական լիազորությունների անցմանը, ապա պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ տվյալ երևույթի քրեաիրավական համընդգրկուն հասկացության սահմանման բազմաթիվ փորձեր են կատարվել: Մասնավորապես, Լ.Վ. Սերոյուկի կարծիքով՝ «... բռնությունը մարդու (կամ մարդկանց որոշակի խմբի) վրա այլ անձի կողմից արտաքին, դիտավորյալ, հակաիրավական ներգործություն է, որն իրականացվում է տուժողի (տուժողների) կամքին հակառակ և կարող է օրգանական, ֆի-

²⁷ Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2009: Հ. 1, էջ 207:

գիղղգիական կամ հոգեկան վնաս պատճառել նրան (նրանց) կամ սահմանափակել նրա (նրանց) կամարտահայտության կամ գործողությունների ազատությունը».²⁸

Սակայն հանցավոր բռնության հանրային վտանգավորությունը կայանում է նրանում, որ վերջինս ոչ թե «կարող է» մարդուն որոշակի վնաս պատճառել, այլ իրականում կապված է նրան ֆիզիկական կամ հոգեկան բնույթի վնաս պատճառելու հետ: Այդ իսկ պատճառով, մասնագիտական գրականության մեջ բռնությունն ավանդաբար ընդունված է բաժանել երկու տեսակի՝ ֆիզիկականի և հոգեկանի:²⁹ Ըստ այդմ, «բռնություն» հասկացությունը կարող է ընկալվել երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով այն ընդգրկում է վերոհիշյալ երկու տեսակները, իսկ նեղ իմաստով նույնացվում է միայն ֆիզիկական բռնության հետ:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում տվյալ հասկացությունն օգտագործվում է նեղ իմաստով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ օրենքում օգտագործվում է «բռնություն» հասկացությունը (այդ թվում՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 2-րդ մասում), պետք է հասկանալ միայն ֆիզիկական բռնությունը: Այսինքն, հոգեկան բռնությունը (ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքը) քննարկվող հանցակազմի հատկանիշ չէ, և դրա կիրառման դեպքում արարքը պետք է որակվի քր. օր.-ի հոդված 309-ի ոչ թե 2-րդ, այլ 1-ին մասով: Բանն այն է, որ բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան հանցակազմի հատկանիշներ են թե՛ ֆիզիկական բռնությունը և թե՛ դրա գործադրման սպառնալիքը (օրինակ՝ բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության և այլն), այդ հանցամասններն օրենքով ուղղակիորեն նախատեսված են («բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով» արտահայտությամբ): Հետևաբար, եթե ՀՀ քր. օր.-ի համապատասխան հոդվածում (այդ թվում՝ հոդված 309-ի երկրորդ մա-

²⁸ *Տե՛ս՝ Сердюк Л.В. Насилие: криминологическое и уголовно-правовое исследование. М., 2002, էջ 22:*

²⁹ *Տե՛ս նաև՝ Иванова В.В. Преступное насилие: Учебное пособие для вузов. М, 2002, էջ 29, Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами. М., 1969, էջեր 8, 13:*

սում) որպես հանցագործության հատկանիշ նախատեսված է միայն «բռնության գործադրումը», ապա դրա գործադրման սպառնալիքի՝ որպես տվյալ հանցագործության հատկանիշի մասին խոսք լինել չի կարող: Այս առումով, թերևս, կարելի է առաջարկել ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքների շարքում ավելացնել նաև արարքը բռնություն գործադրելու սպառնալիքով կատարելը:

Բռնության հասկացության մեկնաբանությանն է անդրադարձել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով 2012 թվականի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետում դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «... ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում նկարագրված են բռնության տարբեր դրսևորումներ, որոնց թվին են դասվում ծեծը, խոշտանգումը և ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում որպես ինքնուրույն հանցակազմ կամ հանցակազմի որակյալ հատկանիշ կամ հանցանքի կատարման եղանակ նախատեսված բռնի այլ գործողությունները, որոնք նկարագրված են որպես բռնության կիրառում, բռնության սպառնալիք, այլ բռնություն, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, ֆիզիկական ցավ, ուժեղ ցավ, հոգեբանական բռնություն և այլն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»:³⁰

³⁰ Տե՛ս՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու. 2012 թ. – Եր., 2013, Հատոր 4, էջեր 400-415:

Հարկ է նշել նաև, որ պաշտոնեական լիազորություններն անցնելը, **որը զուգորդվել է բռնությամբ**, ընդգրկում է տուժողին հարվածելու, հրելու, մազերից քարշ տալու, կսմթելու, ձեռքերը ոլորելու, ծեծելու, նրա առողջությանը թեթև և միջին ծանրության վնաս հասցնելու, ինչպես նաև ֆիզիկական բռնություն կիրառելու այլ դեպքերը: Այսինքն, նման պարագաներում արարքը որակվում է միայն որպես ծանրացնող տվյալ հանգամանքի առկայությամբ պաշտոնեական լիազորությունների անցում:

Իրավիճակն այլ է տուժողի առողջությանը ծանր վնաս հասցնելու կամ սպանության դեպքերում: Մասնավորապես, եթե պաշտոնեական լիազորությունների անցումը զուգորդվում է այնպիսի բռնությամբ, որի արդյունքում տուժողի առողջությանը ծանր վնաս է պատճառվում կամ նա սպանվում է, ապա արարքը պետք է որակել համապատասխան հանցագործությունների համակցության՝ որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 2-րդ մասով նախատեսված՝ պաշտոնեական լիազորությունների բռնությամբ զուգորդված անցում (եթե, իհարկե, տվյալ արարքն անզուշությամբ չի առաջացրել այլ ծանր հետևանքներ) և սպանություն կամ դիտավորությամբ առողջությանը ծանր վնասի պատճառում:

Ինչ վերաբերում է **գեների կամ հատուկ միջոցների գործադրմանը**, ապա պետք է նշել, որ իրավապահ մարմինների կողմից հանրավտանգ այդ առարկաների կիրառմանն առնչվող հարցերը նախ և առաջ ամրագրում են ստացել միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է ՄԱԿ-ի 1948 թվականի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի Եվրոպական կոնվենցիան: ՀՀ Սահմանադրության հոդված 6-ի համաձայն՝ նշված փաստաթղթերը կազմում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և գերակայում են ներպետական օրենսդրության նկատմամբ:

Բացի դրանից, ՀՀ-ն ստորագրել է իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի գործադրմանը վերաբերող հանրա-

Ճանաչ այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի 1979 թվականի «Իրավապահ պաշտոնյաների վարքագծի կանոնները», ՄԱԿ-ի 1990 թվականի «Իրավապահ պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքները» և «Ոստիկանության էթիկայի մասին» 2001 թվականի Եվրոպական կանոնակարգը: Վերջիններս, սակայն, չունեն համապարտադիր ուժ: Դրանք ընդամենը պարունակում են ուժի գործադրման (այդ թվում՝ զենքի կամ հատուկ միջոցների կիրառմամբ) ոլորտում տարբեր պետությունների իրավապահ մարմինների համար խորհրդատվելի (ակնկալվող) գործելակերպի որոշակի մոդելներ:

Հիշյալ պահանջները և սկզբունքները արտացոլվում են ազգային օրենսդրությունում՝ համապատասխան իրավական ակտերով ապահովելով իրավապահ մարմինների գործողությունների իրավաչափությունը, հետևաբար նաև՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մասնավորապես, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են մի շարք օրենքներ, որոնցում մանրամասնորեն կարգավորված են հրազեն կամ հատուկ միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը («Ներքին զորքերի մասին» 1997թ., «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» 1998թ., «Զենքի մասին» 1998թ., «Ոստիկանության մասին» 2001թ. օրենքները): Տվյալ բնագավառի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի շարքը կարելի է դասել նաև ՀՀ կառավարության 11.01.2007թ. «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» թիվ 151-Ն որոշումը և ՀՀ ոստիկանության պետի 30.05.2011թ. «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգի մասին» թիվ 1-Ն հրամանը և այլն:

Վերոհիշյալ իրավական ակտերի վերլուծությունը ցույց է

տալիս, որ նշված միջոցները կիրառելու հիմքերի զգալի մասը կապված է անհրաժեշտ պաշտպանության և հանցանք կատարած անձին բռնելու իրավիճակների հետ, որոնց վերաբերյալ հարցերը կարգավորվում են ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 42-ի և 43-ի դրույթներով: Հետևաբար, բոլոր այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի կողմից, իրավաչափության պայմանների խախտմամբ, զենք կամ հատուկ միջոցներ են գործադրվում, ինչն էլ առաջացնում է հանրորեն վտանգավոր հետևանքներ, և կապված չէ արարքի հանցավորությունը բացառող որևէ հանգամանքի սահմանազանցման հետ, ***պետք է համարել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին էական վնասի պատճառում և որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 2-րդ մասով:*** Ընդ որում, կախված առաջացող հետևանքների բնույթից՝ արարքը կարող է որակվել նաև համապատասխան հանցագործությունների համակցությամբ:³¹

Քննարկվող հարցերի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Արմեն Ալբերտի Ունուսյանի վերաբերյալ թիվ ՎԲ-151/07 գործով 2007 թ. օգոստոսի 30-ի որոշման մեջ դատարանն արձանագրել է՝ ***«... առկա են եղել օրենքով նախատեսված պայմանները, որոնց առկայությամբ Ա. Ունուսյանը կարող էր զենք օգտագործել: Հետևաբար, նրա արարքում բացակայում է ... հանցակազմը»***:³²

Այսպիսով, պաշտոնական լիազորություններն անցնելու՝ ***զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով*** զուգորդված լինելը նշանակում է, որ հանցավորը, կատարելով ակնհայտորեն իր լիազորությունների շրջանակից դուրս ելնող գործողություններ, միաժամանակ ***նպատակային նշանակությամբ օգտագործում է (գործի է դնում)*** վերոհիշյալ առարկաները (դրանցից մեկը): Այս

³¹ *Տե՛ս նաև՝ Сборник постановлений Пленума и определений коллегий Верховного Суда СССР по уголовным делам 1959-1971 гг. / Под ред. Г.З. Анашкина. М., 1973, էջեր 282-283:*

³² *ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով 2006-2008 թթ. որոշումների ժողովածու: Եր.: Ասողիկ, 2009, էջ 208:*

ծանրացնող հանգամանքի նախատեսումը պայմանավորված է նրանով, որ զենքի կամ հատուկ միջոցների գործադրմամբ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերում էապես մեծանում է արարքի վտանգավորությունը, ինչը զխավորապես պայմանավորված է անձանց ավելի ծանր վնաս պատճառելու հավանականության մեծացմամբ: Բացի դրանից, նշված առարկաների գործադրումը վկայում է, որ նման դեպքերում հանցավորն առավել հանդուգն է և լկտի ու պատրաստ է ճնշելու բոլոր նրանց, ովքեր կփորձեն խանգարել իրեն:

Ընդ որում, քննարկվող դեպքերում, որպես կանոն, խոսքը համապատասխան պաշտոնատար անձին օրինական հիմքերով հատկացված զենքի կամ հատուկ միջոցի մասին է: Չի բացառվում, սակայն, որ նշված անձինք գործադրեն իրենց մոտ ապօրինի գտնվող զենքը (հրազենը կամ գազային, սառը կամ նետողական զենքը): Նման պարագաներում արարքը պետք է որակել համապատասխան հանցագործությունների համակցությամբ՝ որպես զենքի գործադրմամբ պաշտոնեական լիազորությունների անցում և ապօրինի զենք պահել կամ կրել (ՀՀ քր. օր.-ի հոդված 235):

Իրավիճակն այլ է հատուկ միջոցներն ապօրինի օգտագործելու պարագայում: Բանն այն է, որ հատուկ միջոցների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ:

ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ի 3-րդ մասում նախատեսված է քննարկվող հանցագործության առավել վտանգավոր տեսակը՝ նույն արարքի կատարումը, որն **անզգուշությամբ ծանր հետևանքներ է առաջացրել**: Տվյալ ծանրացնող հանգամանքի բովանդակությունը նույնն է, ինչ որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մասնագիտական գրականության և ՀՀ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ պաշտոնեական լիազորություններն անցնելը հարակից այլ հանցագործություններից հստակ չափանիշներով սահմանազատելու անհրաժեշտություն է առաջանում: Մասնավորապես, խոսքը քննարկվող հանցա-

գործությունը *պաշտոնեական լիազորությունները չարաշահելուց և անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ վնաս պատճառելուց* (սպանությունից կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելուց) սահմանազատելու մասին է:

ՀՀ քրեական օրենսդրությունը, ինչպես արդեն նշվել է, առանձին պատասխանատվություն է սահմանում թե՛ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (քր. օր.-ի հոդված 308) և թե՛ դրանք անցնելու (քր. օր.-ի հոդված 309) համար: Ընդ որում, այս արարքները նախատեսող հանցակազմերի օրենսդրական ձևակերպումներն այնպիսին են, որ երբեմն դրանց հստակ սահմանազատումը կապված է որոշակի բարդությունների հետ:

Ավանդաբար, նշված երկու հանցակազմերի հարաբերակցությունը կապված է եղել այն մոտեցման հետ, որ պաշտոնեական լիազորությունների չարաշահումը նախատեսող նորմը դիտարկվել է որպես ընդհանուր պաշտոնեական այլ հանցագործությունների (այդ թվում՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու) համար պատասխանատվություն սահմանող նորմերի համար: Ավելին, որոշ հեղինակներ նշել են, նույնիսկ, պաշտոնեական լիազորությունների անցումն ինքնուրույն հանցակազմով նախատեսելու աննպատակահարմարության մասին:³³ Սակայն, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ «ընդհանուր և հատուկ նորմերի համադրումը ցույց է տալիս, որ ընդհանուրը ծավալով ավելի մեծ է, քան հատուկը (այսինքն՝ ընդգրկում է արարքների առավել լայն շրջանակ), իսկ հատուկն ավելի «հարուստ է», քանի որ պարունակում է առաավել շատ հատկանիշներ, որոնց հաշվին էլ առանձնացվում է ընդհանուրից: Ըստ այդմ, ընդունված է առանձնացնել հետևյալ հիմքերը, որոնցով ընդհանուր նորմը կարող է տարբերվել հատուկից՝ 1) հանցագործության հիմնական անմիջական օբյեկտով (պայմանով, որ լրացուցիչ անմիջական օբ-

³³ *Տե՛ս, օրինակ՝* Светлов А.Я. *Борьба с должностными злоупотреблениями.* Киев, 1970, էջ 113:

յեկտը մնում է նույնը), 2) հանցագործության սուբյեկտով և 3) օբյեկտով կամ սուբյեկտով կողմերի օրենսդրական ձևակերպման առանձնահատկություններով»:³⁴

Վերոգրյալի հիման վրա միանշանակորեն պետք է հերքել, որ պաշտոնեական լիազորությունների չարաշահման և անցման նորմերը հարաբերակցվում են որպես ընդհանուր և հատուկ: Մինևույն ժամանակ, քննարկվող հանցագործությունները հստակորեն տարբերվում են իրարից օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով: Մասնավորապես.

1. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման և անցման հանցակազմերի հիմնական տարբերությունն այն է, որ չարաշահման դեպքում պաշտոնատար անձը գործում է **իր լիազորությունների շրջանակում** (իրականացնում է լիազորություն, որն ընդհանուր առմամբ նրան վերապահված է), սակայն օգտագործում է դրանք ծառայության շահերին հակառակ: Մինչդեռ, պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքում հանցավորն **ակնհայտորեն դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից:**

2. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմը բնութագրվում է **ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ:** Գործողությամբ հանցանքը կատարելու դեպքում պաշտոնատար անձը ակտիվորեն օգտագործում է իր ծառայողական լիազորությունները, իսկ անգործության դեպքում՝ դիտավորությամբ չի կատարում պարտականությունները: Մինչդեռ, պաշտոնեական լիազորություններն անցնելը կարող է կատարվել **միայն գործողությամբ:**

3. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության **չարժառիթը՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը:** Մինչդեռ, պաշտոնեական լիազորությունների անցման պարագայում հանցագործության շարժառիթն արարքի որակման համար **որևէ նշանակություն չունի:**

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հար-

³⁴ *Տե՛ս, օրինակ՝ Горелик А.С. Конкуренция уголовно-правовых норм. Красноярск, 1998, էջ 15:*

ցը, թե ինչպե՞ս պետք է որակել պաշտոնատար անձի կողմից անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ հանցանք կատարելու դեպքերը: Այսպիսի դեպքերում, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, պաշտոնատար անձի արարքը **պետք է որակել միայն որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն**՝ անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ հանցանքի կատարում:³⁵

Տվյալ մոտեցումը բխում է նաև ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդվածներ 42-ի և 43-ի բովանդակությունից: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 42-ի 3-րդ մասի համաձայն՝ «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց, կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնեական դիրքից»: Իսկ ՀՀ քր. օր.-ի հոդված 43-ի 4-րդ մասը սահմանում է՝ «Հանցանք կատարած անձին բռնելու իրավունք, դրա համար հատկապես լիազորված անձանցից բացի, ունեն նաև տուժողը և այլ անձինք»:

Բանն այն է, որ հանցանք կատարած անձանց բռնելու և նրանց արարքներից անհրաժեշտ պաշտպանության դիմելու հատուկ լիազորություններով (այդ թվում՝ պարտականություններով) օժտված պաշտոնատար անձինք պարտավոր են գործել անզամ այն դեպքերում, երբ վտանգ է սպառնում նրանց կյանքին կամ առողջությանը: Հենց նրանք են, որպես կանոն,

³⁵ *St'u, op'hinal' Sичинава И.Р. Причинение вреда при задержании лица, совершившего преступление и превышение должностных полномочий: проблемы разграничения // Известия вузов. Северо-кавказский регион / Общественные науки, 2003, № 12, էջեր 88-89, Волженкин Б.В. Служебные преступления. М., 2000, էջ 109., Алтухов С.А. Криминологическая характеристика и профилактика преступлений, совершаемых сотрудниками милиции. Автореф. дис... канд. юрид. наук. Ростов н/Д, 2000, էջ 9:*

բռնում առավել վտանգավոր հանցագործներին կամ դիմակայում նրանց հանրորեն վտանգավոր ոտնձգություններին՝ վտանգելով սեփական կյանքը: Հետևաբար, այն դեպքերում, երբ իրավապահ մարմինների աշխատակիցները հանցանք կատարած անձանց բռնելիս կամ նրանց ոտնձգություններից պաշտպանվելիս (այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հասարակության կամ պետության շահերը պաշտպանելիս) նրանց պատճառում են վնաս, որն ակնհայտորեն չի համապատասխանում ոտնձգության բնույթին կամ վտանգավորությանը, կամ պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ, նրանք պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն ընդհանուր հիմունքներով: Այլ կերպ ասած, նրանց վիճակը չի կարող վատթարացվել միայն այն պատճառով, որ նշված անձինք հանդիսանում են իշխանության ներկայացուցիչ: Հակառակ պարագայում կստացվի, որ նրանց նկատմամբ, կախված պաշտոնեական դիրքից, ցուցաբերվում է խտրական վերաբերմունք:

Ամփոփելով ասվածը՝ ընդգծենք այն հիմնական հատկանիշները, որոնցով պետք է սահմանազատել պաշտոնեական լիազորություններն անցնելու և անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ վնաս պատճառելու (սպանության կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու) հանցակազմերը.

1. Անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ վնաս պատճառելու դեպքերում պաշտոնատար անձը գործում է իր իրավասության շրջանակներում, բայց խախտում է արարքի հանցավորությունը բացառող վերոհիշյալ հանգամանքների իրավաչափության համապատասխան պայմանները: Իսկ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքում նա ակնհայտորեն դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից, կատարում է գործողություններ, որոնք իրավական որևէ հիմք չունեն:

2. Անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած

րած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ վնաս պատճառելու սուբյեկտ կարող են հանդիսանալ ինչպես պաշտոնատար, այնպես էլ այդպիսիք չհամարվող անձինք: Իսկ պաշտոնեական լիազորություններն անցնելու սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն պաշտոնատար անձինք:

3. Անհրաժեշտ պաշտպանության կամ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ վնաս պատճառելու դեպքերում հանցավոր իրադրությունն առաջանում է տուժողի հանրորեն վտանգավոր վարքագծի հետևանքով: Իսկ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքում այդ իրադրությունը, որպես կանոն, առաջացնում է պաշտոնատար անձը:

1.4. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

«Ձ քրեական օրենսգրքի հոդված 310-ի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը *պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելն է կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ:*

Տվյալ արարքը, փաստորեն, կոռուպցիայի յուրատեսակ դրսևորում է, որով խախտվում են պետական ծառայության սահմանված կարգն ու սկզբունքները՝ դրանով իսկ վնաս պատճառելով քրեական օրենսդրությամբ պաշտպանվող հասարակական հարաբերություններին:

Վերոհիշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանցագործության *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է օրենքով սահմանված արգելքին հակառակ, հետևյալ գործողություններից թեկուզ մեկը կատարելով՝

1) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելով,

2) անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելով:

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու «ձեռնարկատիրական գործունեություն», «ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն», «ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրել» և «ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպության կառավարմանը մասնակցել» հասկացությունները:

Ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 2-ով, որի համաձայն՝ «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Մինևույն ժամանակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի դրույթներին համապատասխան՝ «... ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների՝

ա) անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

բ) գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ոչ նյութական ակտիվների օտարումն ու տոկոսների ստացումը,

գ) բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության գործունեության շրջանակներում վարձու աշխատող չհանդիսացող ընտանիքի անդամի գործունեությունը»:

Վերոգրյալի հիման վրա, **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն** ասելով՝ պետք է հասկանալ **միայն առևտրային իրավաբանական անձ հանդիսացող ընկերությունները, որոնց գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է և մասնակիցների միջև այն բաշխելը:**

Բանն այն է, որ շահույթ ստանալը չի կարող ոչ առևտրային իրավաբանական անձի (պետական ոչ առևտրային կազմակերպության, հիմնադրամի, հասարակական կազմակերպության և այլն) գործունեության հիմնական նպատակը լինել: Ուստի, նման կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը չի կարող ձեռնարկատիրական համարվել: Հետևաբար, ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելը կամ դրա կառավարմանը մասնակցելը որևէ պարագայում չի կարող որակվել որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 310-ով նախատեսված հանցագործություն:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը հասկացվում է որպես այդ կազմակերպության ստեղծում, որն իրականացվում է համապատասխան հիմնադիր փաստաթղթերի պետական գրանցման միջոցով: Ընդ որում, տվյալ կազմակերպությունը հիմնադրելը սկսվում է համապատասխան փաստաթղթերը (կանոնադրությունը կամ հիմնադիր պայմանագիրը) նախապատրաստելու, իսկ ավարտվում՝ դրա պետական գրանցումն իրականացնելու պահից: Հետևաբար, ՀՀ քր. օր.-ի հոդված 310-ի իմաստով ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրել ասելով՝ պետք է հասկանալ դրա պետական գրանցում:***

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպության կառավարմանը մասնակցել ասելով՝ պետք է հասկանալ պաշտոնատար անձի ներգրավված մասնակցությունը տվյալ կազմակերպության կառավարման մարմինների (ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի, գործադիր մարմնի, վերստուգիչ հանձնաժողովի) գործունեությանը, ղեկավար մարմինների ընտրության, դրանց որոշումների կայացման հարցերում դերակատարում ունենալը և այլն: Ընդ որում, քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի իմաստով նման կազմակերպության ***կառավարմանը պաշտոնատար անձը կարող է մասնակցել ինչպես անձանք, այնպես էլ վստահված անձի միջոցով:*** Այդպիսին կարող է համարվել նա, ով համապատասխան պաշտոնատար անձի հետ ունեցած իր ազգակցական, բարեկամա-

կան, ընկերական կամ այլ հարաբերությունների կամ նյութական կամ այլ կախյալ վիճակով պայմանավորված կապերի ուժով վայելում է տվյալ պաշտոնյայի վստահությունը, այսինքն **պատրաստ է դեկավարվելու նրա նախանշած ուղենիշներով:**

Այս առումով, սակայն, արդարացված չէ օրենսդրի այն մոտեցումը, որի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելու կապակցությամբ անտեսվել է վստահված անձի միջոցով նման կազմակերպություն ստեղծելու հանգամանքը: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 310-ի դիսպոզիցիայում այդ իրավիճակները հստակ սահմանազատված են «... ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելն է կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, ...» ձևակերպմամբ: Ստացվում է, որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում **վստահված անձի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը չի կարող որակվել որպես քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործություն**, ինչի հետ դժվար է համաձայնել:³⁶ Այնուամենայնիվ, նման դեպքերը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում, կարող են որակվել որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում կամ դրանց անցում:

Միևնույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի հոդված 310-ի բովանդակությունից բխում է, որ քննարկվող հանցակազմի իմաստով պարտադիր է, որպեսզի պաշտոնատար անձի վերոհիշյալ գործողությունները կապված լինեն համապատասխան կազմակերպությանն **արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու** հետ: Սրանց օրինակ կարելի է համարել համապատասխան կազմակերպությանը հարկերի կամ մաքսատուրքերի վճարման հետ կապված որոշակի արտոնյալ պայմաններ տրամադրելը, հատուկ թույլտվության (լիցենզիայի) տրամադրման հեշտացված կարգ սահմանելը,

³⁶ *Տե՛ս նաև՝ Гаухман Л.Д. Законодательное обеспечение борьбы с коррупцией // Журнал российского права, 2000, № 12, էջեր 7-8:*

տվյալ կազմակերպության մրցակիցների համար արհեստածին արգելքներ ստեղծելը և այլն:

Ասվածից, սակայն, կարելի է հետևություն անել, որ այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն է հիմնադրում կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանն է մասնակցում, ***սակայն այդ արարքները կապված չեն այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ, քննարկվող հանցակազմը բացակայում է:***

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելն ավարտված է համարվում օրենքում նկարագրված վերոհիշյալ գործողությունները կատարելու պահից, անկախ որևէ հետևանքի առաջացումից: Այսինքն, տվյալ հանցագործությունը նախատեսված է ***ձևական հանցակազմով:*** Դա նշանակում է նաև, որ քննարկվող հանցագործության ***սուբյեկտիվ կողմը*** կարող է դրսևորվել միայն ***ուղղակի դիտավորությամբ:***

Հանցագործության ***սուբյեկտն*** այն պաշտոնատար անձն է, ով, օրենքի համաձայն, իրավունք չունի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Մասնավորապես, նման սահմանափակումներ են նախատեսված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և պետական մարմինների պաշտոնատար անձանց կարգավիճակին վերաբերող իրավական ակտերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության հոդված 65-ի 1-ին մասի համաձայն՝ ***պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:*** Օրենսդրական նմանատիպ կարգավորում է նախատեսված նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 1-ին մասով, որի համաձայն՝ ***հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատա-***

րել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Պաշտոնատար անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացումը սահմանափակող պահանջներն իրավական ամրագրում են ստացել նաև «Քաղաքացիական ծառայության մասին», «Դատական ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Այսպիսով, պաշտոնատար անձանց բնականոն գործունեության ապահովմանն ուղղված նշված սահմանափակումները ներպետական օրենսդրության շրջանակներում բավական տարածված են: Դրանք կոչված են բացառելու պաշտոնատար անձանց գործառույթային առաքելության իրականացման անհարկի կաշկանդվածությունը, պաշտոնեական դիրք-գործարարական գործունեություն կապի ի չարս գործադրումը:

Հարկ է նշել նաև, որ այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը կեղծ ձեռնարկություն է ստեղծում՝ առանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մտադրության (վարկեր ստանալու, հարկերից ազատվելու կամ այլ նպատակներով), ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես կեղծ ձեռնարկատիրություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 189) և պաշտոնեական լիազորությունների անցում, քանի որ դրանով միաժամանակ ակնհայտորեն դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից:

1.5. Կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը

Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում հաճախ կարելի է հանդիպել «կաշառակերություն» եզրույթի գործածմանը, ինչը կապված է կոռուպցիայի առավել տարածված և վտանգավոր դրսևորումներից մեկը բնութագրելու հետ:

Հայաստանի Հանրապետության քրեական գործող օրենսդրությունը պատասխանատվություն է սահմանում կաշառակերության գործընթացի մաս կազմող փոխկապակցված տարբեր արարքների՝ կաշառք ստանալու, տալու և կաշառքի միջնորդության համար: Հենց այդ հանգամանքն էլ հանդիսանում է նշված հանցագործությունների լատենտայնության բարձր մակարդակը պայմանավորող հիմնական գործոններից մեկը: Բանն այն է, որ տվյալ գործընթացի բոլոր մասնակիցներն էլ սեփական շահերն են հետապնդում և խիստ շահագրգռված են համապատասխան հանցավոր գործարքի գաղտնիությունն ապահովելու մեջ: Հետևաբար, բացասական այս երևույթի տարբեր դրսևորումները մեկ պարագրաֆի շրջանակներում քննարկելու անհրաժեշտություն է առաջանում:

1.5.1. Կաշառք ստանալը

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 311-ի 1-ին մասի համաձայն՝ կաշառք ստանալ է համարվում *պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:*

Տվյալ հանցագործության էությունն այն է, որ պաշտոնատար անձը այլ անձանցից ապօրինի վարձատրություն է ստանում՝ իր պաշտոնի հետ կապված գործունեության համար: Այս առումով անհրաժեշտ է, նախ, պարզել, թե ինչն է համարվում կաշառք, այսինքն՝ *կաշառք ստանալու առարկա*, որը տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է:

ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի բովանդակությունից հետևում է, որ կաշառքի առարկա են համարվում *դրամը, գույքը, գույքի*

նկատմամբ իրավունքը, արժեթուղթը կամ որևէ այլ առավելությունը: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնականում կաշառքի առարկա են հանդիսանում դրամը և շարժական այլ գույքը:

Դրամը (Հայաստանի Հանրապետության արժույթը, արտարժույթը) հասկացվում է որպես ցանկացած գույքի արժեքի համարժեք չափի միավոր, վճարման միջոց: Այլ կերպ ասած, դրամը յուրահատուկ ապրանք է, որն ընդհանրական համարժեքի դեր է կատարում:

Գույքը նյութական աշխարհի առարկա է, իր, որն ունի որոշակի հատկանիշներ՝ քաշ, չափ, քանակ և այլն: Դրա օրինակ են համարվում արդյունաբերական և այլ տեսակի ապրանքները, թանկարժեք մետաղներն ու քարերը, դրանցից պատրաստված զարդերը և այլ արժեքները: Ընդ որում, տվյալ դեպքում հասկացվում են ոչ միայն նյութական, այլև պատմական, մշակութային, գեղարվեստական արժեքները:

Բացի դրանից, կաշառակերության դրսևորումների քրեաիրավական որակման առումով նշանակություն չունի, թե գույքն ինչ կարգավիճակով է գտնվում քաղաքացիական շրջանառության մեջ՝ ազատ շրջանառու՞ է, շրջանառությունը արգելվա՞ծ, թե՞ սահմանափակված: Մասնավորապես, կաշառքի առարկա կարող են հանդիսանալ նաև զենքը, թմրամիջոցները, ռադիոակտիվ նյութերը և այլն: Նման դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել նաև համապատասխան արարքները հանցագործությունների համակցությամբ որակելու հանգամանքը: Օրինակ՝ եթե թմրամոլ պաշտոնատար անձը որպես կաշառք ստանում է զգալի չափերով թմրամիջոցներ, նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 268-ով և 311-ով նախատեսված հանցագործությունների համակցությամբ՝ որպես առանց իրացնելու նպատակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերել և կաշառք ստանալ:

Գույքի նկատմամբ իրավունքը հասկացվում է որպես գույք համարվող վերոհիշյալ նյութական կամ այլ արժեքների տիրապետման, տնօրինման կամ օգտագործման իրավական հնարավորություն: Օրինակ՝ տրանսպորտային միջոցը, բնակարա-

նը կամ ամառանոցը ժամանակավորապես տիրապետելու կամ օգտագործելու թույլտվություն տրամադրելը:

Արժեթուղթը պատշաճ կերպով ձևակերպված այն փաստաթուղթն է, որում վավերացված է գույքային իրավունք, որը կարող է իրականացվել միայն տվյալ փաստաթղթի ներկայացման դեպքում: Արժեթղթերը լինում են երեք տեսակի՝

1) **անվանական**, որում նշված գույքային իրավունքը կարող է իրականացնել միայն այն անձը, ում անունը հիշատակված է տվյալ փաստաթղթում (չեկը, խնայդրամարկդի գրքույկը, տուրիստական ուղեգիրը և այլն),

2) **ներկայացուցչական (ըստ ներկայացնողի)**, որը որևէ անձի անունով դուրս գրված չէ, և որի ներկայացման դեպքում տրամադրվում է հատուցում տվյալ արժեթուղթը ներկայացրած ցանկացած անձին (շահած դրամարկդային վիճակախաղի կտրոնը կամ լոտոյի տոմսը, փոխառության պարտատոմսը և այլն).

3) **օրդերային**, որը տրվում է որոշակի անձի անունով, ում իրավունք է վերապահվում արժեթղթում նշված գույքային իրավունքը իրականացնել անձամբ կամ դրա իրականացումը հասարակ մակագրության միջոցով փոխանցել մեկ ուրիշի (օրինակ՝ մուրհակը, որը մեկ անձի՝ ոչնչով չպայմանավորված կարգադրությունն է մուրհակում նշված անձին որոշակի գումար տալու վերաբերյալ):

Արժեթղթերի հատուկ տեսակ են համարվում, օրինակ՝ տարբեր տրանսպորտային միջոցներով երթևեկելու, սպորտային կամ հանդիսադիր միջոցառումներին մասնակցելու չվճարվող միջոցները, որոնք հնարավոր է իրացնել միայն դրանք ներկայացնելով (տալոններ, աբոնեմտային գրքույկներ, աբոնեմենտներ, տոմսեր և այլն): Այդ միջոցները որոշակի **փողի համարժեք են և, անկախ դրանց օգտագործումից, համարվում են կաշառքի առարկա:**

Կաշառքի առարկա, ինչպես արդեն նշվել է, համարվում են նաև **գույքային և ոչ գույքային բնույթի այլ առավելությունները:** Վերջիններս, որպես կանոն, դրսևորվում են պաշտոնատար անձին տարբեր կարգի ծառայություններ մատուցելու ձևով (օ-

րինակ՝ բնակարանը կամ ավտոմեքենան անհատույց վերանորոգելու, պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի անդամի պատվին խնջույք կազմակերպելու, պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին մենագրության կամ գիտական հոդվածի համահեղինակ դարձնելու և այլն): Այլ կերպ ասած, կաշառքի առարկա կարող է համարվել թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային բնույթի ցանկացած առավելություն, այսինքն՝ այն ամենը, ինչով կարելի է կաշառել պաշտոնատար անձին:

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սեքսուալ բնույթի ծառայությունների մատուցումը որպես «այլ առավելություն», հետևաբար՝ նաև կաշառքի առարկա գնահատելու հարցը: Ընդ որում, խոսքը ոչ միայն մարմնավաճառ «հյուրասիրելու», այլև այն դեպքերի մասին է, երբ անձը սեքսուալ բնույթի գործողություններ է կատարում կամ առաջարկում է նման գործողություններ կատարել պաշտոնատար անձի հետ՝ ակնկալելով վերջինից նրա զբաղեցրած պաշտոնի բերումով որոշակի վարքագծի դրսևորում: Քանի որ, ինչպես արդեն նշվել է, կաշառքի առարկա կարող է համարվել այն ամենը, ինչով կարելի է կաշառել պաշտոնատար անձին, *սեքսուալ բնույթի ծառայություններ մատուցելը ևս պետք է գնահատել որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի իմաստով «այլ առավելություն» և որակել որպես պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալ (համապատասխանաբար՝ նաև որպես նման ծառայություն մատուցողի կողմից կաշառք տալ):*

Այլ հարց է, *եթե պաշտոնատար անձը նման առավելություն «շորթի»,* այսինքն՝ շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ հարկադրի նրան սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն: Նման դեպքերում, բնականաբար, *տուժողը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել կաշառք տալու համար, իսկ պաշտոնատար անձի արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությանմը՝ որպես սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրել (ՀՀ քր. օր.-ի հոդված 140) և պաշտոնական լիազորությունների անցում (ՀՀ քր. օր.-ի հոդված 309):*

Ինչ վերաբերում է մարմնավաճառ «հյուրասիրելուն», ապա պետք է նշել, որ այն դեպքերում, **երբ մարմնավաճառը գիտակցում է իր միջոցով պաշտոնատար անձին կաշառելու կամ նրան շնորհակալություն հայտնելու հանգամանքը, նրա արարքը պետք է որակել որպես կաշառք տալու օժանդակություն:**

Հարկ է նշել նաև, որ կաշառակերությունը կարող է իրականացվել ինչպես **բացահայտ**, այնպես էլ **քողարկված** ձևերով, երբ կաշառքի առարկան այնպես է տրամադրվում պաշտոնատար անձին, որպեսզի կողմնակի անձանց համար պարզ չլինի կատարվող գործողությունների իմաստը: Իրավակիրառ պրակտիկայում քողարկված կաշառակերության ավելի հաճախ հանդիպող ձևերն են մոլեխաղում (գրագ, թղթախաղ և այլն) տանուլ տալը, նյութական արժեքներն իբրև պարտքի մարում ներկայացնելը, արժեքավոր գույքը խիստ ցածր գնով վաճառելը կամ հակառակը՝ չնչին արժեք ունեցող գույքը բարձր գնով գնելը, որևէ միջոցառման (ծննդյան տարեդարձ, հարսանյաց հանդես և այլն) կապակցությամբ թանկարժեք նվեր տալը և այլն: Բնականաբար, թվարկված դեպքերում պահանջվում է նաև, որպեսզի համապատասխան պաշտոնատար անձը գիտակցի վերոհիշյալ եղանակներով ապօրինի վարձատրություն ստանալու հանգամանքը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 311-ի առաջին մասի բովանդակությունից հետևում է, որ քննարկվող հանցակազմի **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով հետևյալ գործողություններից թեկուզ մեկը կատարելով՝

- 1) կաշառքի առարկան ստանալով,
- 2) կաշառքի առարկան պահանջելով,
- 3) կաշառքի առարկան ստանալու խոստումով,
- 4) կաշառքի առաջարկն ընդունելով:

Կաշառքը **ստանալ** ասելով՝ պետք է հասկանալ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառքի առարկան ամբողջությամբ կամ մաս-մաս վերցնելը:

Անդրադառնալով կաշառք **պահանջելու** հանցակազմին՝ Էդ. Ջաքարյանի և ուրիշների վերաբերյալ գործով 15.08.2014թ. թիվ

ԵԿԴ/0002/01/13 որոշման 21-րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝ «... սույն հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից պահանջ ներկայացնելով, որը հանդիսանում է կաշառք տվողի օգտին որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու անվերապահ պայման: Պահանջը կարող է արտահայտվել հրամանի, կարգադրության, համոզելու, շահագրգռելու, անձի գիտակցության և կամքի վրա ներագդելու այլ եղանակներով, որը, սակայն, կապված չէ անձի նկատմամբ սպառնալիք գործադրելու հետ...»: Նույն որոշման 22-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ «... պաշտոնատար անձի կողմից ներկայացված ցանկացած պահանջ չէ, որը կարող է վկայել կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշների առկայության մասին: Մասնավորապես, հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվող պահանջը լինի կոնկրետ, առկա և իրական, իսկ այս չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող հանցագործություն համարվել: ... Պահանջի կոնկրետությունը ենթադրում է հստակություն պաշտոնատար անձի կողմից պահանջվող կաշառքի առարկայի և դրա չափերի հարցում: Մասնավորապես, հանցավորի ներկայացրած պահանջը դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի և կաշառքի այլ առարկաների ու դրանց չափերի վերաբերյալ պետք է լինի կոնկրետ և հստակ, կաշառք տվողի համար ակնհայտ, մասնավորապես, վկայի, թե հանցավորը որպես կաշառք ինչ է պահանջում և ինչ չափով է պահանջում: Վերոնշյալ հանգամանքը հատկապես կարևոր է այն առումով, որ կաշառքի առարկան հանդիսանում է հանցակազմի պարտադիր հատկանիշ և կախված դրա չափերից՝ ազդում արարքի որակման վրա: ... Պահանջի իրական լինելը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործի բոլոր փաստական հանգամանքները՝ պահանջի ներկայացման եղանակը, ինտենսիվությունը (օրինակ՝ ներկայացված պահանջը կրկին վերահաստատելը), իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն: Մասնավորապես, պահանջի ար-

տահայտման եղանակից, ինտենսիվությունից և այլ օբյեկտիվ հանգամանքներից կախված՝ կաշառք տվողը պետք է բավարարի հիմքեր ունենա կարծելու, որ պաշտոնատար անձն իր կամ այլ անձի օգտին համապատասխան արարքը կատարելու է միայն ներկայացված պահանջն ի կատար ածելու դեպքում: Ինչ վերաբերվում է կաշառք պահանջող պաշտոնատար անձին, ապա վերջինս ներկայացված պահանջը կատարելու դեպքում պետք է իրական մտադրություն ունենա իր լիազորությունները կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ որոշակի գործողություն կատարել կամ չկատարել կաշառք տվողի օգտին և գիտակցի, որ կաշառքն իրեն տրվում է հենց դրա համար: Ամեն դեպքում պահանջի իրական լինելու հարցը պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ կաշառք տվողի և ստացողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով»:³⁷

Այս առումով, կարծում ենք, *կոնկրետության* և *իրական լինելու* պահանջները պարտադիր պետք է հաշվի առնվեն նաև կաշառքի առարկան ստանալու խոստման և կաշառքի առաջարկն ընդունելու ձևերով կաշառք ստանալու դեպքերում քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար:

ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի բովանդակությունից հետևում է նաև, որ կաշառքը պաշտոնատար անձին տրվում է հետևյալ արարքներից որևէ մեկի համար՝

1) կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի լիազորությունների մեջ մտնող որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար,

2) կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին որևէ գործողություն (անգործություն) կատարելուն նպաստելու համար, որը պաշտոնատար անձը կարող է անել՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար,

³⁷ Տե՛ս՝ *Էր. Ջաքարյանի, Գ. Գևորգյանի և Վ. Վարդանյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.08.2014թ. թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշումը, <http://datalex.am/>:*

4) կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից ապօրինի գործողության (անգործության) համար (<< քր. օր.-ի հոդված 311-ի 2-րդ մաս):

Պաշտոնատար անձի լիազորությունների մեջ մտնող գործողության կամ անգործության համար կաշառքը տրվում է պաշտոնատար անձի այնպիսի կոնկրետ գործողության կամ անգործության կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու համար, որոնք մտնում են պաշտոնատար անձի լիազորությունների մեջ և օրինական են: Փաստորեն, այս դեպքում կաշառքը տրվում է այնպիսի արարքների համար, որոնք պաշտոնատար անձը կարող է կատարել՝ իր լիազորություններն օգտագործելով: Օրինակ՝ երբ դատավորը կամ քննիչը դրամ են պահանջում կամ ստանում անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու կամ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Օրենքը, սակայն, չի սահմանափակվում միայն այն արարքներով, որոնք պաշտոնատար անձը կարող է կատարել՝ իր լիազորություններն օգտագործելով: Կաշառք ստանալու հանցակազմն առկա է նաև այն դեպքում, երբ կաշառքի առարկան տրվում է այնպիսի արարքի համար, որը չի մտնում պաշտոնատար անձի լիազորությունների մեջ, և ինքը չի կարող անձամբ կատարել այն, բայց, **օգտագործելով իր պաշտոնական դիրքը, կարող է նպաստել այլ պաշտոնատար անձանց, պետական ծառայողների կողմից կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձանց օգտին այդպիսի արարքի կատարմանը:** Նման դեպքերում պաշտոնատար անձը, օգտագործելով իր պաշտոնից բխող հեղինակությունը, այլ պաշտոնատար անձանց ու պետական ծառայողների վրա ունեցած իր ազդեցությունը, միջոցներ է ձեռնարկում, որպեսզի վերջիններս կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձանց օգտին որոշակի վարքագիծ դրսևորեն՝ որևէ գործողություն իրականացնեն կամ ձեռնպահ մնան դրա կատարումից:³⁸

³⁸ *Տե՛ս նաև՝ Волженкин Б.В., Квашиц В.С., Цагикиан С.Ш. Ответственность за взяточничество. Ереван, 1988, էջեր 100-103:*

Հարկ է նշել նաև, որ պաշտոնատար անձի կողմից իր *ազգակցական կամ ընկերական հարաբերությունների օգտագործումը կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին այլ պաշտոնատար անձի կողմից որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու համար, կաշառք ստանալ չի կարող համարվել*: Նման դեպքերում, եթե տվյալ պաշտոնատար անձը, ով օգտագործում է այլ պաշտոնատար անձանց հետ ունեցած իր ազգակցական կամ ընկերական հարաբերությունները, իրեն տրված նյութական վարձատրության մի մասը հանձնում է այն պաշտոնատար անձին, ով պետք է կաշառք տվողի օգտին որևէ գործողություն (անգործություն) կատարի, ենթակա է պատասխանատվության ոչ թե կաշառք ստանալու, այլ կաշառք ստանալուն հանցակցելու համար: Եթե տվյալ պաշտոնատար անձը իրեն տրված նյութական վարձատրությունը ամբողջությամբ վերցնում է իրեն, ապա, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, կարող է պատասխանատվության ենթարկվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ խարդախության համար:

ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ից բխում է, որ կաշառք ստանալու հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ նյութական արժեքները կամ ծառայությունները տրվում են պաշտոնատար անձին ոչ թե կոնկրետ գործողության կամ անգործության, այլ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար: Ընդ որում, թեև կաշառք ստանալու այս ձևի ժամանակ դրա պայմանների մասին կարող են և նախօրոք չպայմանավորվել, սակայն կողմերի համար պարզ է, որ կաշառքը տրվում է հարկ եղած դեպքում կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին կոնկրետ վարքագիծ դրսևորելու համար:

Ծառայության գծով հովանավորչությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով, օրինակ՝ անհարկի խրախուսմամբ կամ պաշտոնի բարձրացմամբ և այլն: ***Ծառայության գծով թողտվությունն*** ընդհանուր առմամբ դրսևորվում է նրանում, որ պաշտոնատար անձը միջոցներ չի ձեռնարկում կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի թերացումները, խախտումները կամ ապօրինությունները կասեցնելու, խափանելու, բացահայ-

տելու, դրանց համար պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ծառայության գծով հովանավորչությունը կամ թողտվությունը ավելի հաճախ արտահայտվում են ենթականերից կամ վերահսկմանը ենթակա անձանցից պարբերաբար նյութական բնույթի հատուցումներ ստանալու ձևերով: Սակայն կաշառք ստանալու այս տեսակը կարող է առկա լինել նաև այն դեպքերում, երբ կաշառք տվողը պաշտոնատար անձի ենթական չէ, ոչ էլ հսկվում կամ վերահսկվում է նրա կողմից, բայց իր գործունեության բնույթի հետ կապված՝ կարող է հայտնվել տվյալ պաշտոնատար անձի իշխանական լիազորությունների ազդեցության ոլորտում: Օրինակ՝ երբ կազմակերպված հանցավոր խմբի ներկայացուցիչը կաշառք է տալիս պետական որևէ պաշտոնյայի, ենթադրելով, որ անհրաժեշտության դեպքում վերջինս կգործի կաշառքը տվողի կամ նրա ներկայացրած խմբի օգտին և այլն:

Կաշառքը, ինչպես արդեն նշվել է, կարող է տրվել նաև *պաշտոնատար անձի ապօրինի գործողությունների (անգործության)* համար: Ընդ որում, այս իրադրությունը նախատեսված է որպես քննարկվող հանցագործության ծանրացնող հանգամանք: Այս առումով հարկ է նշել, որ ապօրինի են համարվում այն գործողությունները (անգործությունը), որոնք դուրս են գալիս պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակից կամ, թեև մտնում են նրա լիազորությունների շրջանակի մեջ, բայց տվյալ իրադրությունում չէին կարող կատարվել: Այլ կերպ ասած, ապօրինի գործողությունները (անգործությունը) այն արարքներն են, որոնք կապված են պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունների խախտման հետ:

Քննարկվող հանցագործության ավարտման պահի կապակցությամբ նախ և առաջ պետք է նշել, որ կաշառք ստանալն օրենքում նախատեսված է *ձևական հանցակազմով*: Տվյալ հանցագործությունն ավարտված է համարվում կաշառքը ստանալու, այսինքն՝ կաշառքի առարկան վերցնելու կամ պահանջելու կամ ստանալու խոստման կամ կաշառքի առաջարկն ընդունելու պահից՝ անկախ նրանից, պայմանավորված գործողությամբ:

յունները կատարվել են արդյոք կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին (անգործութ-յունը), թե՞ ոչ:

Տվյալ հարցին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ եղ. Ջաքարյանի և ուրիշների վերաբերյալ գործով 15.08.2014թ. թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշման 23-րդ կետում արձանագրելով, որ «... շարադրված չափանիշներին համապատասխանող պահանջի առկայությունն արդեն իսկ իրենից ներկայացնում է ավարտված հանցագործություն: Ընդ որում, քննարկվող հանցագործության համար որևէ նշանակություն չունի, որ ի սկզբանե ներկայացված կոնկրետ և իրական պահանջը հանցավորի կամքից անկախ հանգամանքներում կամ սակարկությունների արդյունքում հետագայում կարող է փոփոխվել»:

ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի ձևակերպումից հետևում է նաև, որ կաշառքը հնարավոր է ստանալ ինչպես անձամբ պաշտոնատար անձի կողմից, այնպես էլ միջնորդի միջոցով: Նման դեպքերում նույնպես ծագում է հանցագործության ավարտի պահը որոշելու հարցը: Կաշառքի առարկան վերցնելու ձևով կաշառք ստանալու կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ արդարացիորեն առավել ընդունելի է համարվում այն մոտեցումը, որ, քանի դեռ միջնորդը կաշառքի առարկան չի հանձնել պաշտոնատար անձին, կաշառք ստանալն ավարտված չէ, որովհետև պաշտոնատար անձը կարող է վերջին պահին հրաժարվել կաշառքն ընդունելուց, կամ էլ միջնորդը կարող է կաշառքի առարկան չհանձնել պաշտոնատար անձին:³⁹

Ինչ վերաբերում է միջնորդի միջոցով կաշառքը պահանջելուն կամ այն ստանալու խոստում տալուն կամ առաջարկն ընդունելուն, ապա նման դեպքերը, մեր կարծիքով, ունեն որոշակի առանձնահատկություն: Մասնավորապես, դրանց պարագայում հանցագործությունն ավարտված է համարվում **պաշտոնատար անձի պահանջը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելու մասին որոշումը միջնորդի կողմից կաշառք**

³⁹ Տե՛ս օրինակ՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 804-805:

տվողին հայտնելու պահից: Հետևաբար, եթե միջնորդին չի հաջողվում նշված հանգամանքների մասին հայտնել կաշառք տվողին, կաշառք ստանալու ավարտված հանցակազմի մասին խոսք լինել չի կարող:

Այս առումով քննարկվող հանցակազմի ճիշտ որակման համար անչափ կարևոր նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե արդյոք հնարավոր է արարքի որակումը որպես կաշառք ստանալու նախապատրաստություն կամ հանցափորձ: Ինչպես արդեն նշել ենք, կաշառք ստանալը ձևակերպված է ձևական հանցակազմի միջոցով, ուստի այն արարքները, որոնք կարող են գնահատվել որպես կաշառք ստանալու փորձ, հազվադեպ են պատահում: Ավելին, քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են *կաշառք պահանջելը կամ դա ստանալու խոստումը կամ դրա առաջարկն ընդունելը*, որպես կանոն, անհնարին են դարձնում համապատասխան արարքները որպես կաշառք ստանալու փորձ որակելը: Բացառություն, թերևս, կարող են կազմել փաստական սխալի (օրինակ՝ երբ պաշտոնատար անձը, ցանկանալով կաշառք ստանալ կոնկրետ ձեռնարկատիրոջից, կաշառքի պահանջը ներկայացնում է ոչ թե նրան, այլ մեկ ուրիշ, պատահական, կողմնակի մարդու) և այն դեպքերը, երբ միջնորդին, իր կամքից անկախ հանգամանքներով, չի հաջողվում հայտնել կաշառք տվողին պաշտոնատար անձի համապատասխան պահանջի կամ խոստման կամ առաջարկն ընդունելու որոշման մասին:

Ինչ վերաբերում է կաշառք ստանալու նախապատրաստությանը, ապա այն, ըստ էության, հնարավոր է, երբ պաշտոնատար անձը միջնորդներ է փնտրում, որոշակի իրադրություն է ստեղծում, որի միջոցով ցանկանում է պոտենցիալ կաշառք տվողին հասկացնել իր մտադրության մասին:

Հարկ է նշել նաև, որ պաշտոնատար անձի կողմից կաշառքի դիմաց հետագայում կատարվող գործողությունները կամ անգործությունը կաշառք ստանալու հանցակազմից դուրս են և քննարկվող հանցակազմի հատկանիշ չեն: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում քննարկելու նաև այդ գործողութ-

յունների (անգործության) իրավաբանական գնահատման հարցը: Մասնավորապես, եթե կաշառքի դիմաց պաշտոնատար անձի կատարած գործողությունները (անգործությունը) ինքնուրույն հանցակազմ են պարունակում, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես ապօրինի գործողության կամ անգործության համար կաշառք ստանալ (քր. օր.-ի հոդված 311-ի 2-րդ մաս) և կոնկրետ հանցագործություն (պաշտոնեական լիազորությունների չարաշահում կամ դրանց անցում կամ ապացույցների կեղծում և այլն): Օրինակ՝ եթե քրեակատարողական հիմնարկի աշխատակիցը կաշառքի դիմաց բջջային հեռախոս է փոխանցում ազատագրկման վայրում գտնվող դատապարտյալին, նրա արարքը որակվում է որպես ապօրինի գործողություն կատարելու համար կաշառք ստանալ և պաշտոնեական լիազորություններն անցնել: Կամ՝ եթե դատախազը, կաշառքի առաջարկն ընդունելով, քրեական գործով ապացույցներ է կեղծում, նրա արարքը որակվում է որպես ապօրինի գործողություն կատարելու համար կաշառք ստանալ և ապացույցներ կեղծել: Կամ՝ եթե քննիչը, կաշառք ստանալով, քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշում է կայացնում այն դեպքում, երբ առկա են տվյալ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու փաստական և իրավական հիմքերը և բացակայում են քրեական գործը կարճելու հիմքերը, նրա արարքը որակվում է որպես ապօրինի գործողություն կատարելու համար կաշառք ստանալ և քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատել:

Հարկ է նշել նաև, որ *կաշառք ստանալու հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն է ստանում իր լիազորությունների մեջ մտնող արդեն կատարված գործողության կամ անգործության համար:* Այլ կերպ ասած, կաշառքը տալու ժամանակահատվածով պայմանավորված, կարելի է առանձնացնել կաշառակերության հետևյալ երկու դրսևորումները՝ 1) *կաշառք-կաշառումը* (օրինակ՝ երբ մե-

ղադրյալի ազգականը դրամ է տալիս քննիչին, որպեսզի նա կարճի իր վարույթում գտնվող քրեական գործը) և 2) **կաշառք-շնորհակալությունը կամ նվերը** (օրինակ՝ երբ քննիչը կարճում է իր վարույթում գտնվող քրեական գործը, իսկ հետագայում մեղադրյալը նրան շնորհակալություն է հայտնում՝ դրամ կամ գույք տալով):

Ասվածը բացատրվում է այն հանգամանքով, որ կառավարման հանրային ապարատի նորմալ գործունեության բովանդակությունից բխում է, որ պաշտոնատար անձի վարձատրությունը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով և չափով: Մինչդեռ, կաշառք ստանալու էությունը պաշտոնատար անձի կողմից որոշակի վարքագիծ դրսևորելու համար ապօրինի վարձատրություն ստանալն է: Բանն այն է, որ, նույնիսկ, որպես շնորհակալություն գույք կամ գույքային ծառայություններ մատուցելը որոշակի կախվածության մեջ է դնում պաշտոնատար անձին այդ ծառայությունները մատուցողից, հանդիսանում է կոռուպցիայի դրսևորման ձև: Ուստի, եթե պաշտոնատար անձը նվեր է ստանում՝ հասկանալով, որ այն տրվում է իրեն իր որոշակի ծառայողական գործունեության համար, նրա արարքում նույնպես առկա է կաշառք ստանալու հանցակազմը (բնականաբար՝ նաև կաշառք տալու):⁴⁰ Հետևաբար, **պաշտոնատար անձի կողմից զբաղեցրած պաշտոնի բերումով ցանկացած շնորհակալություն կամ նվեր (դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթուղթ կամ որևէ այլ առավելություն) ընդունելը նույնպես պետք է որակել որպես կաշառք ստանալ:**

Այս առումով մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ կաշառքը, անկախ դրա չափից, չի կարող նվեր համարվել այն պարզ պատճառով, որ նվիրատվությունը միակողմանի գործարք է, որը չի ենթադրում հանդիպակաց որևէ գործողության կամ անգործության կատարում կամ ծառայության մատուցում: Մինչդեռ, կաշառք ստանալու պարագայում պաշտոնատար անձը «նվեր-շնորհակալություն» է

⁴⁰ Տե՛ս նաև՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 806-807:

ստանում իր դրսևորած կամ հետագայում դրսևորման ենթակա վարքագծի համար:⁴¹

Մինևույն ժամանակ, կաշառք-շնորհակալությունը, մեր կարծիքով, ավելի ցածր հանրային վտանգավորություն ունի, քան կաշառք-կաշառումը: Հետևաբար, կախված պաշտոնատար անձին տրվող գույքի կամ գույքային այլ օգուտի չափից, իրավակիրառ պրակտիկայում հաճախ կարող է խնդիր առաջանալ՝ կապված համապատասխան արարքը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 18-ի 2-րդ մասի ուժով (հանցագործության համեմատ ցածր հանրային վտանգավորություն ունենալու հետևանքով) որպես հանցագործություն չորակելու հետ: Այսպես, *ճիշտ է կաշառք ստանալու հանցակազմով որակել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձը, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր-շնորհակալություն ստանում է չնչին արժեք ունեցող մեկ տուփի ծխախոտը կամ շոկոլադը կամ ծաղկեփունջը և այլն:* Ավելին, պետք է հաշվի առնել նաև մեր ազգային հոգեբանության առանձնահատկությունները: Մասնավորապես, հայի համար շնորհակալություն հայտնելը սովորական, նույնիսկ, պարտադիր գործարք է, իսկ այն չհայտնելը՝ անոթալի է և պախարակելի:

Այդ առումով, թերևս, առավել նպատակահարմար է ՀՀ քրեական օրենսգրքում վերականգնել նախկինում գործող այն դրույթը, որի համաձայն՝ հանցագործություն էր համարվում պաշտոնատար անձի կողմից, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր գույք, գույքի նկատմամբ իրավունք կամ գույքային այլ օգուտ ստանալը՝ իր լիազորությունների մեջ մտնող, արդեն կատարված գործողության (անգործության) համար, եթե նվերի արժեքը չի գերազանցել նվազագույն աշխատավարձի հնգապատիկը:

Այլ հարց է, որ, *եթե նվեր-շնորհակալությունը նախապես պայմանավորված է, ապա, անկախ չափից, այն պետք է գնա-*

⁴¹ Տե՛ս, օրինակ՝ Клепицкий И.А., Резанов В.И. Получение взятки в уголовном праве России. М., 2001, էջ 20, Вейберт С.И. Взяточничество: проблемы квалификации и назначения наказания: Автореф. дис... канд. юрид. наук. Челябинск, 2007, էջ 14:

հատվի որպես կաշառք, քանի որ նախնական պայմանավորվածությունը տվյալ դեպքում կանխորոշել է պաշտոնատար անձի հետագա վարքագիծը: Այս պարագայում արարքը չի կարող համարվել որպես հանցագործության համեմատ նվազ վտանգավոր և պետք է որակվի որպես կաշառք ստանալ: Հետևաբար, պաշտոնատար անձի կատարած արարքի նվազ կարևորության հարցը լուծելու համար տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն և ոչ այնքան կաշառքի չափը, այլև այդ արարքի բոլոր հանգամանքների համակցությունը:⁴²

Ասվածի կապակցությամբ հետաքրքիր դիրքորոշում է արտահայտել նաև Ա.Ի. Կիրպիչնիկովը: Մասնավորապես, նա նշում է՝ «Կաշառակերության հանրային վտանգավորությունը պայմանավորված է պետական ապարատի գործունեության սկզբունքների խախտմամբ: Այդ սկզբունքները խախտվում են, անկախ նրանից՝ ինչ չափի կաշառք է ստանում պետական ծառայողը: Բացի այդ, այն, ինչ մեկ պաշտոնյայի համար խոշոր չափի է, մյուսի համար կարող է չնչին արժեք ունենալ: Ավելին, հարց է առաջանում ո՞վ է ավելի վտանգավոր. նա, ով պատրաստ է համապատասխան վարքագիծ դրսևորել ապօրինի անգամ չնչի՞ն վարձատրության դիմաց, թե՞ նա, ով նույն վարքագիծը դրսևորում է միայն առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալով»:⁴³

«Հ քրեական օրենսգրքի հոդված 311-ի 3-րդ մասում նախատեսված են կաշառք ստանալու ծանրացնող հանգամանքները՝ կաշառքը **շորթմամբ կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ խոշոր չափերով** ստանալը: Ընդ

⁴² *Տե՛ս նաև՝ Борков В.Н. Получение взятки: вопросы квалификации: Диссерт... канд. юрид. наук. Омск, 2002, էջ 124, Качмазов О.Х. Ответственность за взяточничество по российскому уголовному праву: Диссерт... канд. юрид. наук. М., 1999, էջեր 77-78, Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право, էջ 153:*

⁴³ *Տե՛ս Կիրպիչնիկով Ա.Ի. Взятка и коррупция в России. СПб., 1997, էջեր 210-211:*

որում, դրանք վերաբերում են ինչպես այն դեպքերին, երբ կաշառքի դիմաց կատարվում են (կատարվելու են) օրինական արարքներ, այնպես էլ այն դեպքերին, երբ կատարվում են (կատարվելու են) անօրինական արարքներ: Բացառություն է համարվում կաշառքի շորթումը: Բանն այն է, որ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին ապօրինի արարքներ կատարելու համար կաշառք պահանջելը կաշառքի շորթում չէ:

Կաշառքը շորթամբ ստանալն առկա է այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը պահանջում է կաշառք տալ՝ հակառակ դեպքում սպառնալով ոտնահարել անձի իրավունքները կամ օրինական շահերը: Ընդ որում, արարքը նույն կերպ պետք է գնահատվի նաև այն դեպքերում, երբ պաշտոնատար անձն ուղղակիորեն չի պահանջում կաշառք տալ, բայց անձին այնպիսի պայմանների մեջ է դնում, որ վերջինս հարկադրված կաշառք է տալիս իր իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար:

Այլ կերպ ասած, քննարկվող ժանրացնող հանգամանքի առկայության համար պահանջվում է, որ կաշառք տվողը օրինական շահեր ունենա: Հակառակ պարագայում նրա շահերի ոտնահարման սպառնալիքով կաշառք տալու պահանջը չի կարող որակվել որպես կաշառքի շորթում: Օրինակ՝ եթե պետավտոտեսուչը, ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելով, կաշառք է պահանջում արձանագրություն չկազմելու համար, կաշառքի շորթումը բացակայում է: Վերջինս առկա կլիներ, եթե նա կաշառք պահանջեր՝ սպառնալով արձանագրություն կազմել խախտման համար, որն ավտոմեքենայի վարորդն իրականում թույլ չէր տվել:

Մինևույն ժամանակ, կաշառքի շորթման դեպքում պահանջը տարբերվում է կաշառք ստանալու հասարակ տեսակի հատկանիշ հանդիսացող պահանջից, որի պարագայում պահանջը ներկայացվում է առանց բացահայտ կամ քողարկված սպառնալիքի: Այս հարցի կապակցությամբ ևս իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Էդ. Ջաքարյանի և ուրիշների վերաբերյալ գործով 15.08.2014թ. թիվ ԵԿԴ/0002/01/13 վերոհիշյալ որոշման 24-րդ կետում արձանագ-

րելով, որ «... ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «պահանջի» և ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «շորթման» սահմանազատման հիմքում պետք է դրվի սպառնալիքի առկայության հանգամանքը: ... Կաշառք տալու պահանջի և շորթման սահմանազատումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հանցավորի արարքը ճիշտ որակելու, այլև կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծման համար»:

Հարկ է նշել նաև, որ կաշառքի շորթման դեպքում ևս հանցագործությունն ավարտված է համարվում համապատասխան սպառնալիքով ուղեկցվող պահանջը ներկայացնելու պահից:

Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կաշառք ստանալն առկա է այն դեպքերում, երբ առնվազն երկու պաշտոնատար անձ, նախնական համաձայնության գալով, իրականացնում են կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը: Օրինակ՝ նրանցից մեկը կարող է պահանջել, իսկ մյուսը՝ ստանալ կաշառքի առարկան: Ընդ որում, տվյալ արարքի որակման համար նշանակություն չունի ոչ միայն այն հանգամանքը, թե պաշտոնատար անձանցից ով է կաշառք տվողի օգտին գործունեություն ծավալելու, այլև այն, թե պաշտոնատար անձանցից ով ինչ չափով է կաշառք ստացել: Բացի դրանից, քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայությունը հավաստելու համար պարտադիր չէ, որ կաշառք տվողը գիտակցի, որ ինքը կաշառք է տալիս մեկից ավելի պաշտոնատար անձանց, որովհետև նրա հետ անմիջական շփման մեջ կարող է գտնվել և կաշառքի առարկան վերցնել միայն մեկ պաշտոնատար անձ:

Այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը ոչ իր լիազորությունների շրջանակում, ոչ էլ պաշտոնեական դիրքի շնորհիվ չի կարող կաշառք տվողի օգտին որևէ գործողություն (անգործություն) կատարել, սակայն նպաստում է այլ պաշտոնատար անձանց կողմից կաշառքի ստացմանը, ապա նա պատասխանատվության կենթարկվի կաշառք ստանալուն օժանդակելու համար:

Հարկ է նշել նաև, որ նախնական համաձայնությամբ պաշտոնատար անձանց խմբի կողմից կաշառք ստանալու դեպքե-

րում դրա չափը որոշվում է բոլոր պաշտոնատար անձանց կողմից ստացված կաշառքի առարկայի ընդհանուր չափով: Ընդ որում, անկախ նրանից, թե որ պաշտոնատար անձը ինչ չափի կաշառք է վերցրել, խմբի բոլոր անդամները պատասխանատվության են ենթարկվում տրված կաշառքի ընդհանուր չափով կաշառք ստանալու համար:

Կաշառք ստանալը խոշոր չափերով առկա է այն դեպքում, երբ կաշառքի առարկան կազմում է հանցագործության պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափը չգերազանցող գումար (արժեք): Տվյալ հանգամանքն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի 5-րդ մասում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես պետք է որակել արարքը ծառայության գծով ընդհանուր հովանավորչության կամ թողտվության համար պարբերաբար կաշառք ստանալու դեպքերում, երբ կաշառքը տրվում է «համենայն դեպս», ընդհանուր բարեհաճ վերաբերմունքի համար: Իրավաբանական գրականության մեջ գերիշխողն այն կարծիքն է, որ նման դեպքերում տրված յուրաքանչյուր կաշառքի արժեքը պետք է գումարել: Այսինքն՝ նման դեպքերում առկա է ոչ թե բազմակիությունը, այլ շարունակվող հանցագործությունը, և կաշառք ստացողը պետք է պատասխանատվության ենթարկվի այն չափով կաշառք ստանալու համար, որքան կազմել է պարբերաբար վերցված կաշառքների փաստացի ընդհանուր գումարը:⁴⁴

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 311-ի 4-րդ մասում նախատեսված են կաշառք ստանալու առավել ծանրացնող հանգամանքները: Մասնավորապես, կաշառք ստանալը՝

- 1) կազմակերպված խմբի կողմից,
- 2) առանձնապես խոշոր չափերով,
- 3) դատավորի կողմից:

Կազմակերպված խմբի հասկացությունը տրված է ՀՀ քր. օր.-ի հոդված 41-ի 3-րդ մասում: Այս առումով պարզապես

⁴⁴ Տե՛ս նաև՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ իրատ., 2012, էջեր 812-813:

հարկ է նշել, որ, ի տարբերություն նախնական համաձայնությանը խմբի կողմից կաշառք ստանալու, կաշառք ստանալը կորակվի որպես կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե, նույնիսկ, կաշառք ստանալու օբյեկտիվ կողմն իրականացնում է խմբի մեկ անդամը, սակայն դա ընդգրկված է մյուսների դիտավորության մեջ: Այլ կերպ ասած, կազմակերպված խմբի բոլոր անդամների արարքները որակվում են միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի 4-րդ մասի 1-ին կետով՝ առանց հոդված 38-ի վրա հղում կատարելու:

ՀՀ քր. օր.-ի հոդված 311-ի 5-րդ մասի համաձայն՝ *կաշառքի առանձնապես խոշոր չափ է* համարվում հանցագործության պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Ղատավորի կողմից կաշառք ստանալու կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ առնվազն նույն վտանգավորությամբ է օժտված կաշառք ստանալը նաև մի շարք այլ պաշտոնատար անձանց (օրինակ՝ նախարարի, դատախազի, ոստիկանապետի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների) կողմից: Ուստի, արդարացված է միայն ղատավորի համար նման խիստ պատասխանատվություն սահմանելը:

1.5.2. *Կաշառք տալը*

ՀՀ քրեական օրենսդրությունը, ինչպես արդեն նշվել է, պատասխանատվություն է սահմանում ոչ միայն կաշառք ստանալու, այլև այն տալու համար: Մասնավորապես, պաշտոնատար անձին կաշառք տալու համար պատասխանատվություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 312-ով, որի համաձայն՝ *կաշառք տալ է* համարվում *պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կող-*

մից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Ինչպես հետևում է օրենքի տեքստից, կաշառք տալը, ինչպես և ստանալը, նկարագրված է **ձևական հանցակազմով**: Այսինքն, հանցագործությունն ավարտված է համարվում կաշառքն առաջարկելու, խոստանալու կամ տրամադրելու պահից:

Կաշառք տալու դեպքերը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հաճախ կաշառք տվողն ինքն է ակտիվություն դրսևորում և պաշտոնատար անձին հակում կաշառք վերցնելու: Եթե կաշառատուն, կաշառք տալով, հակում է պաշտոնատար անձին ապօրինի, հանցավոր արարքներ կատարել իր օգտին, ապա նրա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես կաշառք տալ և համապատասխան հանցագործության դրդչություն: Հակառակ պարագայում նրա արարքը պետք է որակել միայն որպես կաշառք տալ:

Կաշառք տալը **ուղղակի դիտավորությամբ** կատարվող հանցանք է: Ուստի, կաշառատուն պետք է գիտակցի, որ ինքն ապօրինի վարձատրություն է տալիս, խոստանում կամ առաջարկում պաշտոնատար անձին: Հետևաբար, եթե անձը, բարեխիղճ մոլորության մեջ գտնվելով, կարծում է, թե օրինական վարձատրություն է տալիս պաշտոնատար անձին, ապա նրա արարքում կաշառք տալու հանցակազմը բացակայում է:

Կաշառք տալու **սուբյեկտը**, ի տարբերություն կաշառք ստանալու, ընդհանուր է՝ տասնվեց տարին լրացած մեղսունակ ֆիզիկական ցանկացած անձ:

ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի 2-րդ մասում նախատեսված է կաշառք տալու ծանրացնող հանգամանքը՝ կաշառք տալը խոշոր չափերով, որոնց բովանդակությունը, քր. օր.-ի հոդված 311-ի 5-րդ մասին համապատասխան, նույնն է, ինչ որ կաշառք ստանալու հանցակազմում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի 3-րդ մասում նախատեսված են կաշառք տալու առավել ծանրացնող հանգամանքները: Մասնավորապես, կաշառք տալը՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից:

Հարկ է նշել, որ ծանրացնող այս հանգամանքների բովանդակությունը ևս նույնն է, ինչ որ կաշառք ստանալու պարագայում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի 4-րդ մասը սահմանում է կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող խրախուսական նորմը: Այս առումով, սակայն, անհրաժեշտ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2014 թ. մայիսի 16-ի օրենքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 312-ի 4-րդ մասը, այն էր՝ «4. Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան երեք օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին», ենթարկվել է փոփոխության և շարադրվել հետևյալ խմբագրությամբ՝ **«4. Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն»:** Ըստ էության, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, անձին քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմ նախատեսող դրույթը ենթարկվել է որոշակի սահմանափակման:

Մասնավորապես, կաշառք տված անձը նախկինում կարող էր ազատվել քրեական պատասխանատվությունից զուտ իրենից կաշառքի շորթման հիմքով, որպես առանձին, ինքնուրույն կիրառվող դրույթի ուժով՝ առանց որևէ այլ լրացուցիչ պայմանների առկայության, քանի որ հաջորդող պայմանի թվարկումը, այն է՝ «...երեք օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին...», կատարվում էր **«կամ»** շաղկապով: Իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 10-րդ մա-

սի համաձայն՝ տվյալ դեպքում նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը: Այժմ, նոր իրավակարգավորմամբ, միայն կաշառքի շորթման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելն ինքնուրույնաբար չի կարող կիրառվել, քանի որ օրենսդիրն այդ պայմանի կիրառումը պայմանավորել է հաջորդող պայմանների առկայությամբ և՛ ամբողջացնելով դրանք «և» շաղկապով:

Բացի դրանից, նախկինում անձը ազատվում էր քրեական պատասխանատվությունից նաև այն դեպքում, եթե կաշառք տալու մասին ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կամավոր հայտնում էր իրավապահ մարմիններին: Մինչդեռ, ներկա իրավակարգավորման պայմաններում պատասխանատվությունից ազատելու նման հիմք ընդհանրապես նախատեսված չէ:

Հարկ է նշել նաև, որ, ի տարբերություն նախորդ իրավակարգավորման, ավելացել է ևս երկու պայման՝ եռօրյա ժամկետում կաշառքի մասին իրավապահ մարմիններին հայտնած անձը պետք է հետագայում աջակցի հանցագործության բացահայտմանը, և պարտադիր է, որպեսզի մինչ այդ անձի կողմից կաշառքի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելը, վերջիններիս հայտնի չլինի կաշառքի տվյալ դեպքը: Ընդ որում, օրենսդրի դիրքորոշման նման խստացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով:

Այսպիսով, եթե անձը կաշառքը տալիս է ոչ թե պաշտոնատար անձի հնարավոր ոտնձգությունից պաշտպանվելու, այլ օրենքը շրջանցելու, պատասխանատվությունից խուսափելու նպատակով, ապա կաշառքի շորթումը բացակայում է, և կաշառք տվողը չի ազատվում քրեական պատասխանատվությունից: Այս առումով նշանակություն չունի անգամ, տվյալ անձը կամովին հայտնել է իրավապահ մարմիններին կաշառք տալու մասին և աջակցել հանցագործության բացահայտմանը, թե ոչ:

1.5.3. Կաշառքի միջնորդությունը

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 313-ի համաձայն՝ *կաշառքի միջնորդությունը կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելն է:*

Օրենսդրական այս ձևակերպումից հետևում է, որ տվյալ դեպքում նախատեսված են միջնորդության «ֆիզիկական» և «ինտելեկտուալ» ձևերը, որոնք արդեն վաղուց հայտնի են քրեական իրավունքի տեսությանը և իրավակիրառ պրակտիկային:⁴⁵

ՀՀ քր. օր.-ի հոդված 313-ի համաձայն, կաշառքի միջնորդության *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է՝

1) կաշառք տվողի և կակաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն նպաստելով (երբ հանցավորը նպաստում է կաշառք տվողի և ստացողի միջև կապերի հաստատմանը, կաշառքի առարկայի բնույթի և չափի վերաբերյալ նրանց համաձայնության գալուն),

2) կաշառք տվողի և կակաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ կայացված համաձայնության իրականացմանը նպաստելով (երբ հանցավորը կաշառք տվողի կամ կաշառք ստացողի նախաձեռնությամբ կաշառքի առարկան կաշառք տվողից վերցնում և փոխանցում է կաշառք ստացողին):

Այլ կերպ ասած, միջնորդը կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կապող օղակի դեր է կատարում: Հետևաբար, նա չի կարող հանդես գալ որպես կաշառք ստանալու կամ տալու նախաձեռնող և չպետք է շահագրգռված լինի կաշառք ստացողի այն գործողություններով (անգործությամբ), որոնք վերջինս պետք է կատարի կաշառքի դիմաց: Կաշառքի միջնոր-

⁴⁵ *Տե՛ս նաև՝ Волженкин Б.В. Квалификация посредничества во взяточничестве // Правоведение, 1979, № 4, էջ 56, Моисеенко М.И. Актуальные вопросы уголовной ответственности за посредничество во взяточничестве // Юридическая наука и правоохранительная практика, 2012, № 4(22), էջ 45, Егорова Н.А., Икрянникова А.С. Уголовная ответственность за посредничество во взяточничестве // Вестник Волгоградской академии МВД России, 2011, № 4(19), էջ 69:*

դը, փաստորեն, ներկայացնում է այլ անձի շահերը և հանդես է գալիս ոչ թե իր, այլ այդ անձի անունից: Ընդ որում, արարքի որակման համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե արդյոք կաշառքի միջնորդը վարձատրություն ստանում է իր կատարածի համար, թե՞ ոչ: Ուստի, կաշառքի միջնորդությունն անհրաժեշտ է սահմանազատել կաշառք տալուն կամ ստանալուն հանցակցելու ձևերից՝ կազմակերպումից, դրոշխությունից և օժանդակությունից:

Մասնավորապես, կաշառք տալու կամ ստանալու կազմակերպիչը, ի տարբերություն միջնորդի, անձնական շահագրգռվածություն է ունենում հանցագործության մեջ և գործում է սեփական նախաձեռնությամբ: Կազմակերպչի շահագրգռվածությունը կարող է դրսևորվել նրանում, որ նա ցանկանում է կաշառքի միջոցով հասնել պաշտոնատար անձի կողմից այնպիսի գործողությունների (անգործության) կատարման, որոնք օգտակար են նաև իր համար: Բացի դրանից, կազմակերպիչը կարող է շահագրգռվածություն ունենալ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու մեջ՝ վերջինիս «լավություն անելու», նրա բարեհաճ վերաբերմունքին արժանանալու, վստահությունը ձեռք բերելու և այլ շարժառիթներով:

Կաշառք տալու կամ ստանալու կազմակերպչի արարքների որակումը կախված է նրանից, թե ում կողմից է նա գործում: Եթե կազմակերպիչը գործում է կաշառք տվողի անունից, ապա նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի համապատասխան մասով՝ հղում կատարելով քր. օր.-ի հոդված 38-ի վրա: Համապատասխանաբար, եթե կազմակերպիչը գործում է կաշառք ստացողի կողմից, ապա նրա արարքը պետք է որակել քր. օր.-ի հոդված 311-ի որոշակի մասով կրկին հղում կատարելով հոդված 38-ի վրա: Եթե կազմակերպիչը, բացի կաշառք տալու կամ ստանալու կազմակերպումից, նաև միջնորդի դեր է կատարում, նրա արարքը պետք է որակել միայն որպես կաշառք տալու կամ ստանալու կազմակերպում:

Կաշառք տալու կամ ստանալու դրոշխ այն անձն է, ով կաշառք տվողին կամ ստացողին հակում է կաշառակերության: Այլ կերպ ասած, տվյալ դեպքում դրոշխության էությունն այն է, որ

հանցավորի կողմից կաշառք տալու կամ ստանալու դիտավորությունը ծագում է դրդիչի գործողությունների ազդեցության տակ:

Բացի դրանից, դրդիչը, ինչպես և կազմակերպիչը, գործում է իր նախաձեռնությամբ և կարող է անձնական շահագրգռվածություն ունենալ կաշառակերության մեջ: Միաժամանակ, եթե դրդիչը կատարում է նաև միջնորդի դեր, ապա նրա արարքը որակվում է միայն որպես դրդչություն: Ընդ որում, եթե դրդիչը դրդում է կաշառք տվողին, նրա արարքը որակվում է որպես կաշառք տալու դրդչություն՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի համապատասխան մասով՝ հղում կատարելով քր. օր.-ի հոդված 38-ի վրա, իսկ եթե դրդում է կաշառք ստացողին՝ քր. օր.-ի հոդված 311-ի համապատասխան մասով՝ կրկին հղում կատարելով հոդված 38-ի վրա:

Կաշառք տալու կամ ստանալու օժանդակող է համարվում այն անձը, ով որևէ եղանակով նպաստում է կաշառք տալուն կամ ստանալուն: Օժանդակողը, ի տարբերություն միջնորդի, կաշառակերության երկու կողմերի միջև կապող օղակ չի հանդիսանում: Նա գործում է կամ կաշառք տվողի կամ կաշառք ստացողի կողմից և նպաստում է նրանցից որևէ մեկի հանցագործությանը: Օժանդակությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով՝ կաշառք տվողի համար կաշառքի առարկա հայթայթելով, կաշառք տվողին համապատասխան պաշտոնատար անձին մատնացույց անելով, տարբեր կարգի խորհուրդներ կամ ցուցումներ տալով, տեղեկատվություն տրամադրելով (օրինակ՝ երբ և որտեղ է հարմար տալ կաշառքը) և այլն: Կաշառք ստացողին օժանդակելը կարող է դրսևորվել նրանով, որ օժանդակողն ինքն է պաշտոնատար անձի փոխարեն վերցնում կաշառքի առարկան, ինքն է կաշառք ստացողի անունից գործարքի մեջ մտնում կաշառք տվողի հետ և այլն: Եթե օժանդակողը հանդես է գալիս կաշառք տվողի անունից, նրա արարքը որակվում է որպես կաշառք տալուն օժանդակություն՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 312-ի համապատասխան մասով՝ հղում կատարելով քր. օր.-ի հոդված 38-ի վրա, իսկ եթե հանդես է գալիս կաշառք ստացողի անունից, ապա արարքը որակվում է քր. օր.-ի հոդ-

ված 311-ի համապատասխան մասով՝ հղում կատարելով հոդ-
ված 38-ի վրա:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում *«կարծեցյալ միջնորդության»* խնդիրը: Տվյալ դեպքում հասկացվում է այն ի-
րադրությունը, երբ անձը կաշառք տվողին առաջարկում է իր
միջնորդական ծառայությունները, վերցնում է նրանից կաշառ-
քի առարկան՝ իբրև թե պաշտոնատար անձին հանձնելու հա-
մար, սակայն յուրացնում է այն: Ընդ որում, հնարավոր են կար-
ծեցյալ միջնորդության հետևյալ իրավիճակները՝

1) նախաձեռնությունը ցույց է տալիս «կարծեցյալ միջնոր-
դը» և, փաստորեն, դրդում անձին կաշառք տալ՝ հավատացնե-
լով, որ ինքն անհրաժեշտ կապեր ունի համապատասխան
պաշտոնատար անձի հետ ու կարող է օգտակար լինել կաշառք
տվողին,

2) նախաձեռնությունը բխում է կաշառք տվողից, ով միջ-
նորդին համոզում է կաշառքը տալ պաշտոնատար անձին, իսկ
«կարծեցյալ միջնորդը» համաձայնում է՝ նպատակ չունենալով
կաշառքի առարկան հանձնել պաշտոնատար անձին:

Այս առումով նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ նկա-
րագրված երկու իրադրություններում կաշառք տվող անձի ա-
րարքը պետք է որակել որպես կաշառք տալու փորձ, ինչի կա-
պակցությամբ մասնագիտական գրականության մեջ տարա-
ծայնություններ չկան:

Իրավիճակն այլ է «կարծեցյալ միջնորդի» արարքների ո-
րակման դեպքում: Քրեագետների մի մասը գտնում է, որ այն
դեպքերում, երբ կաշառք տալու նախաձեռնությունը բխում է
կաշառք տվողից, կարծեցյալ միջնորդը պետք է պատասխա-
նատվության ենթարկվի հանցագործությունների համակցու-
թյամբ՝ խարդախության և կաշառք տալուն օժանդակելու հա-
մար:⁴⁶

Այսպիսի մոտեցումը, սակայն, արդարացիորեն քննադա-

⁴⁶ *St'u, op'ishly' Pinaev A. Ответственность за соучастие в даче взятки // Советская юстиция, 1972, № 21, էջ 26, Смоленцев Е. Судебная прак-
тика по делам о взяточничестве // Социалистическая законность, 1978,
№ 6, էջեր 29-30:*

տության է արժանանում: Մասնավորապես, մեծ թվով հեղինակներ համարում են, որ նման դեպքերում «կարծեցյալ միջնորդը» ոչ թե նպաստում է կաշառք տվողին, այլ հակառակը՝ հենց նրա գործողությունների արդյունքում է, որ կաշառք տվողը չի հասնում իր նպատակին, և հանցագործությունը խափանվում է: Ուստի, սխալ է նրա արարքը որակել որպես կաշառք տալուն օժանդակություն:⁴⁷

Փոքր-ինչ այլ է իրավիճակն այն դեպքերում, երբ կաշառք տալու նախաձեռնությունը բխում է «կարծեցյալ միջնորդից», այսինքն՝ երբ վերջինս ինքն է դրդում անձին կաշառք տալու: Նման դեպքերում, քրեագետներից շատերի կարծիքով, «կարծեցյալ միջնորդի» արարքում միաժամանակ առկա են կաշառք տալուն դրդելու հանցակազմի հատկանիշները: Ուստի, ըստ նրանց, նման դեպքերում կարծեցյալ միջնորդի արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպես խարդախություն և կաշառք տալու դրդչություն:⁴⁸

Այս առումով, սակայն, Բ.Վ. Ջորավոմիսլովը և Բ.Վ. Վոլժենկինն արդարացիորեն նշում են, որ նման դեպքերում «կարծեցյալ միջնորդի» արարքը պետք է որակվի ոչ թե որպես կաշառք տալու, այլ դրա փորձի դրդչություն, որովհետև կաշառք տալու ավարտված հանցակազմն այս դեպքում բացակայում է:⁴⁹ Նման մոտեցումը, մեր կարծիքով, լիովին արդարացված է: Ավելին, այս ճանապարհով է գնում նաև Հայաստանի Հանրապետությունում այսօր գործող քննչական պրակտիկան:

Քննարկվող հարցերի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Ռ. Պապյանի վերաբերյալ գործով 18.04.2013 թ. թիվ

⁴⁷ *Տե՛ս, օրինակ՝ Коробейников Б., Орлов М. Ответственность за взяточничество // Советская юстиция, 1970, № 20, էջ 20:*

⁴⁸ *Տե՛ս, օրինակ՝ Ефимов М. Е. Вопросы квалификации должностных преступлений по уголовному кодексу БССР. Минск, 1967, էջ 33, Курс советского уголовного права. Т. 6. М., 1971, էջ 73:*

⁴⁹ *Տե՛ս՝ Волженкин Б.В. Квалификация посредничества во взяточничестве // Правоведение, 1979, № 4, էջ 59, Здравомыслов Б. В. Должностные преступления. М., 1975, էջ 155:*

ՏՂ/0053/01/12 որոշման 23-րդ կետում⁵⁰ Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝ «... Ինչ վերաբերում է «կարծեցյալ միջնորդի» արարքի որակմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում արարքը ճիշտ որակելու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել և գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորել, թե ով է նախածեռնել կաշառք տալը՝ «կարծեցյալ միջնորդը», թե կաշառք տվողը: Ուստի, այն դեպքում, երբ «կարծեցյալ միջնորդը» որևէ անձի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու նպատակով դրդում է անձին իրեն փոխանցել կաշառքի առարկան, որպեսզի ինքը փոխանցի պաշտոնատար անձին, սակայն ի սկզբանե նման մտադրություն չի ունենում, այլ ցանկանում է հափշտակել այն, ապա արարքը պետք է որակվի համակցության կանոններով՝ որպես խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն: Ընդ որում, որևէ իրավական նշանակություն չունի՝ դրդիչը կոնկրետ նշել է, թե որ պաշտոնատար անձին է ենթադրվում փոխանցել կաշառքի առարկան, թե ոչ ...»:

1.6. Պաշտոնական կեղծիքը

«Հ քրեական օրենսգրքի հոդված 314-ի համաձայն՝ պաշտոնական կեղծիքը պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելն է, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը»:

Օրենքի վերոնշյալ ձևակերպումից հետևում է, որ տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ է **առարկան՝ պաշտոնական փաստաթուղթը**: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքով տվյալ հասկացությունը սահմանված չէ, ինչն իրավակիրառ պրակտիկայում հաճախ տարակարծությունների, տարատե-

⁵⁰ Տե՛ս՝ Ռ. Պապյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.04.2013 թ. թիվ ՏՂ/0053/01/12 որոշում, <http://datalex.am/>:

սակ մեկնաբանությունների տեղիք է տալիս՝ խոչընդոտելով համապատասխան արարքների հստակ և միատեսակ որակմանը: Այդ իսկ պատճառով, քննարկվող հանցակազմի էությունն առավել ամբողջական բացահայտելու համար, անհրաժեշտ է նախ և առաջ մանրամասն քննարկել «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը, ինչը կարևոր թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակություն ունի:

Արդի հայերենի բացատրական բառարաններում **«փաստաթուղթը»** պարզաբանվում է որպես «... 1) որևէ բանի հաստատումը՝ վավերացումը հանդիսացող կամ որևէ իրավունք արտոնող պաշտոնական գրություն՝ թուղթ, 2) ներկայացնողի ինքնությունը հաստատող գրավոր տեղեկանք, վկայական, 3) առհասարակ թուղթ՝ գրություն, որ կարող է որևէ բանի ապացույց՝ վկայություն հանդիսանալ ...»:⁵¹

«Վ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 122-ի 1-ին մասի համաձայն՝ «Փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները»:

Ինչ վերաբերում է **«պաշտոնական փաստաթուղթ»** հասկացությանը, ապա պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ, մինչև վերջերս, առավել տարածված էր այն կարծիքը, որ «... պաշտոնական փաստաթուղթը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների այն գրավոր ակտն է, որը հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ և օժտված է համապատասխան ռեկվիզիտներով (համապատասխան ձև, կնիք, դրոշմ, համապատասխան պետական ծառայո-

⁵¹ Տե՛ս, օրինակ՝ Արդի հայերենի բացատրական բառարան: Է. Բ. Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն: Երևան, 1976, էջ 1513, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի Անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն: Երևան, 1969-1980, էջ 639:

ղի ստորագրություն և այլն)»:⁵²

Տեղեկատվության ամրագրման և պահպանման բնագավառում վերջին տարիներին տեղի ունեցող զարգացումները, սակայն, բավարար հիմքեր են տալիս պնդելու, որ պաշտոնական փաստաթղթի նման սահմանումը հնացած է: Մասնավորապես, ժամանակակից գրեթե բոլոր քրեագետները այն կարծիքին են, որ չի կարելի պաշտոնական փաստաթուղթը սահմանել միայն որպես գրավոր ակտ: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն ու իրադարձությունները ներկայումս հաճախ ամրագրվում են համակարգիչների, այլ տեխնիկական սարքերի և կրիչների վրա:⁵³

Ուստի, *պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ*: Ընդ որում, անկախ նրանից, թե ինչ տեսքով է հանդես գալիս պաշտոնական փաստաթուղթը, այն պետք է ունենա համապատասխան ռեկվիզիտներ (կնիք, դրոշմ, համապատասխան ձև և այլն) և հավաստվի պետական ծառայողի ստորագրությամբ կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ փաստաթղթերը, կախված դրանց ծագման աղբյուրից, բաժանվում են երկու տեսակի՝ **1) պաշտոնական** (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող) և **2) մաս-**

⁵² Տե՛ս, օրինակ՝ Дорохов В.Я. Понятие документа в советском праве // Правоведение, 1982, № 2, էջ 55:

⁵³ Տե՛ս, օրինակ՝ Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человека. Международное уголовное право, էջեր 178-179, Толеубекова Б.Х. Компьютерная преступность: уголовно-правовые и процессуальные аспекты. Караганда, 1991, էջեր 35-36:

Նավոր (ոչ պաշտոնական): Այլ կերպ ասած, փաստաթղթերի նշված տեսակները սահմանազատվում են ըստ դրանք կազմող և տրամադրող սուբյեկտների:

Այս առումով հարկ է նշել, որ փաստաթղթերի վերոհիշյալ տեսակների առանձնացումը հույժ կարևոր նշանակություն ունի քննարկվող հանցագործության որակման համար: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 314-ի բովանդակությունից հետևում է, որ պաշտոնեական կեղծիքի առարկա է համարվում **միայն պաշտոնատար անձից բխող** պաշտոնական փաստաթուղթը: Հետևաբար, **մասնավոր (ոչ պաշտոնատար) անձից բխող փաստաթղթերը (դիմումը, բացատրագիրը, ստացականը, նոտարական վավերացմամբ պայմանագիրը, կտակը և այլն) պաշտոնական համարվել, ուստի և՛ քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության առարկա դիտարկվել չեն կարող:**

Միևնույն ժամանակ, պաշտոնատար անձի կողմից իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ վավերացվող փաստաթղթերը, որոնք կարող են իրավական հետևանքներ առաջացնել (իրավունք վերապահել, պարտականություն առաջացնել կամ պատասխանատվությունից ազատել) պետք է պաշտոնական համարվեն: Այսպես, օրինակ՝ քննիչը, իր ստորագրությամբ վավերացնելով անձի կողմից տրված բացատրությունները, կազմում է պաշտոնական փաստաթուղթ, որը կարող է հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու համար: Հետևաբար, եթե քննիչը միտումնավոր ստորագրի կեղծ տեղեկություններ պարունակող բացատրությունները և դրա հիման վրա հետագայում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնի, նրա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 314-ով՝ որպես պաշտոնեական կեղծիք: Նույն կերպ պետք է որակվի, օրինակ՝ հարկային տեսուչի՝ իր մասնակցությամբ իրականացված ստուգումների ընթացքի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող զեկուցագիրը, որը կարող է հիմք հանդիսանալ նրա նկատմամբ ծառայական քննություն չիրականացնելու համար:

Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնա-

վորապետ, Սամվել Գաբրիելյանի վերաբերյալ 2010 թ. հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 գործով որոշման 16-րդ կետում արձանագրվում է, որ «պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ»:⁵⁴

Այսպիսով, ՀՀ քր. օր.-ի հոդված 314-ի իմաստով՝ որպես պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել *պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրամադրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ: Միևնույն ժամանակ, տվյալ հանցակազմով նախատեսված հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ առևտրային, հասարակական և այլ ոչ պետական կազմակերպությունների կողմից տրվող փաստաթղթերը, քանզի պաշտոնական կեղծիքը պետական ծառայության և տեղական ինքնակառավարման նորմալ գործունեության դեմ ուղղված հանցագործություն է:*

Քննարկվող հանցագործության *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է հետևյալ գործողություններից թեկուզ մեկը կատարելով՝

- 1) պաշտոնական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ մտցնելով,
- 2) պաշտոնական փաստաթղթերում կեղծ գրառումներ մտցնելով,
- 3) պաշտոնական փաստաթղթերում կեղծում կատարելով,
- 4) պաշտոնական փաստաթղթերում քերվածք կատարելով,

⁵⁴ Տե՛ս՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: 2010 թ. 2-րդ կիսամյակ – 2011 թ.: Եր.: Ամարաս, 2012: Հ. 3, էջեր 81-82:

5) պաշտոնական փաստաթղթերում այլ թվական գրառումներ կատարելով,

6) պաշտոնական փաստաթղթերում փոփոխություններ կատարելով

7) կեղծ փաստաթղթեր կազմելով,

8) կեղծ փաստաթղթեր հանձնելով:

Պաշտոնական փաստաթղթերում ***կեղծ տեղեկություններ մտցնելն*** իսկական պաշտոնական փաստաթղթում այնպիսի տեղեկություններ գրանցելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերում է կեղծ գրառումներ մտցնելուն, քերվածք, այլ թվական գրառումներ կամ փոփոխություն կատարելուն, ապա դրանք բոլորը, ըստ էության, կեղծում կատարելու տարբեր դրսևորումներ են: Ուստի, անհասկանալի է օրենսդրի մոտեցումը, որը առանձնացրել է դրանք: Իսկ ***կեղծում կատարել*** ասելով պետք է հասկանալ իսկական փաստաթղթերում այնպիսի փոփոխություններ (ջնջում, քերվածք, այլ թվականով նշագրում և այլն) կատարելը, որոնք աղավաղում են փաստաթղթի իրական բովանդակությունը և չեն համապատասխանում իրականությանը:

Կեղծ փաստաթուղթ կազմելը ձևով իսկական, բայց բովանդակությամբ իրականությանը չհամապատասխանող կամ խեղաթյուրված փաստաթուղթ պատրաստելն է, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Նման արարքի օրինակ կարող են համարվել հետևյալ դեպքերը՝ երբ փաստաթուղթ է պատրաստվում մի անձի համար, ով իրավունք չունի այն ունենալ, կամ երբ կազմվում է փաստաթուղթ, որը հավաստում է իրականում գոյություն չունեցող փաստեր կամ իրադարձություններ և այլն:

Կեղծ փաստաթուղթ հանձնելը ձևով իսկական, բայց բովանդակությամբ իրականությանը չհամապատասխանող կամ խեղաթյուրված տեղեկություններ պարունակող փաստաթուղթը որևէ ձևով շրջանառության մեջ դնելն է:

«Ճ քր. օր.-ի հոդված 314-ի բովանդակությունից հետևում է նաև, որ պաշտոնական կեղծիքը նախատեսված է ***ձևական հանցակազմով***: Այսինքն, տվյալ հանցագործությունն ավարտ-

ված է համարվում պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելու, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելու կամ հանձնելու պահից՝ անկախ հետևանքներից:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի նշված գործողություններն իրականացվեն պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական գործունեության կապակցությամբ: Եթե պաշտոնատար անձը կեղծում է ոչ պաշտոնական փաստաթղթեր կամ թեկուզ պաշտոնական փաստաթղթեր, բայց ոչ իր ծառայողական գործունեության հետ կապված (փաստաթուղթը կեղծելիս չի օգտագործում իր լիազորությունները, կամ դուրս չի գալիս իր լիազորությունների սահմաններից), ապա պաշտոնեական կեղծիքի հանցակազմը բացակայում է:⁵⁵

Քննարկվող հանցակազմի *սուբյեկտիվ կողմը* բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, դրա առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ հանցավորը գիտակցել է, որ կեղծ տեղեկություններ է մտցրել պաշտոնական փաստաթղթերում կամ դրանցում կեղծում է կատարել կամ կեղծ փաստաթուղթ է կազմել կամ հանձնել:

Բացի դրանից, տվյալ անցակազմի պարտադիր հատկանիշ են հանցագործության շարժառիթները և նպատակը: Մասնավորապես, պաշտոնեական կեղծիքի հանցակազմի առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքերում, երբ ՀՀ քր. օր.-ի հոդված 314-ում նկարագրված գործողությունները կատարվում են *շահադիտական նպատակով կամ այլ անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով*: Պաշտոնեական հանցագործությունների սուբյեկտիվ կողմի նշված հատկանիշներն արդեն քննարկվել են պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը վերլուծելիս:

Ամփոփելով ասվածը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև *պաշտոնեական կեղծիքն այլ հանցագործությունների հետ*

⁵⁵ Տե՛ս նաև՝ ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 799:

համակցությամբ որակելու որոշ առանձնահատկություններին:
Մասնավորապես՝

1. Եթե պաշտոնական փաստաթղթերը կեղծվում են հետագայում այլ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար դրանք օգտագործելու նպատակով, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես պաշտոնեական կեղծիք և համապատասխան հանցագործության նախապատրաստություն: Օրինակ՝ եթե քննիչը կեղծում է կատարում փորձագետի տված եզրակացության մեջ՝ հետագայում ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով, նրա արարքը պետք է որակել որպես պաշտոնեական կեղծիք և ակնհայտ անմեղ անձին, մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով, քրեական պատասխանատվության ենթարկելու նախապատրաստություն:

2. Համակցությամբ պետք է որակվի նաև պաշտոնատար անձի կողմից կեղծված պաշտոնական փաստաթղթերի օգտագործումը խարդախության կամ յուրացման կամ վատնման եղանակով կատարված հափշտակությունների, ինչպես նաև այն դեպքերում, երբ կեղծիքը կատարվում է այլ հանցանք թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով: Օրինակ՝ եթե ճանապարհային ոստիկանության տնտեսական բաժնի պետը կեղծ փաստաթղթեր է կազմում, որպեսզի թաքցնի ծառայողական նպատակներով հատկացված բեռզինի իր կողմից առանձնապես խոշոր չափերով կատարված յուրացումները, նրա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպես պաշտոնեական կեղծիք և առանձնապես խոշոր չափերով յուրացում:

3. Եթե պաշտոնեական կեղծիքը կատարվում է մեկ ուրիշ անձի կողմից կատարվելիք հանցանքին նպաստելու համար, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես պաշտոնեական կեղծիք և կոնկրետ հանցագործության օժանդակություն: Օրինակ՝ եթե հարկային տեսուչը, անհատ ձեռնարկատիրոջ հետ համաձայնության գա-

լով, կաշառքի դիմաց ստուգման կեղծ ակտ է կայացնում՝ վերջինիս կողմից խոշոր չափերով հարկերը վճարելուց խուսափելը թաքցնելու նպատակով, նրա արարքը պետք է որակվի որպես պաշտոնեական կեղծիք և հարկերը վճարելուց խուսափելուն օժանդակություն:

4. Պաշտոնեական կեղծիքը համակցությամբ չի որակվում միայն այն դեպքերում, երբ այն մեկ ուրիշ հանցագործության օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ հատկանիշ է հանդիսանում (օրինակ՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու («Քր. օր.-ի հոդված 150) կամ ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու («Քր. օր.-ի հոդված 152-ի 2-րդ մաս) հանցակազմերում): Նման դեպքերում պաշտոնեական կեղծիքի հանցակազմը կլանվում է համապատասխան հանցակազմով:

1.7. Պաշտոնեական անփութությունը

«Քրեական օրենսգրքի հոդված 315-ի համաձայն՝ պաշտոնեական անփութությունը պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն է, որն անզուշույթամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պաշտոնեական անփութության առավել տարածված դեպքերն են նյութական արժեքների պահպանության, դրանց ընդունման և հանձնման ընթացքում դրսևորվող անփութությունը, որի հետևանքով պակասորդ է առաջանում, տեղի է ունենում այդ արժեքների ոչնչացում, վնասում կամ հափշտակություն, ինչպես նաև փաստաթղթերի, հաշվետվությունների կազմման ընթացքում դրսևորվող անփութությունը, ին-

չը հանգեցնում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմավորման և այլն:

Քննարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է միայն **անգործությամբ**, որն արտահայտվում է պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մեջ: Վերջինի դեպքում պաշտոնատար անձն իր պարտականությունները կատարում է մասամբ (ոչ ամբողջությամբ), թերի: Հետևաբար, պաշտոնեական անփութության հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, նախ, պարզել, թե օրենքով, ենթաօրենսդրական ակտերով կոնկրետ ինչ պարտականություններ են դրված եղել պաշտոնատար անձի վրա, կոնկրետ ինչ գործողություններ էր նա պարտավոր կատարել: Ուստի, պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին միայն ընդհանուր բնույթի ձևակերպումները, ինչը հաճախ է հանդիպում իրավակիրառ պրակտիկայում, բավարար չեն քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար:

Բացի դրանից, քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ պաշտոնատար անձը հնարավորություն է ունեցել կատարելու իր պարտականությունները: Այլ կերպ ասած, եթե պաշտոնատար անձը օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հնարավորություն չի ունեցել կատարելու իր պարտականությունները, ապա տվյալ հանցակազմը բացակայում է: Մասնավորապես, եթե պաշտոնատար անձը չի կատարում իր պարտականություններն անփորձության, ոչ պատշաճ մասնագիտական պատրաստվածության, գիտելիքների պակասի հետևանքով, ապա մեղքի բացակայության հետևանքով բացակայում է նաև հանցակազմը:

Վերոհիշյալ հարցերի կապակցությամբ Հ. Սահակյանի վերաբերյալ գործով 2013 թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման մեջ համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ

Վճռաբեկ դատարանը:⁵⁶

Պաշտոնեական անփութությունը նկարագրված է *նյութա-կան* հանցակազմով: Այսինքն, տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են նաև հանրորեն վտանգավոր հետևանքը (անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվող *էական վնասը*) և պատճառական կապը արարքի ու այդ հետևանքի միջև: Ընդ որում, ՀՀ քր. օր.-ի հոդված 315-ի 1-ին մասի համաձայն՝ գույքային վնասի պարագայում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը: Ինչ վերաբերում է ոչ գույքային բնույթի էական վնասին, ապա դրա բովանդակությունը նույնն է, ինչ որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքում:

Պատճառական կապը պաշտոնատար անձի անգործության և հանրորեն վտանգավոր հետևանքների միջև առկա կլինի միայն այն ժամանակ, եթե հաստատվի, որ պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունները պատշաճ կատարելու դեպքում հանրորեն վտանգավոր հետևանքները չէին առաջանա:

Պաշտոնեական անփութությունը, ինչպես արդեն նշվել է, պետական ծառայության դեմ ուղղված միակ հանցագործությունն է, որի *սուբյեկտիվ կողմը* բնութագրվում է *անզգուշությամբ*: Այն կարող է դրսևորվել ինչպես անփութությամբ, այնպես էլ ինքնավստահությամբ: *Ինքնավստահության դեպքում* պաշտոնատար անձը գիտակցում է, որ ինքը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պարտականությունները, նախատեսում է դրա արդյունքում անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս

⁵⁶ Տե՛ս՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.10.2013 թ. թիվ ԼԴ/0207/01/12 որոշում, <http://datalex.am/>:

պատճառելու հնարավորությունը, բայց առանց բավարար հիմքերի, թեթևամտորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն: **Անփութության դեպքում** պաշտոնատար անձը չի նախատեսում իր անզորության՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն պարտավոր էր և կարող էր դա անել:

ՀՀ քր. օր.-ի հոդված 315-ի 2-րդ մասով նախատեսված է պաշտոնեական անփութության առավել վտանգավոր մեկ տեսակ: Այն է՝ նույն արարքը, որն անզուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ: Տվյալ ծանրացնող հանգամանքի բովանդակությունը նույնն է, ինչ որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու պարագայում:

ԳԼՈՒԽ 2.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԻԿԱՆ

2.1. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր բնութագիրը

Հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկայի հիմնախնդիրները, ինչպես հայտնի է, ուսումնասիրում է կրիմինալիստիկայի գիտությունը: Ընդ որում, մասնավոր կրիմինալիստիկական մեթոդիկան չպետք է հասկանալ որպես զուտ այս կամ այն տեսակի հանցագործության արդյունավետ քննության համար անհրաժեշտ քննչական գործողությունների, տեխնիկական միջոցների և տակտիկական հնարքների մեխանիկական ընդհանրություն: Այն ոչ միայն վերաբերում է առավել արդյունավետ միջոցների և հանձնարարականների մշակմանը, այլև դրանց կիրառման մեթոդներին, քննության կազմակերպման առանձնահատկություններին (ապացուցման գործընթացի պլանավորմանը), տիպային քննչական վարկածներին, որոշակի բնագավառներին վերաբերող հատուկ գիտելիքների ու հմտությունների օգտագործմանը և այլն: Ավելին, համապատասխան մեթոդիկաներ մշակելիս կրիմինալիստիկայի գիտությունը ելնում է հանցագործությունների որոշակի տեսակների յուրօրինակությունից և դրանք կատարողների անհատական առանձնահատկություններից, ինչը նպաստում է քննվող քրեական գործերով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը:⁵⁷

Պաշտոնատար անձանց կողմից կատարվող պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունների վերլուծությունը, ինչպես նաև դրանց կապակցությամբ որոշակի ուղենիշների մշակումն ու առաջարկումը թե՛ տեսական և թե՛ գործնական կարևոր նշանակություն ունեն:

⁵⁷ Տե՛ս նաև՝ Ենգիբարյան Վ.Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջեր 11-12:

Այս առումով հատկանշական է, որ քննարկվող հանցագործությունների քննության մեթոդիկային, առհասարակ, ներկայացվում են որոշակի ընդհանրական պահանջներ: Մասնավորապես, բոլոր դեպքերում կոնկրետ գործի շրջանակներում պետք է պարզել պաշտոնատար անձի իրավասության շրջանակը, ենթադրյալ հակաիրավական արարքի անհրաժեշտ հատկանիշների համակցության առկայության հարցը:

Բացի դրանից, քննարկվող հանցագործությունների քննության մեթոդիկան ակնհայտորեն պահանջում է քննիչի մասնագիտական պատրաստվածության առավել բարձր մակարդակ: Բանն այն է, որ պաշտոնեական հանցանքներ կատարողներն ունեն պետական ծառայության ոլորտին առնչվող մասնագիտական խորը գիտելիքներ և հմտություններ, ինչը բավականին բարդացնում է օրենքով թույլատրելի տակտիկական հնարքներով օբյեկտիվ ճշմարտության բացահայտումը: Այդ իսկ պատճառով քննիչը պետք է ցուցաբերի մասնագիտական առավելագույն որակներ:

Մինևույն ժամանակ, քննարկվող մի շարք հանցագործությունների օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է էական վնասը, որի գնահատման գործընթացում հատկապես կարևորվում են քննիչի արժեքաբանական պատկերացումները՝ կապված արարք-պատճառ-հետևանք կապի մանրակրկիտ վերհանման անհրաժեշտության հետ: Մասնավորապես, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է հստակ գնահատական տրվի այն հարցին, թե տվյալ արարքով պատճառված վնասն արդյոք էականորեն խաթարում է հասարակական համակեցությունը, հասարակության բարոյաարժեքային կացութաձևը: Այդ առումով կարևորվում են նաև վնասի չափը որոշելուն միտված համապատասխան փորձաքննությունների նշանակումն ու իրականացումը:

Հատկանշական է նաև, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների զգալի մասում առանձնակի բարդություն են ներկայացնում իր արարքի նկատմամբ հանցավոր պաշտոնատար անձի սուբյեկտիվ վերաբերմունքի բացահայտումը, ինչպես նաև նրա կողմից այդ արարքի էության հան-

րային պարսավելիության գիտակցման փաստի գնահատումը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բացառապես վերոհիշյալ ելակետային հարցադրումներին պատասխան տալուց հետո է, որ քննիչը կարող է միջամուխ լինել գործի փաստական դրվագաչարի հետագա հետազոտմանը:

Քննարկվող հանցագործությունների վերաբերյալ նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ որոշ դեպքերում պաշտոնական հանցանքներ կատարող անձինք միավորվում են հանցավոր խմբերում: Այդ առումով կարևոր նշանակություն են ձեռք բերում խմբի անդամների թվաքանակի և փոխադարձ կապերի, հանցակիցների միջև դերերի բաշխման, հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների չեզոքացման նպատակով հանցախմբի կողմից գործադրվող միջոցների վերաբերյալ տվյալները:

Պաշտոնական որոշ հանցագործություններ, հատկապես՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ պաշտոնական լիազորություններն անցնելը և կաշառք ստանալը, հաճախ կապված են հանցավոր այլ արարքների (օրինակ՝ քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու, պաշտոնական կեղծիքի և այլն) կատարման հետ: Այդ հանգամանքը ևս անհրաժեշտ է հատուկ հաշվի առնել նախաքննություն իրականացնելիս՝ հանցագործությունների հստակ որակումն ապահովելու նպատակով:

Քննարկվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նաև ապացուցման առարկային՝ բացահայտման ենթակա հանգամանքների շրջանակը հստակ որոշելու նպատակով: Մասնավորապես, տվյալ կատեգորիայի գործերով բացահայտման և պարզաբանման են ենթակա՝

- հանցագործության սուբյեկտի պաշտոնական դիրքի հետ կապված առանձնահատկությունները.

- տվյալ պաշտոնատար անձի պաշտոնական գործառույթների և նրա կողմից փաստացի իրականացվող պարտականությունների շրջանակը.

- անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին վնաս պատճառող արարքի կոնկրետ դրսևորումը.

- պատճառված վնասի բնույթը և չափը, դրա պատճառման տեղը, ժամանակը, եղանակը.

- պաշտոնատար անձի համապատասխան գործողության կամ անգործության և առաջացած հետևանքի միջև պատճառական կապը.

- պաշտոնեական տվյալ հանցագործության և այլ բնույթի հանցագործության միջև հնարավոր կապի առկայությունը և այլն:

Բացի դրանից, պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործեր, ինչպես հայտնի է, կարող են հարուցվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդված 176-ով նախատեսված առիթներից ցանկացածի առկայության պարագայում: Քննչական պրակտիկայում, սակայն, առավել հաճախ նման առիթներ են դառնում ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ առանձին պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ ստուգումների արդյունքները, քաղաքացիների դիմումներն ու բողոքները, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվող տեղեկությունները:

Այդ առումով հարկ է նշել, որ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվող տեղեկություններին նույնպես անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել և, ըստ անհրաժեշտության, արձագանքել: Ընդ որում, եթե անգամ նշված նյութերը չեն պարունակում հանցագործության ակնհայտ հատկանիշներ նկարագրող տեղեկություններ, չի բացառվում, որ իրականում դրանք առկա լինեն: Ըստ այդմ, որոշ դեպքերում կարող է օրենքով սահմանված կարգով որոշակի ստուգումներ նշանակելու և իրականացնելու անհրաժեշտություն առաջանալ: Վերջիններս կարող են նպատակ հետապնդել՝ հայտնաբերելու համապատասխան փաստաթղթեր, հստակեցնելու որոշակի փաստեր, վերցնելու անհրաժեշտ բացատրություններ, առավել

ամբողջական պատկերացում կազմելու որոշակի ձեռնարկության կամ հիմնարկի գործունեության մասին և այլն:

Քննարկվող հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հաճախ ապացույցների հիմնական աղբյուր են հանդիսանում համապատասխան փաստաթղթերը: Այդ իսկ պատճառով, հատուկ ուշադրություն է պետք դարձնել դրանց անհապաղ առգրավմանն ու զննությանը:

Մասնավորապես, փաստաթղթերի զննությունն առավել նպատակահարմար է իրականացնել համապատասխան կազմակերպությունում, ձեռնարկությունում կամ հիմնարկում: Բանն այն է, որ դրանց պաշտոնատար անձանցից գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր պահանջելը, որպես կանոն, արդյունավետ չէ: Նման պարագաներում քննիչը հնարավորություն չի ունենում անմիջականորեն ուսումնասիրելու այդ փաստաթղթերի պահպանման տեղը, եղանակն ու պայմանները: Բացի այդ, որոշակի շահագրգռվածություն ունեցող պաշտոնատար անձինք կարող են ոչնչացնել կամ կեղծել համապատասխան փաստաթղթերը:

Հարկ է նշել նաև, որ փաստաթղթերի զննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու համապատասխան պաշտոնատար անձանց ծառայողական կոնկրետ լիազորությունների շրջանակը, բնույթն ու բովանդակությունը:

Քննարկվող հանցագործությունների վերաբերյալ գործերով առանձնակի կարևորություն են ներկայացնում վկաների հարցաքննության տակտիկայի մշակումն ու պատշաճ իրականացումը, ինչը նախ և առաջ պայմանավորված է համապատասխան պաշտոնատար անձանց հետ նրանց փոխհարաբերությունների բնությամբ: Մասնավորապես, որպես այդպիսիք սովորաբար հանդես են գալիս այն անձինք, ովքեր այս կամ այն կերպ (ծառայության բերումով կամ այլ հարաբերությունների ուժով) կապված են մեղադրյալի կամ այն կազմակերպության, ձեռնարկության կամ հիմնարկի հետ, որտեղ տեղի է ունեցել հանցագործությունը: Բացի այդ, հանցանք կատարած պաշտո-

նատար անձի հետ նրանց փոխհարաբերությունները կարող են լինել ընկերական, բարեկամական կամ, հակառակը՝ անբարյացկամ, թշնամական և այլն: Ուստի, որոշ վկաներ կարող են փորձել արդարացնել, իսկ մյուսները՝ վատ լույսի ներքո ներկայացնել մեղադրյալներին: Հետևաբար, քննիչը միշտ պետք է հատուկ ուշադրություն դարձնի նաև միջանձնային տարատեսակ հարաբերությունների առանձնահատկություններին:

Միևնույն ժամանակ, մեղադրյալի գործընկեր հանդիսացող վկաների հարցաքննություններն անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս արագ: Բանն այն է, որ քննչական նշված գործողության օպերատիվությունը նման դեպքերում կարող է հավաստի ցուցմունքներ վերցնելու երաշխիք լինել: Այդ առումով օգտակար կարող են համարվել նաև միաժամանակ մի քանի վկաների հարցաքննությունները, որոնք պետք է իրականացվեն տարբեր քննիչների կողմից՝ ըստ նախապես համաձայնեցված պլանի:

Քննարկվող հանցագործությունների առանձին դեպքերում (հատկապես՝ պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության արդյունքում նյութական հետևանքների առաջացման պարագայում) հույժ կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև դեպքի վայրի անհետաձգելի զննությունը: Օրինակ՝ երբ պետական ձեռնարկության ղեկավարի անփութության հետևանքով որոշակի ապրանքներ են փչանում կամ շարքից դուրս են գալիս թանկարժեք սարքավորումներ և այլն:

Հարկ է նշել նաև, որ պաշտոնատար անձանց կողմից պետական ծառայության դեմ ուղղված հանցանք կատարելու դեպքերի մեծամասնության պարագայում խուզարկություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում: Դրանք կարող են իրականացվել համապատասխան պաշտոնատար անձի ինչպես աշխատանքի, այնպես էլ բնակության վայրերում:

Միևնույն ժամանակ, կարող է նաև պաշտոնատար անձանց գործընկերների, ազգականների, մերձավորների կամ հարևանների բնակարանների և աշխատավայրերի խուզարկության անհրաժեշտություն առաջանալ: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրանց

մոտ կարող են գտնվել քննվող գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, առարկաներ, նյութական կամ այլ արժեքներ և այլն:

Բացի դրանից, խուզարկության ընթացքում, ըստ անհրաժեշտության, պետք է առգրավել ոչ միայն պաշտոնական փաստաթղթերը, այլև անձնական նամակագրությունը (այդ թվում էլ լեկտրոնային), նոթատետրերը, պատահական գրառումները: Այդ առումով ապացուցողական նշանակություն կարող են ունենալ նաև սևագիր այն նախագծերը, որոնցով հետագայում կազմվել են համապատասխան փաստաթղթերը:

Պաշտոնատար անձանց կողմից կատարվող պետական ծառայության դեմ ուղղված հանցանքների առանձին տեսակների քննության մեթոդիկայի առանձնահատկություններին կանդրադարձանք սույն աշխատության հաջորդ պարագրաֆում:

2.2. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները

1. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 308-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս նախ և առաջ անհրաժեշտ է պարզել համապատասխան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակը: Այդ նպատակով պետք է մանրամասն ուսումնասիրել նրա իրավունքներն ու պարտականությունները և կոնկրետ գործառույթները սահմանող իրավական ակտերը: Ընդ որում, մեթոդական տվյալ ցուցումը կիրառելի է նաև պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական մյուս հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս:

Պաշտոնատար անձի կերպարի շուրջ ընդհանրական պատկերացում կազմելու համար նպատակահարմար է պար-

զել նաև վերջինիս ծառայողական բնութագիրը, նրա նկատմամբ կիրառված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների առկայության կամ բացակայության հարցերը: Նշված տեղեկությունները կարելի է ստանալ տվյալ պաշտոնատար անձի գործընկերների հարցաքննություններից, ինչպես նաև նրա անձնական գործից:

Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ համարվող շարժառիթները՝ (շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերից ելնելու մղումը) բացահայտելու համար անհրաժեշտ է հաջորդաբար պարզել հետևյալ հիմնական հանգամանքները.

- պաշտոնատար անձն իր գործողությամբ կամ անգործությամբ ինչպիսի՞ վերջնական արդյունքի է ցանկացել հասնել,

- հնարավոր է, որ այդ արդյունքն առաջանար պաշտոնատար անձի ցանկությունից անկախ կամ առանց նրա միջամտության,

- արդյոք այդ վերջնական արդյունքին հասնելը պայմանավորված է եղել միայն տվյալ պաշտոնատար անձի, թե՞ նաև այլ անձանց գործողություններով կամ անգործությամբ,

- արդյոք ենթադրյալ հակաիրավական արարքը պայմանավորված է եղել խմբային շահերով կամ տվյալ պաշտոնատար անձի անձնական շահագրգռվածությամբ,

- ի՞նչ ազդեցություն կարող էր ունենալ տվյալ արարքը պաշտոնատար անձի սոցիալական կամ նյութական վիճակի բարելավման կամ ծառայողական առաջխաղացման վրա և այլն:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ գործերով անհրաժեշտ է պարզել նաև, թե տվյալ անձը հանցագործության օբյեկտիվ կողմը հանցակազմում նշված երկու եղանակներից որո՞վ է իրականացրել: Եթե պարզվի, որ հանցանքը կատարվել է պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, ապա պետք է ուսումնասիրել համապատասխան պետական մարմնի գործունեության կազմակերպարավական հիմքերը սահմանող իրավական ակ-

տերի ողջ համակցությունը՝ հասկանալու, թե, որոնք են այդ մարմնի նպատակները, խնդիրները և իրավասությունը:

Խմբային շահերը բացահայտելու համար անհրաժեշտ է հարցաքննել համապատասխան կազմակերպությունների, միավորումների ներկայացուցիչներին և խմբային շահերով միավորված այլ անձանց, պարզելու համար՝

- ի՞նչ նպատակներ են հետապնդել տվյալ խմբի ներկայացուցիչները համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու արդյունքում,

- կոնկրետ ի՞նչ առավելություններ են ստացել տվյալ խմբի ներկայացուցիչները համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հետևանքով և այլն:

Բացի դրանից, գործի հանգամանքներով պայմանավորված, անհրաժեշտ է հարցումներ ուղարկել համապատասխան հաստատություններ՝ այդ խմբի ներկայացուցիչների գույքային, ֆինանսական շարժը պարզելու համար: Ընդ որում, այդ հարցումների արդյունքները պետք է օգտագործվեն՝ հիմնավորելու համար, որ տվյալ կազմակերպության, միավորման ներկայացուցիչները կամ խմբային շահերով միավորված այլ անձինք որոշակի առավելություններ են ստացել հենց համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հետևանքով:

Միևնույն ժամանակ, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս, որպես կանոն, որոշակի փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտություն է առաջանում: Մասնավորապես, հանցագործությամբ պատճառված գույքային վնասի առկայությունը, իսկ առկայության դեպքում՝ դրա բնույթն ու չափը պարզելու համար, ըստ անհրաժեշտության, պետք է նշանակել դատատնտեսագիտական (դատաֆինանսատնտեսագիտական, դատահաշվապահական, դատաապրանքագիտական) փորձաքննություններ: Ընդ որում, առավել նպատակահարմար կլինի, որ դրանք նշանակելուց առաջ քննիչը

խորհրդակցի համապատասխան փորձագետի կամ մասնագետի հետ, ով կօգնի նախապատրաստել հետազոտելի նյութերն ու տնտեսագիտորեն հստակ և կոնկրետ ձևակերպել լուծման ենթակա հարցերը:

Ղատաֆինանսատնտեսագիտական փորձաքննության նպատակն է գործի այն փաստական տվյալների պարզումը, որոնք վերաբերում են կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց եկամուտների, դրամական ֆոնդերի, ծախսերի և գույքի առաջացմանը, վերբաշխմանն ու օգտագործմանը: Այդ կապակցությամբ իրականացվում է փաստաթղթերում արտացոլված իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ֆինանսավարկային գործունեությանը վերաբերող տեղեկությունների, ինչպես նաև նշված անձանց ֆինանսական ծախսերի, ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման ուղղություններին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Ղատահաշվապահական փորձաքննության առարկան է համապատասխան հաշվապահական հաշվառումը վարելու եղանակը, հետազոտվող հաշվիչ գործողությունների և գրառումների կատարման եղանակների ու անսովոր պայմանների, հաշվողական տվյալների խեղաթյուրման տեղի, ժամանակի, մեխանիզմի, եղանակի, որակական և քանակական բնութագրերի պարզումը:

Ղատաապրանքագիտական փորձաքննությունը կարող է նշանակվել որևէ գույքի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի, պարենային և արդյունաբերական ապրանքների վնասված լինելու հանգամանքը և պատճառված վնասի չափը որոշելու համար:

Քանի որ քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև ոչ գույքային բնույթի վնաս պատճառելով, գործի քննության ընթացքում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակելու դատաբժշկական, դատահետքաբանական, դատակենսաբանական, դատահոգեբուժական և/կամ դատահոգեբանական փորձաքննություններ (այդ թվում՝ համալիր) պարզելու համար տուժողի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը պատճառված վնասի էությունը, բնույթն ու ծան-

րությունը, ինչպես նաև հանցավորի գործողության կամ անգործության և առաջացած հետևանքի միջև պատճառական կապի առկայությունը:

Հարկ է նշել նաև, որ հանցագործությամբ պատճառված վնասի առկայությունը, իսկ առկայության դեպքում՝ դրա բնույթն ու չափը պարզելու նպատակով նշանակվող փորձաքննությունների կապակցությամբ վերոհիշյալ մեթոդական ցուցումները լիովին կիրառելի են նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 309-ով և 315-ով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս:

2. Պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 309-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս, պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական բոլոր հանցագործություններին վերաբերող ընդհանուր մեթոդական ցուցումներին հետևելուց բացի, անհրաժեշտ է հաջորդաբար անդրադարձնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- պաշտոնատար անձի համար ակնհայտ է եղել, որ իր կողմից կատարված գործողությունները դուրս են գալիս իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից,

- պաշտոնատար անձն առհասարակ ունեցե՞լ է տվյալ լիազորությունն իրականացնելու իրավունք, թե՞ առկա է լիազորությունների ակնհայտ վերազանցում,

- պաշտոնատար անձի կոնկրետ ո՞ր գործողությունն է խախտել կիրառման ենթակա իրավադրույթների պահանջները,

- սահմանված կարգով ուժի մեջ մտել է արդյոք այն իրավական ակտը, որի պահանջները խախտվել են տվյալ պաշտոնատար անձի կողմից,

- առկա է արդյոք անմիջական կապ ենթադրյալ հակաիրավական արարքի և պատճառված վնասի միջև,

- էական է արդյոք պատճառված վնասը,
- վնասի առաջացումը պայմանավորված է եղել միայն այդ անձի գործողություններով, թե՞ այլ անձանց արարքներով և և այլն:

Ակներև է, որ այս հարցերին տրված բովանդակային պատասխանների դեպքում է միայն հնարավոր պարզել քննարկվող հանցակազմի հատկանիշների առկայությունը և ձեռնամուխ լինել գործի հետագա քննությանը:

3. Կաշառք ստանալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

«Ճ քրեական օրենսգրքի հոդված 311-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս, պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնական բոլոր հանցագործություններին վերաբերող ընդհանուր մեթոդական ցուցումներին հետևելուց բացի, անհրաժեշտ է հաջորդաբար անդրադառնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը կատարվել է կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող, թե՞ ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության կամ մեկ այլ պաշտոնատար անձի որոշման կայացմանը նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար,

- պաշտոնատար անձի բանկային հաշիվներում որոշակի ժամանակահատվածի կտրվածքով արտացոլված դրամական միջոցների շարժը համապատասխանում է նրա օրինական աշխատավարձի շարժին,

- տվյալ պաշտոնատար անձը դասվում է եկամուտների վերաբերյալ պարտադիր հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքին, եթե այդ ինչպիսի՞ն է դրա բովանդակությունը,

- ինչպիսի՞ն են տվյալ պաշտոնատար անձի ընտանիքի անդամների (ըստ անհրաժեշտության, նաև այլ ազգականների

կամ մերձավորների) եկամուտների չափը և դրանում տեղի ունեցած փոփոխությունները համապատասխան ժամանակահատվածում,

- որտե՞ղ, ե՞րբ, ու՞մ միջոցով և ի՞նչ եղանակով է փոխանցվել կաշառքի առարկան,

- ինչպիսի՞ն են կաշառքի առարկայի բնույթը և չափը,

- կաշառք ստանալու ժամանակ կաշառք տվողից բացի այլ անձինք ներկա գտնվե՞լ են,

- հանցանքը կատարել է անձա՞մբ, թե՞ միջնորդի միջոցով,

- առկա չե՞ն արդյոք կաշառքի շորթման հատկանիշներ,

- եթե առկա են շորթման հատկանիշներ, ապա անձի կոնկրետ ո՞ր իրավունքների կամ օրինական շահերի ոտնահարման սպառնալիքով է այն կատարվել և այլն:

Միևնույն ժամանակ, կաշառք ստանալու վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս կարող է որոշակի փորձաքննություններ (դատատնտեսագիտական, դատահամակարգչատեխնիկական, դատաապրանքագիտական, դատահետքաբանական) նշանակելու անհրաժեշտություն առաջանալ:

Մասնավորապես, *դատատնտեսագիտական* փորձաքննությունը կարող է օգնել բացահայտելու կասկածյալի կամ մեղադրյալի եկամուտների ապօրինի գոյացման, ավելացման դեպքերը և այն եղանակները, որոնց միջոցով իրականացվել է նշված եկամուտների առաջացումն ու ավելացումը:

Պատահամակարգչատեխնիկական փորձաքննության նշանակման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող համակարգչում կամ համակարգչային տեղեկատվության այլ կրիչներում կարող է պահպանված լինել գործի քննության համար էական ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ: Տվյալ փորձաքննությամբ, մասնավորապես, կարող է պատասխան տրվել քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործով նախաքննություն իրականացնելիս առաջացող այնպիսի

հարցերի, ինչպիսիք են՝

- փորձաքննության ներկայացված համակարգիչը կամ այլ կրիչը օգտագործվե՞լ է գործառնության այս կամ այն խնդրի լուծման նպատակով,

- հնարավո՞ր է վերականգնել և ուսումնասիրել այդ համակարգչից կամ այլ կրիչից (այդ թվում՝ բջջային հեռախոսից, հեռախոսային քարտից, բջջային հեռախոսի հիշողության ներկառուցված կրիչից) ջնջված որոշակի տեղեկատվություն և այլն:

Ընդ որում, երբեմն կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակելու նաև դատաֆինանսատնտեսագիտական և դատահամակարգչատեխնիկական համալիր փորձաքննություններ:

Այն դեպքերում, երբ կաշառքի առարկան որևէ այլ նյութական արժեքի տեսքով է, կարող է կարիք առաջանալ նշանակելու **դատասպրանքագիտական** փորձաքննություն՝ համապատասխան իրի կամ առարկայի իրական և/կամ շուկայական արժեքը գնահատելու համար: Տվյալ փորձաքննության արդյունքներով է, որ նման դեպքերում հետազայում հնարավոր կլինի կաշառքի չափի հստակ որոշումը, հետևաբար, նաև արարքի ճիշտ որակումը:

Քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հաճախ կարող է կաշառքի առարկայի վրա առկա մատնահետքերի բացահայտման և նույնականացման անհրաժեշտություն առաջանալ: Նման դեպքերում, բնականաբար, նաև **դատահետքաբանական** փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն կառաջանա: Վերջինիս էությունը, ինչպես հայտնի է, անզեն աչքով անտեսանելի միկրոհետքերի բացահայտումն ու նույնացումն է:

Հարկ է նշել նաև, որ նշանակվող փորձաքննությունների կապակցությամբ վերոհիշյալ մեթոդական ցուցումները լիովին կիրառելի են նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 312-ով և 313-ով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս:

4. Կաշառք տալու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 312-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հաջորդաբար անդրադարձնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- կաշառքը տրվել, խոստացվել կամ առաջարկվել է անձամբ, թե՞ միջնորդի միջոցով,

- ենթադրյալ հանցավորը գիտակցե՞լ է, որ անձամբ կամ միջնորդի միջոցով հենց ապօրինի վարձատրություն է տալիս, խոստանում կամ առաջարկում պաշտոնատար անձին,

- ե՞րբ, որտե՞ղ, ու՞մ միջոցով և ի՞նչ պայմաններում է կաշառք տվողը հարաբերություններ հաստատել պաշտոնատար անձի հետ,

- ե՞րբ, որտե՞ղ, ու՞մ միջոցով և ի՞նչ եղանակով է փոխանցվել կաշառքի առարկան, տրվել խոստումը կամ ներկայացվել առաջարկը,

- ի՞նչն է հանդիսացել կաշառք առարկա և ի՞նչ չափի է այն եղել,

- կաշառքն ի՞նչ նպատակով է տրվել, խոստացվել կամ առաջարկվել,

- արդյոք առկա չե՞ն կաշառքի շորթման հատկանիշներ,

- կաշառք տվողը դրա մասին հայտնե՞լ է քրեական հետապնդման մարմիններին,

- կաշառք տալու մասին հայտնելը եղել է կամավո՞ր և օրենքով նախատեսված ժամկետներու՞մ, թե՞ ոչ և այլն:

5. Կաշառքի միջնորդության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 313-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հաջորդաբար անդրադարձնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- ինչպիսի՞ն է կաշառք տվողի և կաշառք ստացողի հետ կաշառքի միջնորդություն կատարողի փոխհարաբերությունների բնույթը,

- Ե՞րբ, որտե՞ղ, ու՞մ միջոցով և ի՞նչ պայմաններում է կաշառքի միջնորդը հարաբերություններ հաստատել կաշառք տվողի և կաշառք ստացողի հետ,
- վերոհիշյալ անձանց հանցավոր համագործակցությունը որքա՞ն ժամանակ է շարունակվել,
- Ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ եղանակով է միջնորդը փոխանցել կաշառքի առարկան,
- արդյոք անձի գործողություններում առկա չեն «կարծեցյալ միջնորդության» հատկանիշներ,
- արդյոք միջնորդի գործողություններում առկա չեն կաշառք տալու կամ ստանալու հանցագործության կազմակերպչի, դրդչի կամ օժանդակողի հատկանիշներ,
- արդյոք ավարտվել է հանցագործությունը, այն է՝ միջնորդը նպաստե՞լ է կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացված համաձայնության իրականացմանը, թե՞ ոչ և այլն:

6. Պաշտոնեական կեղծիքի վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

«Ճ քրեական օրենսգրքի հոդված 314-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս, պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական բռնություն հանցագործություններին վերաբերող ընդհանուր մեթոդական ցուցումներին հետևելուց բացի, անհրաժեշտ է հաջորդաբար անդրադարձնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- արդյոք որոշակի միջամտությամբ փաստաթղթի նախնական տեսքն աղավաղվել է,
- պաշտոնատար անձի սուբյեկտիվ ընկալման տիրույթում առկա՞ է որևէ շահադիտական կամ այլ անձնական շահագրգռվածություն կամ խմբային շահ,
- փաստաթուղթը, որում կատարվել է համապատասխան կեղծումը կամ որը կազմվել կամ հանձնվել է, կարո՞ղ է համարվել պաշտոնական,
- հոդվածի դիսպոզիցիայում մատնանշված գործողութ-

յուններից որի՞ միջոցով է պաշտոնատար անձը կատարել պաշտոնեական կեղծիք,

- ի՞նչ տեսքով է փաստաթուղթը եղել հաստատված (կնքված) և կոնկրետ ո՞ր գրառումներն են աղավաղել փաստաթղթի նախնական տեսքը և այլն:

Ընդ որում, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պաշտոնատար անձի կատարած գործողությունների բնույթին և վերջինիս սուբյեկտիվ ընկալմանը: Հնարավոր է, որ պաշտոնատար անձն արարքը կատարած լինի ոչ թե ուղղակի դիտավորությամբ, այլ պարզապես մոռացության, գերծանրաբեռնվածության և այլ օբյեկտիվ պատճառներով: Բնականաբար, նշված դեպքերը չեն կարող առաջացնել քննարկվող հանցակազմի հատկանիշները:

Կարևոր նշանակություն ունեն նաև հարցաքննությունները: Ընդ որում, նախաքննական մարմնի համար առավել արդյունավետ է հատկապես համապատասխան պաշտոնատար անձի և վերջինիս վերադասի հարցաքննությունը՝ պարզելու, թե նրանք արդյոք երկուսն էլ տեղյակ են եղել պաշտոնեական կեղծիքից և հանցանքը կատարվել է ընդհանուր իրազեկվածության պայմաններում: Բացի այդ, հարցաքննությունները կարևոր նշանակություն ունեն պաշտոնատար անձի անձնական կապերի շրջանակը պարզելու, նրա արարքի հիմնական մոտիվացիան ընկալելու իմաստով:

Միևնույն ժամանակ, պաշտոնեական կեղծիքի վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս կարող է որոշակի փորձաքննություններ (դատափաստաթղթաբանական, դատաձեռագրաբանական, դատատնտեսագիտական, դատահամակարգչատեխնիկական, դատահետքաբանական) նշանակելու անհրաժեշտություն առաջանալ:

Մասնավորապես, կարող է առաջանալ փաստաթղթերի սկզբնական բովանդակության վերականգնման (ինչպիսիսի՞ն է եղել փաստաթղթերի սկզբնական տեսքը և բովանդակությունը), առանձին մասերի կատարման հաջորդականությունը պարզելու (ներկայացված փաստաթղթում ի՞նչ հերթականությամբ են կատարված կնիքի /դրոշմակնիքի/ դրոշմները, ձեռա-

գիր և տպագիր գրառումները), լրացուցիչ տպագրման եղանակով տեքստի փոխփոխման փաստի որոշման (ներկայացված փաստաթղթերում առկա են արդյոք հավելագրված գրառումներ, նշաններ, թվեր, ներկայացված փաստաթղթերում առկա գրառումները կատարվել են միևնու՞յն գրելագործիքով /ներկանյութով/, թե՞ ոչ), համակարգչի տպիչի նույնացման (տպագրվել է փորձաքննության ներկայացված տպիչո՞վ, թե՞ ոչ), կնիքների և դրոշմակնիքների նույնացման և կնիքի դրոշմի պատրաստման եղանակի որոշման (կնիքը, դրոշմակնիքը ի՞նչ եղանակով են կատարված, արդյոք կատարված է ներկայացված կնիքով կամ շտամպով, ի՞նչ եղանակով է կատարվել կնիքի դրոշմը՝ համակարգչային տպիչո՞վ, պատճենահանմա՞ն, թե՞ մեկ այլ եղանակով), պատառոտված և այրված փաստաթղթերի բովանդակության վերականգնման անհրաժեշտություն: Վերոհիշյալ բոլոր հարցերի պատասխանները կարող են ստացվել **դատափաստաթղթաբանական** փորձաքննության արդյունքում:

Ղատաձեռագրաբանական փորձաքննության նշանակումը կարող է նպաստել հետևյալ հանգամանքների բացահայտմանը՝

- ում կողմից են կատարվել ձեռագիր տեքստերը կամ դրանց հատվածները կամ առանձին գրառումները կամ տորագրությունները,
- միևնու՞յն, թե՞ տարբեր անձանց կողմից են դրանք կատարվել,
- ու՞մ կողմից է կատարվել որոշակի անձի անունից ստորագրությունը,
- տեքստը կատարված չէ արդյոք դիտավորյալ փոփոխված ձեռագրով և այլն:

Հարկ է նշել նաև, որ նպատակահարմար չէ նշանակել դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննություններ:

Վերը նշված փորձաքննությունների մյուս տեսակների առանձնահատկություններն արդեն պարզաբանվել են:

7. Պաշտոնեական անփութության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 315-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս, պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական բոլոր հանցագործություններին վերաբերող ընդհանուր մեթոդական ցուցումներին հետևելուց բացի, անհրաժեշտ է հաջորդաբար անդրադառնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- համապատասխան պաշտոնատար անձի հարցաքննությամբ պարզել, թե նա ինչպե՞ս է մեկնաբանում իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառները,

- նա օբյեկտիվորեն հնարավորություն ունեցե՞լ է պատշաճորեն կատարելու իր պարտականությունները,

- կոնկրետ ի՞նչ հանգամանքներ են ազդել նրա կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վրա,

- ինչպիսի՞ հետևանքներ են առաջացել նրա անփութ վարքագծի արդյունքում, և կարո՞ղ են դրանք գնահատվել որպես անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնասի պատճառում և այլն:

8. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 310-ով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելիս, պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական բոլոր հանցագործություններին վերաբերող ընդհանուր մեթոդական ցուցումներին հետևելուց բացի, անհրաժեշտ է հաջորդաբար անդրադառնալ հետևյալ ելակետային հանգամանքների պարզաբանմանը՝

- արարքը կատարելու պահին այն իրականացնողը հան-

դիսացե՞լ է պաշտոնատար անձ,

- որո՞նք են այն իրավական և փաստական հիմքերը, որ վկայում են տվյալ պաշտոնատար անձի կողմից օրենքով սահմանված արգելքին հակառակ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմադրելու հանգամանքի մասին,

- որո՞նք են այն իրավական և փաստական հիմքերը, որ վկայում են տվյալ պաշտոնատար անձի կողմից օրենքով սահմանված արգելքին հակառակ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպության կառավարմանն անձամբ կամ վստահված անձի միջոցով մասնակցելու մասին,

- ովքե՞ր են այն անձը կամ անձինք, որոնք հանդես են եկել որպես տվյալ պաշտոնյայի վստահված անձ,

- վստահված անձը կամ անձինք ինչպիսի՞ հարաբերությունների մեջ են գտնվում տվյալ պաշտոնատար անձի հետ,

- որո՞նք են այն իրավական և փաստական հիմքերը, որ հիմնավորում են քննարկվող հանցակազմում նշված արարքների կամ դրանցից որևէ մեկի կապակցվածությունը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տվյալ կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատության մեջ ներկայացված հարցադրումներն ու առաջարկները, կարծում ենք, էական նշանակություն կունենան Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում վարույթի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար:

Խնդրո առարկա ոլորտն այնպիսին է, որ պահանջում է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների քննության հարցում սեփական գիտելիքների, հմտությունների և ունակությունների հետևողական ու անընդմեջ խորացում և կատարելագործում: Առավել ևս, որ նշված գործերով հիմնականում հարցաքննվում են պաշտոնատար անձինք, որոնք հմտորեն տիրապետում են սեփական արարքների իրավաչափության պատրանք ստեղծելու, իրենց կողմից կատարված հանցանքները քողարկելու մարտավարական հնարքներին, ինչը ողջամտորեն պահանջում է դատախազաքննչական մարմինների ծառայողների առավել բարձր գիտագործնական պատրաստվածություն:

Բացի դրանից, քննարկվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանց կապակցությամբ արդեն իսկ առկա են ՀՀ բարձրագույն դատական ատյանի կայացրած մի շարք նախադեպային որոշումներ, որոնց պատշաճ գնահատումն ակնհայտորեն մի նոր իրավական հարթակի վրա կարող է բարձրացնել նախաքննության որակը: Այդ է պատճառը, որ տվյալ աշխատությունում փորձ է արվել համապատասխան հանցակազմերի առանձնահատկությունների գիտագործնական վերլուծության հետ մեկտեղ իրավակիրառողի և խնդրո առարկա ոլորտի իրավակարգավորումներով հետաքրքրվող այլ շահագրգիռ անձանց դատին ներկայացնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ինչը, կարծում ենք,

զգալիորեն կբարելավի տեսություն-պրակտիկա կապի ներդաշնակեցման գործընթացը:

Ուշագրավ է, որ աշխատության առանձին գլխի շրջանակներում քննարկվել են նաև պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Միանշանակ է, որ դրանց վերհանումն ու պարզաբանումը նույնպես չափազանց կարևոր նշանակություն կարող են ունենալ համապատասխան հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով որակյալ նախաքննություն իրականացնելու օրենսդրական պահանջն առարկայացնելու համար: Ընդ որում, այդ իմաստով աշխատությունում ինքնուրույն գնահատման առարկա է դարձել նաև կոնկրետ հարցերի այն օրինակելի շրջանակը, որը պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս ենթակա է բացահայտման ու պարզաբանման: Ակներև է, որ այդ հարցերի առաջարկվող օրինակելի ցանկն օգտակար ուղենիշ կարող է հանդիսանալ ոչ միայն դատախազաքննչական մարմինների ծառայողների, այլև դատավորների համար, ինչը կնպաստի իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը:

Բնականաբար, կատարված աշխատանքն ամենևին չի հավակնում տալ քննարկվող ոլորտում առկա խնդրահարույց բոլոր հարցերի պատասխանները: Բայցևայնպես, կարծում ենք, որ աշխատանքում արված տեսամեթոդական եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են էապես նպաստել քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործմանը, ինչպես նաև դառնալ անհրաժեշտ գիտագործական նյութ ոլորտը ուսումնասիրողների համար:

ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Ենգիբարյան Վ.Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Եր.: ԵՊՀ հրատ., 2014:
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
3. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012:
4. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2009: Հ. 1:
5. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2010: Հ. 2:
6. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2012: Հ. 3:
7. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2013: Հ. 4:
8. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: Եր., 2014: Հ. 5:
9. Արդի հայերենի բացատրական բառարան: Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն: Երևան, 1976, էջ 1513:
10. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն: Երևան, 1969-1980:
11. Алтухов С.А. Криминологическая характеристика и профилактика преступлений, совершаемых сотрудниками милиции. Автореф. дис... канд. юрид. наук. Ростов н/Д, 2000.
12. Борков В.Н. Получение взятки: вопросы квалификации: Диссерт... канд. юрид. наук. Омск, 2002.
13. Бриллиантов А.В. К вопросу о понятии должностного лица // Российский следователь, 2001, № 6.
14. Вейберт С.И. Взятничество: проблемы квалификации и назначения наказания: Автореф. дис... канд. юрид. наук. Челябинск, 2007.
15. Волженкин Б.В. Квалификация посредничества во взяточничестве // Правоведение, 1979, № 4.

16. Волженкин Б.В., Квашиш В.С., Цагилян С.Ш. Ответственность за взяточничество. Ереван, 1988.
17. Волженкин Б.В. Служебные преступления. М, 2000.
18. Галахова А.В. Непосредственный объект превышения власти или служебных полномочий // Сборник статей адъюнктов и соискателей. М., 1970.
19. Галахова А.В. О понятии представителя власти // Сборник статей адъюнктов и соискателей. М., 1967.
20. Гаухман Л.Д. Борьба с насильственными посягательствами. М., 1969.
21. Гаухман Л.Д. Законодательное обеспечение борьбы с коррупцией // Журнал российского права, 2000, № 12.
22. Гончарова Г. К вопросу о значении понятия существенного вреда по делам о преступлениях против интересов службы // Законность и правопорядок, № 3(19), 2011.
23. Горелик А.С. Конкуренция уголовно-правовых норм. Красноярск, 1998.
24. Грошев А.В. Функции правосознания в механизме уголовно-правового регулирования: Автореф. дис... д-ра юрид. наук. Екатеринбург, 1997.
25. Доиджашвили Д. Объективная сторона превышения власти или служебных полномочий // Советская юстиция, 1989, № 22.
26. Дорохов В.Я. Понятие документа в советском праве // Правоведение, 1982, № 2.
27. Егорова Н.А., Икрянникова А.С. Уголовная ответственность за посредничество во взяточничестве // Вестник Волгоградской академии МВД России, 2011, № 4(19).
28. Ефимов М.А. Вопросы квалификации должностных преступлений по УК Белорусской ССР. Минск, 1967.
29. Здравомыслов Б.В. Должностные преступления. Понятие и квалификация. М, 1975.
30. Иванова В.В. Преступное насилие: Учебное пособие для вузов. М, 2002.
31. Иванов В.Д. Уголовное законодательство Российской Федерации. Т. 3. Часть Особенная. Ростов, 1997.
32. Качмазов О.Х. Ответственность за взяточничество по российскому уголовному праву: Диссерт... канд. юрид. наук. М., 1999.

- 33.Квициния А.К. Проблемы ответственности за должностные преступления: Диссерт... д-ра юрид. наук. Сухуми, 1990.
- 34.Кирпичников А.И. Взятка и коррупция в России. СПб., 1997.
- 35.Клепицкий И.А., Резанов В.И. Получение взятки в уголовном праве России. М., 2001.
- 36.Комментарий к Уголовному кодексу Российской Федерации: В 2 т. Т. 2. / Под ред. О.Ф. Шишова. М., 1998.
- 37.Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. Х.Д. Аликперова, Э.Ф. Побегайло. М., 2001.
- 38.Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под ред. В.Д. Иванова. Ростов, 2002.
- 39.Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. В.М. Лебедева. М., 2004.
- 40.Коробейников Б., Орлов М. Ответственность за взяточничество // Советская юстиция, 1970, № 20.
- 41.Коррупционная преступность: криминологическая характеристика и научно-практический комментарий к законодательству о борьбе с коррупцией. Минск: Тесей, 2008.
- 42.Курс советского уголовного права / Под ред. А.А. Пионтковского, П.С. Ромашкина, В.М. Чхиквадзе. Т. VI. М., 1971.
- 43.Курс уголовного права. Особенная часть: Учебник для вузов / Под ред. Г.Н. Борзенкова и В.С. Комиссарова. Т. 5. М., 2001.
- 44.Лосев В. Существенный вред в составах преступлений против интересов службы // Законность и правопорядок, № 4(28), 2013.
- 45.Лысов М.Д. Ответственность должностных лиц по советскому уголовному праву. Казань, 1972.
- 46.Моисеенко М.И. Актуальные вопросы уголовной ответственности за посредничество во взяточничестве // Юридическая наука и правоохранительная практика, 2012, № 4(22).
- 47.Пинаев А. Ответственность за соучастие в даче взятки // Советская юстиция, 1972, № 21.

48. Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право. СПб.: «Юридический центр Пресс», 2008.

49. Сборник постановлений Пленума и определений коллегий Верховного Суда СССР по уголовным делам 1959-1971 гг. / Под ред. Г.З. Анашкина. М., 1973.

50. Светлов А.Я. Борьба с должностными злоупотреблениями. Киев, 1970.

51. Сердюк Л.В. Насилие: криминологическое и уголовно-правовое исследование. М., 2002.

52. Сичинава И.Р. Причинение вреда при задержании лица, совершившего преступление и превышение должностных полномочий: проблемы разграничения // Известия вузов. Северо-кавказский регион / Общественные науки, 2003, № 12.

53. Слав С.П. Ответственность за должностные злоупотребления (по материалам Приднестровья): Автореф. дис... канд. юрид. наук. М., 2004.

54. Смоленцев Е. Судебная практика по делам о взяточничестве // Социалистическая законность, 1978, № 6.

55. Снежко А.С. Превышение должностных полномочий: Дисерт... канд. юрид. наук. Краснодар, 2004.

56. Стренин А. Проблемы ответственности за умышленное неисполнение должностным лицом своих служебных полномочий // Уголовное право, 2003, № 1.

57. Толеубекова Б.Х. Компьютерная преступность: уголовно-правовые и процессуальные аспекты. Караганда, 1991.

58. Уголовное право. Особенная часть: Учебник для вузов / Отв. ред. И.Я. Козаченко, З.А. Незнамова, Г.П. Новоселов. М, 1997.

59. Хилjuta В. Существенный вред в теории и практике должностного злоупотребления (по состоянию на 22.08.2011 г.). Минск: ООО «ЮрСпектр», 2013.

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
СПЕЦИАЛЬНАЯ СЛЕДСТВЕННАЯ СЛУЖБА

ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ И МЕТОДИКИ
РАССЛЕДОВАНИЯ ДОЛЖНОСТНЫХ ПРЕСТУПЛЕНИЙ
ПРОТИВ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ
(НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ КОММЕНТАРИЙ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂԴԱԾ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Հանձնվել է տպագրության 18.05.2015:
Տառատեսակը՝ Arial Unicod:
Չափսը՝ 60x84^{1/16}: Ծավալը՝ 8 մամուլ: